Մասիս Շաբաթաթերթ

40ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 29 (1979) ՇԱԲԱԹ, ՕԳՈՍՏՈՍ 1, 2020
VOLUME 40, NO. 29 (1979) SATURDAY AUGUST 1, 2020

Պաշտօնաթերթ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

## Թրամփի Վերընտրութիւնը Մեծ Հարցականի Տակ

Միացեալ Նահանգներու նախագահական ընտրութիւններուն մնացած է մօտ երեք ամիս: Նոյեմբեր 3-ին կայանալիք ընտրութիւնները ճակատագրական են Ամերիկայի ժողովուրդին համար, որ վերջին չորս տարիներու ընթացքին ականատես եղաւ ու կրեց հետեւանքները անհաւասարակշիռ առաջնորդի մը քաոսային կառավարման:

Վերջին ամիսներուն հրապարակուած հանրային կարծիքի բոլոր հարցախոյզերը, առանց բացառութեան ցոյց կու տան Դեմոկրատական կուսակցութեան թեկնածու, նախկին փոխ-նախագահ Ճօ Պայտընի ունեցած առաւելութիւնը՝ նախագահ Տանըլտ Թրամփի նկատմամբ:

Այս օրերուն հրապարկուող հարցախոյզերուն համաձայն, Ճօ Պայտըն ունի 8-էն մինչեւ 13 տոկոսի առաւելութիւն, իսկ անոնց միջինը, կը կազմէ՝ 9 տոկոս: Նախագահ Թրամփ եւ իր ընտրարշաւի պատասխանատուները կը մերժեն այս թիւերու իրաւացիութիւնը ու կը բողոքեն, որ այդ թիւերը կեղծ են ու կ՛օգտագործուին իրենց համակիրները բարոյազրկելու եւ քուէատուփերէն հեռու պահելու համար: Անոնք կը յիշեցնեն որ, նոյն այդ հարցախոյզերը կանխատեսած էին Թրամփի պարտութիւնը 2016-ի ընտրութիւններուն եւս, սակայն բոլորը տեսան թէ վերջաւորութեան ինչ եղաւ:

Միւս կողմէ սակայն, վերլուծաբաններն ու հարցախոյզերու մասնագէտները կը մատնանշեն որ, 2016-ի կանխատեսումները մեծ մասամբ ճիշդ դուրս եկան, ի բացառեալ երեք նահանգներու՝ Փենսիլվանիայի, Միշիկընի եւ Ուիսքանսընի մէջ, որոնք պատմականօրէն կը քուէարկէին Դեմոկրատ թեկնածուներուն, սակայն չկողմնորոշուած քուէարկողներու մեծ մասը վերջին օրերուն որոշեցին իրենց ձայնը տալ Թրամփին, ու ան շատ չնչին առաւելութեամբ տիրացաւ այդ երեք նահանգներու ընտրական ձայներուն՝ այդպիսով դառնալով նախագահ:

Ինչ կը վերաբերի ընդհանուր Ամերիկայի մէջ ժողովրդային ձայներուն, մասնագէտները դիտել կու տան որ, նախորդ ընտրութիւններէն անմիջապէս առաջ Հիլլարի Քլինթընի ունեցած առաւելութիւնը 3.3 տոկոս էր եւ ան յաղթեց 2.1 տոկոսով: Սակայն, ինչպէս ծանօթ է, նախագահները կ՛ընտրուին ոչ թէ ժողովրդային ձայներով, այլ նահանգներու ընտրական ձայնե-

Շար.ը էջ 5

## Փաշինեան Կը Բացառէ Ալիեւի Հետ Հանդիպումը Քանի Դեռ Ատրպէյճան Կացութիւնը Կը Պահէ Լարուած

*Հայաստանի վարչապետ՝ Նիկոլ Փաշինեան բացառած է Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ հանդիպման հնարաւորութիւնը, քանի դեռ հայ-ատրպէյճանական լարուածութիւնը չէ հանդուցալուծուած:*

*«Մեզի համար անընդունելի են սպառնալիքներով Հայաստանը բանակցային գործընթացի մէջ ներքաշելու փորձերը», - ռուսական հեռատեսիլի ալիքին տուած հարցազրոյցին ընթացքին ըսած է Փաշինեան, ընդգծելով, թող որեւէ մէկը պատրանքներ չունենայ, թէ կրնայ Հայաստանի հետ խօսիլ սպառնալիքներու լեզուով:*

*Պատասխանելով հարցին, թէ որու ձեռնտու էր վերջին լարուածութիւնը, Փաշինեան յիշեցուցած է, թէ Ատրպէյճանի նախագահը վաղուց կը յայտարարէր խնդիրը ռազմական ճանապարհով կարգաւորելու մասին եւ վերջերս ալ սպառնացած էր ընդհանրապէս դուրս ելլելու բանակցային գործընթացէն:*



Վարչապետ Փաշինեան ռուսական հեռատեսիլի կայանէն ունեցած հարցազրոյցի ընթացքին

*«Կայ նաեւ մէկ այլ նրբութիւն՝ ինչո՞ւ են ատրպէյճանցիները յարձակում ձեռնարկել ոչ թէ Ղարաբաղի, այլ՝ Հայաստանի պետական սահմանի ուղղութեամբ: Այդ միջադէպից մէկ շաբաթ առաջ յայտարարուեց, թէ հիմա Ատրպէյճանը չի կարող յարձակուել Ղարաբաղի ուղղութեամբ, քանի որ տեղի զինուած ուժերը տեղադրել են տեսադիտարկման սարքեր, եւ Ատրպէյճանի զօրքի իւրաքանչիւր տեղաշարժ տեսանելի է դառնում Ղարաբաղի զինուած ուժերի համար: Բացի այդ, շփման գծի մերձակայքում բազմաթիւ ատրպէյճանական բնակավայրեր կան, եւ նրանց համար դժուար է յարձակում իրականացնել Ղարաբաղի ուղղութեամբ: Ուստի, նրանք յարձակուել են այնտեղ, որտեղ սահմանը այդչափ համալրուած չէ տեսադիտարկման համակարգերով, եւ ընդ որում, այդ ուղղութեամբ կայ միայն մէկ ատրպէյճանական գիւղ, ինչը եւս շատ յատկանշական փաստ է: Հայկական գիւղերը, մինչդեռ, շատ-շատ են», - ըսած է Հայաստանի վարչապետը:*

*Փաշինեան նշած է, որ քանի մը անգամ, հրապարակային եւ աշխատանքային միջավայրին մէջ, խորհուրդ տուած է Իլհամ Ալիեւին Հայաստանի հետ սպառնալիքներու լեզուով չխօսիլ, քանի որ «դա որեւէ արդիւնքի չի բերի»: Խօսելով ղարաբաղեան խնդրի կարգաւորման մասին՝ Հայաստանի վար-*

Շար.ը էջ 5

## Փութին Եւ Էրտողան Քննարկած Են Հայ-Ատրպէյճանական Լարուածութիւնը

*Ռուսաստանի եւ Թուրքիոյ նախագահները հեռախօսազրոյց ունեցած են, որու ընթացքին քննարկած են իրավիճակի սրացումը հայ-ատրպէյճանական պետական սահմանին վրայ: Զրոյցը կայացած է թրքական կողմի նախաձեռնութեամբ, հաղորդած է Քրեմլինը, աւելցնելով, թէ Վլատիմիր Փութինը ընդգծած է լարուածութեան սրացման նպաստող որեւէ գործողութիւն կանխելու կարեւորութիւնը:*

*Հեռախօսազրոյցէն առաջ հաղորդուած էր, որ թրքական բանակը կը պատրաստուի քանի մը օրէն Ատրպէյճանի հետ համատեղ լայնածաւալ զօրավարժութիւններ կատարել Հայաստանի սահմանէն քիչ հեռու՝ Նախիջեւանի տարածքին մէջ: «Վարժանքներուն մէջ կը ներգրաւուին հրետանիի կայանքներ, ականանետեր, մարտական օդային եւ հակաօդային պաշտպանութեան համակարգեր», - նշած էր ԹԱՍՍ գործակալութիւնը:*

*«Տեղի ունեցած է մտքերու փոխանակում Անդրկովկասին մէջ տիրող իրավիճակի շուրջ հայ-ատրպէյճանական սահմանին իրադրութեան սրման համաթեքսթով: Երկու կողմն ալ նշած են, որ շահագրգռուած են հակամարտութիւնը կարգաւորել բացառապէս խաղաղ միջոցներով եւ բանակցութիւններով», - յայտարարած է Ռուսաստանի Նախագահական Նստավայրը: Ըստ Քրեմլինի, կողմերը նաեւ պատրաստակամութիւն յայտնած են համակարգելու ջանքերը՝ տարածաշրջանին մէջ իրավիճակը կայունացնելու նպատակով:*

*Մոսկուան, ըստ պաշտօնական հաղորդագրութիւններուն, վերջին մէկ շաբթուայ ընթացքին արդէն երկրորդ անգամն է որ հրապարակաւ կը յորդորէ Անքարան նպաստել հայ-ատրպէյճանական լարուածութեան թուլացման: Քանի մը օր առաջ Ռուսաստանի արտաքին գործոց նախարարը այս թեման բարձրացուցած էր թուրք գործընկերոջ հետ հեռախօսազրոյցի ժամանակ: «Մոսկուան ընդգծած է հայ-ատրպէյճանական հակամարտութեան հարցին հաւասարակշիռ մօտեցում որդեգրելու եւ կողմերուն վրայ զսպող ազդեցութիւն թողնելու կարեւորութիւնը», - հաղորդած էր Ռուսաստանի արտաքին քաղաքական գերատեսչութիւնը:*

## ԱՄՆ Գոնկրէսը 1.4 Միլիոն Տոլարի Յատկացում Կատարեց Արցախի Ականազերծման Ծրագիրին

*Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տունը վաւերացուց Արցախի ականազերծման ծրագիրը:*

*Հայաստանի Դեսպանատան եւ Հայկական կազմակերպութիւններու ջանքերուն շնորհիւ կարելի եղաւ վերահաստատել Արցախի ականազերծման աշխատանքներուն համար տրուող օժանդակութիւնը:*

*Ծրագիրը Ծերակոյտին կողմէ եւս հաստատուելու հաւանականութիւնը մեծ է:*

*Նախագիծը կը նախատեսէ 1,4 միլիոն տոլարի աջակցութիւն տրամադրել Արցախին՝ շարունակելու HALO Trust-ի կողմէ կեանքեր փրկող ականազերծման աշխատանքները:*

*2021-ի արտասահմանեան օգնութեան օրինագիծի ոչ մէկ փոփոխութիւն այնքան աջակից չէ ունեցած, որքան Արցախին օգնութեան տրամադրման հարցը:*

*HALO Trust-ը Արցախի մէջ մարդասիրական ականազերծումով կը զբաղի 2001-էն ի վեր:*

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Հայաստանը Շատ Ուժեղ Է Հարուածել. Առաւելութիւնը Պէտք Է Իրացնել

ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ

*Ատրպէյճանցիներն աշխարհի տարբեր երկրներում թիրախաւորում են հայերին, հայկական պատկանելութեան հաստատութիւնները: Իրավիճակն ամէնից լարուածը Ռուսաստանում է, բայց յարձակումներն ու վանդալիզմի ակտերը առկայ են նաեւ արեւմտեան երկրներում: Որքա՞ն է շարունակուելու այդ ամէնը: Պաշտօնական Երեւանը, տեղի համայնքային կառոյցները հայերին կոչ են անում չտրուել սադրանքի: Բայց կասկածից վեր է, որ շարունակուելու դէպքում անտրամաբանական է լինելու ինքնակազմակերպուելու եւ դիմադրութեան կոչի բացակայութիւնը:*

*«Պուրճհամուտեան» սցենարը Ռուսաստանի, Եւրոպայի եւ ԱՄՆ տարբեր քաղաքներում թերեւս ամենամղձաւանջայինն է, որ կարելի է պատկերացնել ու երեւակայել: Թոյլ կը տա՞յ որեւէ երկիր ատրպէյճանցիներին իրավիճակը հասցնել այդտեղ եւ ստիպել, որպէսզի հայերը անցնեն կազմակերպուած ինքնապաշտպանութեան:*

*Ինչի՞ վրայ է Ալիեւի յոյսը կամ հաշուարկը, եթէ իհարկէ այդ ամէնը նրանն է, ոչ թէ նրա անունից: Ալիեւն իր կորսուող անձնական իշխանութեան վերջին շանտաժին է դիմում, այս անգամ դուրս գալով հայ-ատրպէյճանական սահմանից, որովհետեւ այդտեղ շանտաժը այլեւս շատ թանկ է նստում նրա վրայ: Ալիեւը փորձում է «համաշխարհային քաոսը» դարձնել իր ճակատագրի համար ուժային կեդրոնների հետ առեւտրի առարկա՞յ, թէ՞ Ալիեւի ճակատագրի վրայ այլեւս առեւտուր է անում Թուրքիան, համաշխարհային շանտաժի մղելով նրան:*

*Մի բան կասկածից վեր է, որ Ատրպէյճանը Տաւուշում Հայաստանից ստացել է չափազանց ուժեղ հարուած, եթէ ստիպուած է եղել փոխել սլաքի ուղղութիւնը: Ներկայում պարզ է, որ Հայաստանի խնդիրը Ատրպէյճանի դէպի աշխարհ բաց թողած բումերանգը նրան վերադարձնելն է, ի հարկէ առաւելապէս քաղաքական-դիւանագիտական առումով, առաւելագոյնս ձեռնպահ մնալով որեւէ երկրում ազգամիջեան բախման մէջ ներքաշուելուց:*

*Միաժամանակ, հայկական սփիւռքի համայնքներին թերեւս անհրաժեշտ է սեփական ներուժի, ժամանակի, մտքի ռացիոնալ ծախսում: Դրանք պէտք չէ վատնել ատրպէյճանական դիւանագիտական առաքելութիւնների դէմ հաւաքներ կամ բողոքի ակցիա անելով: Այդ ռեսուրսը կարող է եւ պէտք է շատ աւելի հանգիստ եւ արդիւնաւէտ աշխատանք ծաւալի արտաքին գործընկեր երկրների քաղաքական բեմերում եւ յետնաբեմերում, ծաւալի թէ քաղաքական, թէ քաղաքակրթական արդիւնաւէտ երկխօսութիւն, ինչի պաշարը հայութիւնն ունի, եւ դա Ատրպէյճանի նկատմամբ անբեկանելի առաւելութիւն է, որ պէտք է իրացնել:*

*«ԼՐԱԳԻՐ»*

# Էյֆորիայից Անդին

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍԵԱՆ

*Տաւուշեան սրացումը Պաքուի սպոնտան արձագա՞նքն էր փոփոխուող աշխարհաքաղաքականութեանը, թէ՞ աւելի լայն համատեքստ ունի: Մեր փորձագիտական հանրութիւնը, խոստովանենք, բաւական հեռու է գոնէ մօտաւոր ճշգրտութեամբ կանխատեսումներ անելուց: Մամուլն օգնութեան է կանչում հիմնականում ռուս վերլուծաբանների, որոնց ծանօթ ենք արդէն աւելի քան քառորդ դար: Նրանք նոր ոչինչ չեն ասում, բացի՝ որ լայնածաւալ պատերազմն Ռուսաստանին ձեռնտու չէ, եւ Մոսկուան փորձում է կողմերին վերադարձնել բանակցութիւններ: Խնդիրը հենց դա է՝ ի՞նչ հիմքով բանակցութիւնների: Մոսկուան հասկացնում է՝ նախկինում եղել են մշակումներ: Խօսքը «մատրիտեան սկզբունքների» կամ դրանց մոդիֆիկացուած տարբերակներից մէկի մասին է: Հայրենական մամուլին հետեւելով՝ ընդհանուր տպաւորութիւն է, որ հայկական կողմի համար դա այլեւս անցած-փակուած փուլ է:*

*Տաւուշեան ռազմական յաջողութիւնից էյֆորիան ակնյայտ է: Եւ նոյնիսկ շատ զգուշաւոր փորձագէտներն են դնում նոր իրավիճակն արտաքին քաղաքական ուղղութեամբ կապիտալիզացնելու խնդիր: Այստեղ, գուցէ, բացառելի չէ ներքաղաքական ենթատեքստը: Իրավիճակի նման գնահատական կար նաեւ ապրիլեան պատերազմից յետոյ՝ «բանակը լուծեց իր առջեւ դրուած խնդիրները, մնում է, որ դիւանագէտներն անեն իրենց գործը»:*

*Գումարուել է իշխանութեան լեգիտիմութեան կռուանը: Սա, մեղմ ասած, վիճելի է: 2016թ. Սերժ Սարգսեանի լեգիտիմութիւնը ոչ ոք կասկածի տակ չէր դնում, եւ նա բաւական լուրջ քայլեր ձեռնարկեց: Այլ բան է, որ Վիեննայի պայմանաւորուածութիւնները չաշխատեցին, բայց դա իր պատճառներն ունի, որ Հայաստանից դուրս են: Այսօր նկատելի են զարգացումներ, որ չեն նպաստում Ատրպէյճանի զսպանը: ԱՄՆ Կոնգրեսում քուէարկութեան է դրւում բանաձեւ, որ Լեռնային Ղարաբաղի շուրջ տարածքները ճանաչում է օկուպացուած: Ուաշինկթոնը եկող տարի աւելի քան 100 միլիոն տոլար կը տրամադրի Ատրպէյճանին՝ «պաշտպանական ծախսերի» համար: Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ է, ակնյայտօրէն սրում է իրավիճակը, բայց Պրիւսելից որեւէ զսպող յայտարարութիւն չի հնչում:*

*Աւելին, նախապատրաստւում են թուրք-ատրպէյճանական համատեղ զօրավարժութիւններ՝ ներառեալ Նախիջեւանում: Աւանդաբար հաւասարակշռող դերակատարութիւն ցուցաբերած Իրանը չի արձագանքում, թէեւ ինքն էլ Նախիջեւանի հետ կապուած մտահոգութիւններ ունի: Անվտանգային միջավայրի կայունացման յայտարարութիւններ անում է միայն Ռուսաստանը: Բայց ռուս փորձագիտական հանրութեան երկփեղկուածութիւնից դատելով՝ Մոսկ-*

Շար.ը էջ 6

# Ինչո՞ւ Է Կառավարութիւնը «Ականապատում» ՍԴ-ն

ՀԱՄԼԵՏ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

*Հասարակական-քաղաքական շրջանակներում քննարկման թեժ առարկայ է դարձել կառավարութեան կողմից Վահրամ Աւետիսեանին Սահմանադրական դատարանի դատաւորի թեկնածու առաջադրումը: Վերջինս 2008-2016 թթ. ՀՀ վճռաբեկ դատարանի քրէական պալատի նախագահ Դաւիթ Աւետիսեանի որդին է: Այս Դաւիթ Աւետիսեանը եղել է մերժուած քրէաօլիգարխիկ ռեժիմի իրաւական անօրինութիւնները կեանքի կոչող, դակող սիւներից մէկը, 2008 թուականի Մարտի 1-ից յետոյ մի քանի տասնեակ քաղբանտարկեալների հանդէպ քրէական ու քաղաքական հալածանքները օրինականացնողը: Մի խօսքով, դատական համակարգը օրուայ իշխանութեանը ծառայեցնելու ճարտարապետներից մէկը ու այս ոլորտում կոռուպցիայի, այդ թւում՝ քաղաքական կոռուպցիայի համակարգողը:*

*Ինչքան էլ փորձենք մտածել ու ելնել այն կանխավարկածից, թէ ՍԴ դատավորի կառավարական թեկնածու Վահրամ Աւետիսեանը որեւէ առնչութիւն չունի նշուածի հետ, որ զաւակները պատասխանատու չեն հայրերի արարքների համար, սակայն սա այդ դէպքը չէ՝ հաշուի առնելով Սահմանադրական դատարանի դատաւորի գործունէութեան բնոյթն ու առանձնայատուկ դերը:*

*Առաջիկայում հնարաւոր են Սահմանադրական դատարանում Մարտի 1-ի հետ կապուած մի շարք գործերի քննութիւններ ու վերաքննութիւններ (նաեւ այլ գործերի), որոնց ժամանակ, բնականաբար, շօշափուելու է նաեւ Դաւիթ Աւետիսեանի անունը՝ որպէս մի շարք անօրինական որոշումների հեղինակ: Հասկանալի է, որ Վահրամ Աւետիսեանը՝ որպէս ՍԴ պոտենցիալ դատաւոր, որեւէ կերպ չի կարող օբիեկտիւօրէն մօտենալ այդ քննութիւններին եւ անգամ հարիւր տոկոսանոց ապացոյցների ու փաստերի առկայութեան դէպքում հաստատել, որ իր հայրը անօրինականութիւններ է գործել, այսինքն՝ յանցագործութիւն կատարել:*

*Շատ կարեւոր ցուցիչ է, թէ այս օրերին ընթացող քննարկումներում հասարակական-քաղաքական որ շրջանակները ինչպիսի դիրքորոշում են որդեգրել Վահրամ Աւետիսեանի առաջադրման շուրջ:*

*Յեղափոխութեանը կողմնակից, դատաիրաւական համարգում բարեփոխումներ ցանկացող, յատկապէս Մարտի 1-ի լիարժէք բացայայտմամբ շահագրգիռ ուժերը դէմ են արտայայտւում Վահրամ Աւետիսեանի առաջադրմանը: Դէմ են արտայայտւում հիմնականում վերը նշուած պատճառաբանութեամբ:*

*Սրան հակառակ, այդ առաջադրմամբ ոգեւորուել են ռոբասերժական ռեժիմի ներկայացուցիչներն ու դրան սպասարկող շրջանակները: Գիտէ՞ք, թէ ինչու են ոգեւորուել: Ոչ թէ նրա համար, որ մտածում են անկախ դատական համակարգի մասին, այլ այդ առաջադրմամբ իրենց համար պոտենցիալ իւրային մարդ են տեսել, որը ՍԴ-ում գտնուող միւս դիրքապահների հետ միասին կարող է սպասարկել իրենց շահերը:*

*Կառավարութիւնը, կոնկրետ վարչապետ Նիկոլ Փաշինեանն առաջադրելով Վահրամ Աւետիսեանի թեկնածութիւնը՝ ի՞նչ ուղերձ են յղում հանրութեանը: Շաբաթներ առաջ Փաշինեանը բողոքում էր, որ պետական համակարգում, յատկապէս դատաիրաւական ոլորտում մեծ թիւ են կազմում Սերժի մնացորդները, որոնք ընդդիմանում են բարեփոխումներին, սաբոտաժ անում, սպասարկում նախկիններին:*

*Հիմա, եթէ Վահրամ Աւետիսեանը դառնայ Սահմանադրական դատարանի դատաւոր եւ ՍԴ-ում ինչ-որ պահի քննութեան առարկայ դառնայ ժամանակին իր հօր ձեռամբ դակուած որեւէ գործի օրինականութեան հարցը, եւ նա օբիեկտիւօրէն չկարողանայ անաչառ գտնուել ու բնականօրէն սպասարկի իր հօր շահերը, նա կը լինի՞ Սերժի հերթական մնացորդը, որը կառավարութեան բարձր հովանու ներքոյ բազմել է բարձրագոյն դատարանի դատաւորի բարձր աթոռին: Յետոյ նոյն Փաշինեանը, կառավարութիւնը էլի սկսելո՞ւ են բողոքել մերժուած ռեժիմին ու վերջինիս ներկայացուցիչներին սպասարկողների մասին:*

*Սա է՞ կառավարութեան ուղերձը հանրութեանը:*

*«ՉՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»*

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
*http://www.massisweekly.com*

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

## Կը Պահանջեն Ետ Կանչել Վահրամ Աւետիսեանի Առաջադրումը Որպէս ՍԴ Դատաւորի Թեկնածու

*Շարք մը իրաւապաշտպաններ, փաստաբաններ եւ յատկապէս Մարտ 1-ի արիւնալի դէպքերէն յետոյ, քաղաքական դրդապատճառներով ձերբակալուած քանի մը տասնեակ մարդիկ դիմած են կառավարութեան, յորդորելով ետ կանչել Վահրամ Աւետիսեանի առաջադրումը որպէս Սահմանադրական դատարանի (ՍԴ) դատաւորի թեկնածու, դիմած են նաեւ Ազգային Ժողովի պատգամաւորներուն, այս հարցով դրսեւորելու առաւելագոյն բծախնդրութիւն եւ դէմ քուէարկելու:*

*Գրութեան տակ ստորագրած քանի մը տասնեակ մարդիկ պնդած են, որ Սահմանադրական դատարանի բարեփոխումները պէտք է ուղղուած ըլլան բարձր դատարանին մէջ անկախ դատաւոր ունենալուն, մինչդեռ Վահրամ Աւետիսեան, ըստ իրենց, չի պատասխաներ այդ յատկանիշներուն:*

*«Իմ անձնական շահը տուեալ դէպքում՝ որպէսզի Սահմանադրական դատարանի դատաւոր ընտրուի անկախ մարդ», - կ՚ըսաէ 2008-ի մարտեան իրադարձութիւններէն ետք մէկուկէս տարի բանտ անցուցած ընդդիմադիր գործիչ՝ Գրիգոր Ոսկերչեան, որ նաեւ մէկն է գրութեան տակ ստորագրողներէն:*

*Վահրամ Աւետիսեանի հայրը՝ Դաւիթ Աւետիսեան 2008-2016 թուականներուն պաշտօնավարած է Վճռաբեկ դատարանի քրէական պալատի նախագահի պաշտօնին:*

*«Մարտի մէկեան ոճրագործութեան եւ դրա հետ կապուած հարիւրաւոր մարդկանց ապօրինի հետապնդումների հարցերը արդէն իսկ դարձել են Հայաստանի դատական ատեանների, ընդհուպ՝ Սահմանադրական դատարանի քննութեան առարկայ: Աներկբայ է, որ քննութեան արդիւնքում, ի թիւս այլոց, պատասխանատուութեան պէտք է ենթարկուի նաեւ Վճռաբեկ դատարանի քրէական պալատի երբեմնի նախագահ Դաւիթ Աւետիսեանը: Ուստի, անթոյլատրելի է, որ վերջինիս հետ փոխկապակցուած անձ եւ մերձաւոր ազգական հանդիսացող Վահրամ Աւետիսեանը որեւէ կարգավիճակով ուղղակի կամ միջնորդաւորուած մասնակցութիւն ունենայ այդ գործերի քննութեանը», - ըսուած է նամակին մէջ:*

*«Որդիները չպէտք է պատասխանեն հայրերի արարքների համար», - շարունակած է Ոսկերչեան, սակայն ընդգծելով՝ այստեղ կայ մեծ վերապահում. «Նա նշանակուում է Սահմանադրական դատարանի դատաւոր եւ նա անպայման առնչուելու է իր հօր հետ կապուած ինչ-ինչ հարցերի»:*



ՍԴ թեկնածու ներկայացուած՝ Վահրամ Աւետիսեան

*Մարտի 1-ի արիւնալի իրադարձութիւններու 10 զոհերէն Գոռ Քոլեանի հայրը՝ Սարգիս Քոլեան կը պահանջէ ՍԴ դատաւորի թեկնածուէն յստակ դիրքորոշում 12 տարի առաջ տեղի ունեցածին եւ անոր հետեւանքներուն վերաբերեալ:*

*«Թող դատաւոր լինի մէկը, որի պատմութիւնը մաքուր է, բայց մենք գիտենք իրանց ընտանիքի պատմութիւնը՝ եղել են զուտ հանրապետական, եւ իրենց ձեռքերով ինչեր է կատարուել այս տասնեակ տարիների ընթացքում», - ըսած Սարգիս Քոլեան:*

*Կառավարութեան առաջարկած թեկնածու Վահրամ Աւետիսեան օրեր առաջ կառավարութեան նիստին ժամանակ ըսաւ, որ խորհրդարանի կողմէն ընտրուելու պարագային առաւելագոյն չափով պիտի ապահովէ բարձր դատարանի դատաւորի անկախութիւնը, ապաքաղաքականացուածութիւնն ու անաչառութիւնը: Իր թեկնածութեան դէմ արտայայտուողները, մասնաւորապէս յայտարարութեան հեղինակ, իրաւապաշտպան՝ Իզապելլա Սարգսեան, հակադարձած է, թէ անաչառութիւնը նուազագոյն պահանջ է, իսկ ո՞րն է Աւետիսեանի արժէքային համակարգն ու սկզբունքները:*

## ԿԳՄՍ Նախարարը Անդրադարձաւ Դասագրքերու Շուրջ Ծաւալող Խօսակցութիւններուն

*ՀՀ կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ սփորթի նախարար՝ Արայիկ Յարութիւնեան կեղծիք համարեց «Հայ գրականութիւն» առարկայի շուրջ ծաւալող բոլոր խօսակցութիւնները:*

*«Արմէնփրես»-ի հաղորդումով՝ նման կարծիք ան յայտնած է Հանրային «Հարցազրոյց Պետրոս Ղազարեանի հետ» հաղորդաշարի ընթացքին:*

*«Մեզ մեծ մեղք են վերագրում ասում են, թէ «Հայ գրականութիւնից» հանում էք «հայ» բառը. չեմ կարողանում հասկանալ, թէ այսչափ մեծ կեղծիքը որտեղից է գալիս: Ընդ որում, այս սուտն ու կեղծիքը հնչում է կարեւոր բուհական ու հետազօտական կեդրոններից, երբ դու նոյնիսկ հերքում ես, թէ այդպիսի բան չկայ, նրանք շարունակում են դա անել: Դաւիթ Գասպարեանը, ով ամենաշատն է քննադատում, ժամանակին 7-րդ դասարանի գրականութեան դասագիրք է հրապարակել, որի վերնագրում հայ բառը չկայ, նոյնը՝ 8-րդ եւ 9-րդ դասարանների դասագրքերում»,- ըսաւ ԿԳՄՍ նախարարը:*

*Հարցին, արդեօք մեր մեծերը՝ Նարեկացին, Քուչակը, պիտի ըլլան դասագրքերուն մէջ, թէ ոչ, Արայիկ Յարութիւնեան պատասխանեց, որ բոլորն ալ պիտի ըլլան:*

*«Մենք հերքել ենք այդ տեղեկութիւնները, թէ նրանք դուրս են գալիս դասագրքերից, բայց կեղծիքները մամուլում շարունակուում են: Ես մեր հասարակութեան եւ հանրութեանն ուզում եմ կոչ անել՝ չտրուել սադրանքներին, քանի որ այդպիսի բան չկայ: Խօսում են, թէ հայրենասիրութիւն բառը չկայ չափորոշիչներում: Մենք թոյլ չենք տալու, որ կեղծ հայրենասիրութեամբ այդպիսի բաներ ասեն, պէտք է այս եզրոյթը քիչ կիրառել, որ չարժեզրկուի, լաւ հայրենասիրութիւնը՝ լաւ քաղաքացի դաստիարակելն է, իր իրաւունքներն ու պարտականութիւններն իմացող քաղաքացի դաստիարակելն է: Եւ այդ հայերնասիրութիւնը աւելի մեծ տեղ կ՚ունենայ մեր հասարակութեան մէջ, քան այն կեղծ հայրենասիրութիւնը, որ դաւանել է*



ՀՀ կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ սփորթի նախարար՝ Արայիկ Յարութիւնեան

*մարդկանց այդ խումբը»,- նշեց նախարարը:*

*Անդրադառնալով դասագրքերով ժամանակակից գրողներուն ներկայացնելու թեմային՝ Արայիկ Յարութիւնեան ընդգծեց, որ սարսափելի է այն ոճը, որմով կը քննարկուի այդ հարցը:*

*«30-ական թուականներին մարդիկ են եղել, ովքեր իրենց ժամանակակից գրողներին են քննադատել, ինչի արդիւնքում էլ, օրինակ, Զարենցն ու Բակունցը գնդակահարուել են»,- ըսաւ նախարարը:*

*Եզրափակելով իր խօսքը՝ Յարութիւնեան շեշտեց, որ հայկականութեան դէմ ոչ մէկ դաւադրութիւն կայ, այլ լրիւ հակառակն է:*

*«Մենք չափորոշիչներով ներմուծում ենք նոր առարկաներ, օրինակ՝ «Ես եւ իմ հայրենիքը» առարկան, որտեղ հասարակագիտական գիտելիքը ամբողջութեամբ անցնում է մեր դիւցազներգութիւնների, մեր հերոսների, մեզ համար շատ թանկ հերոսների կեանքով, նիւթերով: Մենք այս ամէնը ցոյց ենք տալիս մեր հասարակութեան անցած ճանապարհով, նրա լաւ եւ վատ օրինակներով, ապագայի համար էլ նախագծում ենք եւ ներկայացնելու ենք, թէ որ որակներն են մեզ անհրաժեշտ լինելու՝ համակեցութեան կանոններով ապրող հասարակութիւն ունենալու համար»,- ընդգծեց ԿԳՄՍ նախարար Արայիկ Յարութիւնեան:*

## Հինգ Օրուայ Մէջ Զինծառայողներու Հիմնադրամին Փոխանցուած է Աւելի Քան 160 Մլն Դրամ

*Հինգ օրուայ մէջ Զինծառայողներու ապահովագրութեան հիմնադրամին փոխանցուած է 160 միլիոն 728 հազար դրամ: Յուլիս 12-ին Տաւուշի սահմանին վրայ սկսած մարտական գործողութիւններէն յետոյ, բանակին աջակցիլ ցանկացողներու պակաս չկար: Ֆէյսպուքեան գրառումով վարչապետ Նիկոլ Փաշինեան բոլորին յորդորեց Զինծառայողներու ապահովագրութեան հիմնադրամին փոխանցում ընելու:*

*Հիմնադրամի մուտքերը աշխուժացան, վարչապետի հաշուարկով՝ սկիզբը՝ երեք րոպէ անգամ մը, ապա՝ 40 երկվայրկեան մէկ հիմնադրամի հաշիւը կը համալրուէր: «Սա ոչ միայն նիւթական, այլեւ շատ աւելի մեծ բարոյական աջակցութիւն է մեր բանակին, մեր պետութեանը», - նշած է վարչապետը:*

*Վերջին հինգ օրուայ մէջ հիմնադրամի հաշւոյն գումար մուտքագրած են շուրջ 46 երկիրներ ապրող հայեր, բայց աւելի քան 119 միլիոն դրամի փոխանցումով առաջին տեղը կը գրաւեն հայաստանցիները, որոնց գումարի չափը կը տարբերի հազար դրամէն մինչեւ քանի մը տասնեակ միլիոն դրամներ: Փոխանցուած գումարի չափով երկրորդ տեղը կը գրաւեն ամերիկահայերը, 21 միլիոնէն աւելի, ապա Գանատան ու Ռուսաստանը՝ արդէն թուային մեծ տարբերութեամբ՝ 3,5 եւ 2,5 միլիոն: Ի դէպ, Թուրքիայէն ալ փոխանցում կայ՝ 3400 դրամ:*

## Շուրջ 800,000 Տոլար՝ «Հայաստան» Հիմնադրամի Առցանց Դրամահաւաքի Միջոցաւ

*«Հայաստան» համահայկական հիմնադրամը, միանալով COVID-19 համաճարակի դէմ մղուող պայքարին, Մարտ 18-ին նախաձեռնեց «COVID-19 Հայաստան. միասին յաղթահարենք համաճարակը» առցանց դրամահաւաք-արշաւը, որուն ծիրէն ներս հաւաքագրուած ամբողջ գումարը ուղղուած էր առողջապահութեան ոլորտին անհրաժեշտ բարձրորակ բժշկական պարագաներու ու սարքերու ձեռքբերման եւ տրամադրման, ինչպէս նաեւ հրատապ անհրաժեշտութիւն ունեցող այլ կարիքներուն:*

*Յուլիս 22-ի դրութեամբ՝ հաւաքագրուած է շուրջ 800,030 ԱՄՆ տոլար, որմէ 695,244 ԱՄՆ տոլարը արդէն ուղղուած է մեծածաւալ բժշկական պարագաներու ու սարքաւորումներու ձեռք բերման, շտապ օգնութեան անձնակազմին ֆինանսական աջակցութեան, Երեւանի եւ մարզերու կարիքաւոր ծերերուն ամենամսեայ սնունդի մատակարարման, ինչպէս նաեւ բազմաթիւ հայրենակիցներու Հայաստան վերադարձին:*

*Ի լրումն առողջապահական ոլորտին տրամադրուած աջակցութեան, Հիմնադրամի տեղական մարմիններու շնորհիւ մեծաքանակ բժշկական պարագաներ եւ սարքաւորումներ արդէն նուիրաբերուած են Հայաստանի եւ Արցախի առողջապահական ոլորտին:*

*Մնացեալ գումարը եւս կ՚ուղղուի առողջապահական ոլորտի ծրագրերու օժանդակման:*

*Հիմնադրամը իր խորին շնորհակալութիւնը կը յայտնէ աշխարհի 18 երկիրներէ միացած աւելի քան 1000 անհատ նուիրատուներուն, աշխարհասփիւռ հայկական համայնքներուն, կազմակերպութիւններուն, Հիմնադրամի ողջ ցանցին եւ բոլոր գործընկերներուն:*

# ԼՈՒՐԵՐ

## Պելկրատ Կը Յայտարարէ, Որ Կաշկանդուած չէ Հայաստանին Զէնք Վաճառելու Հարցով



«Գոյութիւն չունի որեւէ միջազգային սահմանափակում, որուն հիման վրայ Սերպիան կարող է հրաժարիլ զէնք վաճառելէ Հայաստանին», -նախօրէին, մեկնաբանելով Պաքուէն հնչող մեղադրանքները, նման յայտարարութեամբ հանդէս եկած է Սերպիոյ առեւտուրի նախարար՝ Ռասիմ Լեալիչ:

Պատասխանելով սերպական լրատուամիջոցներու հարցերուն, նախարարը հաստատած է, որ երկրի տարածքը գործող մասնաւոր զինագործական ընկերութիւններէն քանի մը հատը կը համագործակցին Հայաստանի հետ:

«2020 Թուականին, Հայաստանին զէնք մատակարարած են մասնաւոր ընկերութիւնները: Սերպիա գործող պետական զինագործական ընկերութիւնները այդ գործարքներուն մէջ ներգրաւուած չեն եղած: Ես չեմ կրնար նշել այդ ընկերութիւններու անունները, սակայն մեր տեղեկութիւններով Հայաստան մատակարարուած են հիմնականօրէն ինքնաձիգեր եւ ատրճանակներ: Անոնց ընդհանուր արժէքը մէկ միլիոն եւրոյէ ալ պակաս եղած է: Այդ սպառազինութիւնը առաքուած է երկու խմբաքանակով՝ Մայիսին եւ Յունիսին», -յայտարարած է սերպ պաշտօնեան՝ յատուկ ընդգծելով, որ Երեւանի հետ կնքուած գործարքը նախապէս արժանացած է Սերպիոյ հինգ գերատեսչութիւններու՝ արտաքին գործոց, ներքին գործոց, պաշտպանութեան եւ առեւտուրի նախարարութիւններու, ինչպէս նաեւ հետախուզական ծառայութեան հաւանութեան:

«Ոչ Եւրոպական Միութիւնը, ոչ Միացեալ Նահանգները եւ ոչ ալ Ռուսաստանը Հայաստանի դէմ պատժամիջոցներ սահմանած են, ուստի շատ դժուար է մերժել այդ երկրի՝ սպառազինութիւն գնելու առաջարկները», -նշած է Սերպիոյ առեւտուրի նախարարը:

Սերպական սպառազինութեան մատակարարումներու շուրջ սկանդալը ծագեցաւ, Պաքուի մէջ գործող Haqqin.az կայքի Յուլիս 19-ի հրապարակումէն յետոյ, որուն համաձայն՝ Ատրպէյճանի կառավարութիւնը իբր անհերքելի տեղեկութիւններ ստացած է, թէ Պելկրատը Հայաստանին վերջին ամիսներու ընթացքին, տարբեր տրամաչափի ականանետային սպառազինութիւն վաճառած է: Սերպիոյ առեւտուրի նախարարը սակայն, ականներու մատակարարման տեղեկութիւնը կը շրջանցէ, խօսելով միայն Հայաստան առաքուած հրազէնի մասին:

Haqqin.az-ի այդ հրապարակումը ուղղակի ազդեցութիւն ունեցաւ ոչ միայն Սերպիոյ եւ Ատրպէյճանի, այլեւ Վրաստանի ու Ատրպէյճանի յարաբերութիւններուն վրայ: Ատրպէյճանական կայքի հրապարակման համաձայն, սերպական սպառազինութիւնը Հայաստան բերուած էր Վրաստանի տարածքով: Նոյն օրերուն, ըստ ատրպէյճանական լրատուամիջոցին, Ռուսաստանէն, Վրաստանի տարածքով «Քամազ» բեռնատարներու խմբաքանակ մը Հայաստան առաքուած էր:

## Պոլսոյ Մէջ Հայ Երիտասարդի Մը Դէմ Ատրպէյճանցիներու Յարձակման Մասին Կարօ Փայլան Խօսած է Նահանգապետին

Թրքական խորհրդարանի Հայ անդամ Կարօ Փայլան Սթամպուլի Քումքափը թաղամասին մէջ հայ երիտասարդի դէմ ատրպէյճանցիներու յարձակման հետ կապուած հեռախօսազրոյց ունեցած է Սթամպուլի նահանգապետին հետ:

Կարօ Փայլան Twitter-ի իր էջին վրայ գրած է, որ պէտք է շտապ քայլեր կատարուին հայաստանցիներու դէմ յարձակումները կանխելու համար: «Պէտք է գտնել այդ յարձակումներուն ետեւը կանգնած ուժերը»,-գրած է Կարօ Փայլան:

Նշենք, որ Սթամպուլի հայկական «Ակօս»-ի հետ զրոյցին, հայաստանցի կին մը պատմած էր, որ Քումքափը թաղամասի մէջ թաքսի նստելու ժամանակ ատրպէյճանցիները մօտեցած եւ Ղարաբաղի հետ կապուած հարցեր տուած են : Ան շեշտած է, թէ չնայած իրենք ըսած են, որ քաղաքականութեամբ չեն հետաքրքրուիր, ատրպէյճանցիները յարձակած են իր տղուն վրայ:

Խմբակային ծեծի տեսանիւթը ընկերային համացանցերուն մէջ տարածած են իրենք՝ ատրպէյճանցիները:



Թրքական խորհրդարանի Հայ անդամ Կարօ Փայլան

Յայտնի դարձած է, որ նոյն թաղամասին մէջ վերջին օրերուն նմանատիպ յարձակումներու թիրախը յայտնուած են նաեւ 50-ը անց 2 այլ հայեր: Իսկ հայ կնոջ մը պատկանող խանութին մէջ ատրպէյճանցիները ծեծած են աշխատակիցները:

## Ուրուկուէյի Բոլոր Կուսակցութիւնները Մերժած են Ատրպէյճանի Յարձակումները Հայաստանի Դէմ



Ուրուկուէյի նախագահ՝ Լուիս Լաքալյէ Փոուի Ազգային կուսակցութեան վարչութիւնը յատուկ յայտարարութիւն հրապարակած է Հայաստանի եւ Ատրպէյճանի սահմանին վրայ կատարուող պատերազմական գործողութիւններու կապակցութեամբ: Աւանդական ազգային «Ճերմակ» իշխող կուսակցութիւնը կոչ ըրած է երկու կողմերուն յարգելու միջազգային պայմանաւորուածութիւնները եւ խաղաղութիւն հաստատելու տարածաշրջանին մէջ, հիմնուած ժողովուրդներու ազատ ինքնորոշման իրաւունքին վրայ:

Իր հերթին, իշխանութեան մաս կազմող միւս աւանդական «Քոլորատօ» կուսակցութեան գործադիր կոմիտէի կողմէ հրապարակուած հաղորդագրութեան մէջ Ատրպէյճանի յարձակումները Հայաստանի դէմ մերժուած են, եւ կոչ կ՚ուղղուի դադրեցնելու պատերազմական հռետորաբանութիւնը եւ բանակցութիւններու միջոցով հասնիլ խաղաղութեան: «Քոլորատօ» կուսակցութիւնը, որ իշխած է Ուրուկուէյի մէջ աւելի քան մէկ դար, իր զօրակցութիւնը յայտնած է հայ ժողովուրդին, որ իրաւունք ունի ազատութեան եւ խաղաղութեան պայմաններու մէջ իրագործել իր ինքնիշխանութիւնը:

Ընդդիմադիր ձախակողմեան «Ժողովրդական միաւորում» կուսակցութիւնը իր հաղորդագրութեան մէջ նշած է, որ ատրպէյճանական այս յարձակումները լայնածաւալ պատերազմ սկսելու վտանգ կը պարունակեն տարածաշրջանի մը մէջ, ուր մշտապէս անկայունութիւն կը տիրէ: Հայ ժողովուրդը իրաւունք ունի ինքնորոշ ըլլալու, եւ պէտք չէ մոռնալ, որ ամբողջ մարդկութիւնը պարտք ունի հայ ժողովուրդի հանդէպ, որուն դէմ կատարուած է ցեղասպանութիւն անցեալ դարու սկիզբը, նշած է «Ժողովրդական միաւորում» կուսակցութիւնը:

Յիշեցնենք, որ իրավիճակը Հայաստանի եւ Ատրպէյճանի սահմանի Տաւուշի հատուածին մէջ կտրուկ սրուած է Յուլիս 12-ին, երբ ատրպէյճանցի զինծառայողները ՈւԱԶ-ով պետական սահմանը խախտելու փորձ կատարած են: Անցեալ շաբաթ մարտական գործողութիւններու հետեւանքով, պաշտօնական տուեալներով, ատրպէյճանական կողմէն զոհուած է 12 զինուորական, անոնց կարգին՝ զօրավար, գնդապետ եւ այլ բարձրաստիճան սպաներ, ու մէկ քաղաքացիական անձ, հայկական կողմէն՝ 4 զինուորական, որոնցմէ երկուքը՝ սպաներ:

## Հայ-Ատրպէյճանական Սահմանը Դիպուկահարի Կրակէն Պայմանագրային Զինծառայող Զոհուած Է

Հայ-ատրպէյճանական սահմանը քանի մը օր տեւած յարաբերական անդորրէն յետոյ այս գիշեր ատրպէյճանական դիպուկահարէն սպանուած է պայմանագրային զինծառայող Աշոտ Գէորգի Միքայէլեանը:

Պաշտպանութեան նախարարութիւնը յայտնած է, որ դէպքը գրանցուած է հիւսիսարեւելեան ուղղութեամբ տեղակայուած զօրամասերէն մէկու մարտական դիրքին մէջ, որ ըստ էութեան, երկու շաբաթ առաջ ռազմական գործողութիւններու կիզակէտ հանդիսացող Տաւուշի ուղղութիւնն է: Պաշտպանական գերատեսչութիւնը սահմանային ներկայ իրավիճակի վերաբերեալ յաւելեալ մեկնաբանութիւններ առայժմ չէ տուած:



Զոհուած զինծառայող Աշոտ Գէորգի Միքայէլեան

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

## Ռաֆիք Հարիրիի Սպանութեան Դատավճիռը Օգոստոս 7ին



*Լիբանանի նախկին վարչապետ Ռաֆիք Հարիրիի դէմ կատարուած մեծ մահափորձի դատավարութիւնը, որ սկսած էր 2005 Թուականին, իր աւարտին հասաւ անցեալ շաբաթավերջին: Իսկ վճիռը պաշտօնապէս պիտի յայտարարուի յառաջիկայ Ուրբաթ, Օգոստոս 7ին:*

*Նշենք նաեւ միլիոնատէր Հարիրիի դէմ կատարուած անձնասպանական ոճրային արարքին պատճառով շիիթ իսլամական ծայրայեղական Հըզպալլահ կազմակերպութիւնէն չորս կասկածելիներ դատավարութեան մէջ էին, որոնք իրագործած են ռմբահարումը Վալայնթայի տօնին օրը, երբ Հարիրի ինքնաշարժներու շարանով մը կ'անցնէր Պէյրութի Սէն Ժորժ հիւրանոցի մերձակայ պողոտայէն:*

*Արդարեւ այս հսկայ պայթիւնին հետեւանքով մահացած էին 21 ուրիշներ եւ վիրաւորուած 226 հոգիներ: Նահատակ Ռաֆիք Հարիրի Լիբանանի վարչապետն էր մինչեւ 2004 Թուականը եւ շատ կարծր կեցուածք ունէր Սուրիոյ հանդէպ: Այս առթիւ Հըզպալլահի ղեկավար Հասան Նասրալլա մերժած էր համագործակցիլ Հոլանտայի մէջ գործող դատարանին հետ:*

*Գորոնա համաճարակի պատճառով դատավճիռի ունկնդրութիւնը պիտի կատարուի մասնակի առցան հեռասփռումով եւ մասնակցութեամբ:*

*Այս կապակցութեամբ նշենք նաեւ որ Հըզպալլայի ղեկավար Հասան Նասրալլան իր ատենին մերժած էր կասկածելիներու յանձնումը արդարադատութեան եւ ազդարարելով առնց ըսած էր. «Կրակին հետ մի խաղաք»:*

*Ռաֆիք Հարիրիի որդին Սաատը, որ յետագային իր հօր նման վարչապետ եղաւ, 2018ի ունկնդրութեան ժամանակ բացայայտեց որ ինք կողմնակից է ի նպաստ «Արդարութեան» եւ ոչ վրիժառութեան:*

*Նշենք նմանապէս որ այս հարցի կապակցութեամբ դատարանն ունկնդրած է 300 վկաներ եւ պատրաստած է թղթածրար մը բաղկացած 144,000 էջերէ:*

*2009էն ի վեր դատական ծախսերու համար նախատեսուած է 600 միլիոն տոլար:ս*

## Թրամփի Վերընտրութիւնը

Շարունակուած էջ 1-էն

րով եւ այն թեկնածուն որ կը ստանայ 270 ընտրական ձայն կը դառնայ նախագահ:

Քաղաքական մեկնաբանները նաեւ դիտել կու տան որ, 2016-ի հարցախոյզերուն եւ այսօրուայ միջեւ կան էական տարբերութիւններ: Չորս տարի առաջ հարցախոյզերը Քլինթընի ձայները կը նախատեսէին մօտ 46 տոկոս՝ առանց երբեք անցնելու 50 տոկոսի սահմանագիծը, նկատի ունենալով որ, կային փոքր կուսակցութիւններու թեկնածուներ, որոնք 3-5 տոկոս համակիրներ ունէին: Ներկայիս, բազմաթիւ հարցախոյզերու մէջ Պայտընի կը վայելէ 50 տոկոսէն աւելի վստահութիւն:

Հարցախոյզերը նաեւ ցոյց կու տան որ, Թրամփ ետ է ոչ միայն այն երեք նահանգներուն մէջ, որոնք զինք հասցուցին նախագահութեան, այլ եւ ետ է կամ հաւասար բազմաթիւ նահանգներու մէջ, որոնք աւանդականօրէն կը քուէարկեն Հանրապետականներուն ի նպաստ: Այդ նահանգներու շարքին են Ֆլորիտան, Թեքսասը, Արիզոնան, Ճորճիան եւ Օհայոն:

Թրամփի համար մտահոգիչ այս թիւերը կապուած են նաեւ «Քորոնա» ժահրի ունեցած ազդեցութեան հետ: Եթէ նախքան համաճարակը տնտեսութիւնը կը նկատուէր ընտրողներու համար գլխաւոր հարցը, այժմ առողջապահութիւնը դարձած է առաջնահերթութիւն: Համաճարակի առաջքը առնելու կապակցութեամբ ժողովուրդի միայն 36 տոկոսը կը վստահի Թրամփին եւ մեծամասնութիւնը համոզմունք կը յայտնէ, որ Պայտըն աւելի լաւ ձեւով պիտի կարողանայ յաղթահարել այս տագնապը, որ մինչեւ օրս խլած է մօտ 150 հազար ամերիկացիներու կեանքը:

Թրամփ նաեւ հող կորսնցուցած է երէց քաղաքացիներու, արուարձաններու մէջ ապրող միջին դասակարգի կանանց, բարձրագոյն կրթութիւն ունեցողներու եւ նոյնիսկ հաւատացեալ Աւետարանականներու մօտ, որոնք կը նկատուէին իր գլխաւոր յենարանը: Թրամփ կը պահէ իր ունեցած առաւելութիւնը անոնց մօտ, որոնք չունին համալսարանական կրթութիւն:

Տնտեսութիւնը, որ ցարդ կը նկատուէր գործող նախագահի գլխաւոր խաղաքարտը, հոն եւս Պայտընի եւ Թրամփի նկատմամբ վստահութիւնը այժմ գրեթէ հաւասար է:

Այս բոլոր տուեալներու հիման վրայ, Տանըլտ Թրամփին կը սպասեն դժուար օրեր եւ շատ կարճ ժամանակ մնացած է հանրային կարծիքի մօտ կտրուկ փոփոխութիւն յառաջացնելու համար: Միւս կողմէ սակայն, վերջին ամիսներուն կրնան պատահիլ չնախատեսուած այնպիսի իրադարձութիւններ եւ կամ անակնկալ զարգացումներ, ինչպէս օրինակ »Քորոնա« ժահրի պատուաստի յայտնաբերումը, անգործութեան ցուցնիշներու բարելաւումը, եւ կամ Պայտընի կողմնակիցներու քուէարկութեան չներկայանալը, որոնք կրնան ազդել վերջնական արդիւնքներուն վրայ, այլապէս Թրամփի վերընտրութիւնը կը մնայ մեծ հարցականի տակ:

«ՄԱՍԻՍ»

## Փաշինեան Կը Բացառէ

Շարունակուած էջ 1-էն

*չապետը վերահաստատած է դիրքորոշումը, որու մասին յայտարարած է իշխանութեան գալու առաջին իսկ օրէն, խնդիրը հնարաւոր է լուծել միայն այն ժամանակ, երբ բանակցութիւններուն կը մասնակցին նաեւ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդի քուէն ստացած ներկայացուցիչները:*

*«Եթէ Ատրպէյճանի նախագահն ուզում է, որ Հայաստանի վարչապետը ներկայացնի Լեռնային Ղարաբաղը բանակցութիւնների սեղանի շուրջ, ստացւում է, որ նա ասում է, որ Ղարաբաղը Հայաստան է: Հակառակ դէպքում, ինչո՞ւ պէտք է Հայաստանը ներկայացնի Լեռնային Ղարաբաղը», - հարց բարձրացուցած է Փաշինեան:*

*Հայաստանի վարչապետը միաժամանակ փաստած է, որ պատերազմական լայնածաւալ գործողութիւններու վերսկսման վտանգը դեռ կայ, «քանի որ եղել են ուժեր եւ երկիրներ, որոնք հրահրած են այս հակամարտութիւնը»:*

*«Առաջին հերթին՝ դա Թուրքիան էր, որ հրահրում էր հակամարտութիւնը: Թուրքիայի նախագահը ոչ միայն չի ճանաչում 1915 Թուականի Հայոց ցեղասպանութեան փաստը, այլեւ արդարացնում է Ցեղասպանութիւնը: Եւ կայ մէկ այլ գործօն՝ Թուրքիան, ինչպէս եւ այս դարասկզբին, երազում է վերահսկողութեան տակ առնել Կովկասը: Եւ վերջին 30 տարիներին՝ ԽՍՀՄ (Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութիւն) փլուզումից յետոյ, Թուրքերը ամէնօրեայ աշխատանք են տանում այդ երազը, այդ նպատակը իրականութիւն դարձնելու համար: Եթէ դա իրականութիւն դառնայ, կարծում եմ՝ առաջին հերթին ռուսաստանցիների համար ակնյայտ է, թէ ինչ հետագայ աշխարհաքաղաքական հնարաւոր հետեւանքներ դա կ'ունենայ», - ըսած է Փաշինեան:*

*Քննադատելով Թուրքիան՝ Հայաստանի վարչապետը ողջունած է ԵԱՀԿ Մինսքի խումբի ջանքերը, առանձնացնելով յատկապէս Ռուսաստանի «բացառապէս կառուցողական» դերը: Արձագանգելով քննադատութիւններուն, թէ ինչո՞ւ Թուրքիան այդքան կը պաշտպանէ Ատրպէյճանը, մինչդեռ Ռուսաստանը նոյն ոգիով չի սատարեր դաշնակից Հայաստանին, Փաշինեան յիշեցուցած է, որ Ռուսաստանը ԵԱՀԿ Մինսքի խումբի անդամ է, միջնորդ՝ ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման գործընթացին, եւ անոր գործողութիւնները պէտք է ըլլան այդ համաթեքսթով:*

*«Ռուսաստանը չի կարող մի կողմ քաշուել այս իրադարձութիւններից, քանի որ այս խնդիրը վերաբերում է ոչ միայն Հայաստանի կենսական կարեւորութեան շահերին, այլեւ Ռուսաստանի Դաշնութեան համար կենսական կարեւորութիւն ունեցող հետաքրքրութիւններին: Այստեղ ոչ միայն տարածաշրջանային անվտանգութեան հարցն է որոշւում, այլեւ՝ համաշխարհային, քանի որ հիմա մեր տարածաշրջանում իրավիճակն այնքան թէժ է, որ ղարաբաղեան հակամարտութեան գօտում թէժացումը կարող է բերել համընդհանուր աղէտի»:*

*Լարուածութեան թուլացման լաւագոյն բանաձեւը, ըստ Փաշինեանին, միջազգային դիտորդներու տեղակայումն է շփման գօտին, որոնք տեղւոյն վրայ կ'արձանագրեն՝ կողմերէն որ մէկը առաջինը խախտած է հրադադարի ռեժիմը:*

*«Անհրաժեշտ է ստեղծել հրադադարի խախտման դէպքերի մշտադիտարկումի եւ քննութեան մեքենականութիւն: Այս հարցը միշտ է եղել մեր օրակարգում, սակայն, Ատրպէյճանը չի ընդունում այդ առաջարկը: Յոյս ունեմ, որ գոնէ վերջին իրադարձութիւններից յետոյ կու գանք այդ որոշմանը», - ըսած է Հայաստանի կառավարութեան ղեկավարը:*

*Փաշինեան յիշեցուցած է, որ Ատրպէյճանի առաջնորդը մինչեւ օրս անարձագանգ թողած է նաեւ իր առաջարկած բանաձեւը, ըստ որու հակամարտութեան կարգաւորումը պէտք է ընդունելի ըլլայ Հայաստանի, Ատրպէյճանի եւ Ղարաբաղի ժողովուրդներուն համար: «Ես նաեւ առաջարկել եմ հայերին ու ատրպէյճանցիներին դադարեցնել միմեանց հասցէին վիրաւորանքները ընկերային ցանցերում, իրենց դնել դիմացինի տեղը եւ փորձել հասկանալ՝ ինչո՞ւ են հայերն այդպէս մտածում, կամ՝ ինչո՞ւ են ատրպէյճանցիները այդ կարծիքին», - նշած է Փաշինեան, ընդգծելով, որ Հայաստանի պաշտօնական հռետորաբանութեան մէջ ատելութիւն չկայ, ինչ որ կարելի չէ ըսել Ատրպէյճանի կառավարութեան մասին:*

*Անդրադառնալով Ռուսաստանի մէջ հայաստանցիներու ու ատրպէյճանցիներու միջեւ անցեալ շաբաթ արձանագրուած բախումներուն, Փաշինեան պնդած է, որ անոնք ոչ միայն Ատրպէյճանի ղեկավարութեան հակահայկական հռետորաբանութեան արտայայտութիւնն են, այլեւ Ռուսաստանը ապակայունացնելու եւ Ռուսաստանը ազգամիջեան բախումներու թատերաբեմ դարձնելու փորձ:*

*«Մեր դիրքորոշումը յստակ է՝ չի կարելի տրուել այդ սադրանքներին, քանի որ Ռուսաստանի կայունութիւնը ռազմավարական կարեւորութիւն ունի մեզ համար: Եւ իմ կոչն է դադարեցնել այդ ամէնը: Ռուսաստանում ապրողները պարտաւոր են հետեւել ՌԴ օրէնքներին ու կանոնադրութեանը: Այն, ինչ կատարւում է, հակասում է ոչ միայն օրէնքին, այլեւ բարոյական նորմերին», - ընդգծած է վարչապետը:*

*Հայաստանի վարչապետ՝ Նիկոլ Փաշինեան ռուսական լրատուամիջոցին տուած հարցազրոյցի ընթացքին անդրադարձած է RT կայանի ղեկավար՝ Մարկարիթա Սիմոնեանի մեղադրանքներուն: Լրագրողի հարցին արդեօք կարդացած է Սիմոնեանի գրառումը, Փաշինեան ըսած է, որ չէ կարդացած, բայց ծանօթ է բովանդակութեան:*

*Մեկնաբանելով Հայաստանի նախկին նախագահ՝ Ռոպերթ Քոչարեանի նկատմամբ քրէական հետապնդման հարցով մեղադրանքները, Փաշինեան նշած է, որ Ռուսաստանի դաշնակիցները առանձին քաղաքական գործիչները չեն, այլ հայ ժողովուրդը: «Ռուսաստանում պէտք է հասկանան, որ Հայաստանում Ռուսաստանի դաշնակիցը Փաշինեանը, Պետրոսեանը, Պօղոսեանը, Սարգսեանը, Քոչարեանը չեն, դաշնակիցն ու գործընկերը հայ ժողովուրդն են: Սա շատ կարեւոր նրբութիւն է», - ըսած է Փաշինեան:*

# ՀԿԲՄ-ի Կողմէ Հիւանդանոցային Անկողիններ Ուղարկուած են Հայաստան





*Համագործակցութեամբ՝ Հայկական Կրթական Բարեսիրական Միութեան (ՀԿԲՄ) եւ Կլէնտէլի «Ատվենդիստ» Առողջապահութեան Կեդրոնին, 36 հիւանդանոցային անկողիններ հասած են Հայաստան:*

*Կլէնտէլի Ատվենդիստ Հիւանդանոցին կողմէ նուիրուած անկողինները, որոնց բեռնափոխադրման աշխատանքներն ու ծախսերը ստանձնած էր ՀԿԲՄ-ը, հասցեագրուած էին Հայաստանի Առողջապահութեան Նախարարութեան, որպէսզի բաշխուին Հայաստանի շրջանային հիւանդանոցներուն՝ առողջապահական ծառայութեան որակը բարելաւելու նպատակով, յատկապէս այս օրերուն երբ անոնք կը պայքարին ,Քորոնաե ժահրի համաճարակի դէմ:*

*«Մենք շնորհակալ ենք Կլէնտէլի «Ատվենդիստ» Առողջապահութեան Կեդրոնին այս նուիրատուութեան համար եւ երախտապարտ՝ Հայաստանի առողջապահական համակարգին իրենց ցուցաբերած երկարամեայ օժանդակութեան եւ ծրագիրներուն համար: Միեւնոյն ատեն, մենք ուրախ ենք, որ մեր նախաձեռնած ծրագիրը իրագործուեցաւ», -ըսաւ ՀԿԲՄ-ի վարչութեան անդամ՝ Թադէոս Քէօրողլեան:*

*Այս առթիւ, յատուկ շնորհակալութիւն կ'ուզենք յայտնել Տօքթ. Գրիգոր Գրիգորեանին իր կատարած նուիրատուութեան եւ Հայաստան-Արցախ Ֆոնտին՝ փոխադրութեան կազմակերպման օժանդակելու համար:*

*Յաւելեալ մանրամասնութիւններու համար այցելել մեր կայքէջը՝* www.aebu.org

# Հայաստանի Հիւպատոսարանին Յայտարարութիւնը՝ Գուլզեան-Զաքարեան Վարժարանին Դէմ Վանտալութեան Արարքին Վերաբերեալ



*Լոս Անճելըսի մէջ Հայաստանի Հանրապետութեան հիւպատոսարանը խոր մտահոգութիւն կը յայտնէ 23 Յուլիսին, Սան Ֆրանսիսքոյի Գուլզեան-Զաքարեան վարժարանին եւ անոր կից գտնուող Հայ կեդրոնին դէմ կատարուած վանտալութեան արարքին վերաբերեալ: Ատրպեճանական արտայայտութիւններով «կրաֆիթի»ներ թողած են շէնքի արտաքին պատերուն վրայ:*

*Կրթական հաստատութեան մը դէմ վանտալութեան այս արարքը ցոյց կու տայ, թէ Քալիֆորնիոյ Հայ համայնքը զոհն է Ատելութեան յանցագործութեան մը, որ յստակօրէն կազմակերպուած է ատրպէյճանցիներու կողմէ:*

*Լոս Անճելըսի մէջ Հայաստանի ընդհանուր հիւպատոսութիւնը խստօրէն կը դատապարտէ վանտալութեան եւ ատելութեան յանցագործութեան արտայայտութիւն հանդիսացող այս արարքը կրթական հաստատութեան եւ ծովածոցի շրջանի հայ համայնքին դէմ:*

*Հայաստանի ընդհանուր հիւպատոսութիւնը յոյս կը յայտնէ, որ իրաւապահ մարմինները պէտք եղած հետաքննութիւնը պիտի կատարեն եւ բացայայտեն ու պատժեն յանցագործները:*

*Հայաստանի ընդհանուր հիւպատոսութիւնը յատուկ կերպով կ'ընդգծէ Սան Ֆրանսիսքոյի շրջանի դատախազ Ջեսա Պուտինի անմիջական հակադարձութիւնը՝ «Թուիթըր»ի վրայ գայրոյթ յայտնելով կատարուած արարքին կապակցութեամբ:*

*«Անհատ մը վանտալութիւն գործած է հայկական դպրոցին եւ կեդրոնին դէմ: Խիստ գայրացած եմ: Ասիկա բոլորովին անհաշտ է Սան Ֆրանսիսքոյի արժէքներուն հետ: Միաժամանակ ասիկա ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ է: Կ'աշխատինք Սան Ֆրանսիսքոյի ոստիկանական բաժանմունքին հետ հետաքննութեան վերաբերեալ: Զօրավիգ կը կանգնինք մեր հայ եղբայրներուն եւ քոյրերուն»:*

# Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութիւնը Կը Յայտարարէ «Խօսք Առ» Մրցանակին Արդիւնքները




*Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Բաժանմունքը Ապրիլ 2020-ին մեկնարկեց «Խօսք Առ» մրցանակը: Այս իւրայատուկ նախաձեռնութիւնը - եզակի իր տեսակին մէջ - հրաւիրեց աշխարհասփիւռ հայախօսներ ներկայացնելու տարբեր տեսակի նորարար լսատեսողական եւ գրական արտադրութիւններ, որոնք կը մղեն հայերէնով մտածելու եւ հայերէնով արծարծելու մարդկութեան դիմագրաւած այսօրուան հիմնահարցերը:*

*Ստացանք տասնըութը երկիրներէ եւ տարբեր ձեւաչափերու 165 դիմում. շարժանկար ու շարանկար, երգ ու երգիծանք, ծաղրանկար, բանաստեղծութիւն, արձակ, տեսահոլովակ, զանազան ձեւաչափերով արտադրութիւններ եւ աւելին: Ամենէն երիտասարդ դիմողը ութ տարեկան էր, իսկ ամենէն տարիքովը՝ ութսուներեք: Եօթ հոգիէ բաղկացած ներքին յանձնախումբը մեծ հետաքրքրութեամբ արժեւորեց բոլոր դիմումները, ու որոշեց յատկացնել վաթսուն մրցանակ: Տրուած ըլլալով որ բազմաթիւ էին հետաքրքրական եւ որակեալ դիմումները, յիսունի փոխարէն տրուեցաւ վաթսուն մրցանակ. քսանհինգ մրցանակ Հայաստանէն դիմողներու, եւ երեսունհինգ Սփիւռքէն դիմողներու, որ կը համապատասխանէ դիմողներուն քանակին:*

*«Խօսք Առ» մրցանակին հիմնական նպատակներէն էր խթանել բոլոր տարիքի եւ տարբեր հետաքրքրութիւններ ունեցող մարդոց մտածելու հայերէնով եւ լեզուն գործածելու ստեղծագործ եւ այլազան ձեւերով: Այս չափանիշերը, ինչպէս նաեւ ներկայացուած գործին կարողականութիւնն ու հոն արտայայտուած միտքերուն թարմութիւնը գնահատումի հիմնական չափանիշերն էին:*

*Յատկապէս ուրախ ենք որ մեծ քանակով երիտասարդներ դիմեցին Խօսք Առ մրցանակին՝ ստեղծագործ աշխատանքներով ուր հիմնական արտայայտչամիջոցը հայերէնն էր: Մեծ ուրախութիւն է նաեւ տեսնել թէ այս մրցանակին շնորհիւ կը գոյանայ հայերէնով ստեղծագործելու փափաք մը. հայ երիտասարդ եւ ստեղծագործ միտքեր կը սկսին փնտռել իրենց նմանները եւ կը փափաքին, կապ հաստատելով, կորիզ մը կազմել:*

*Շնորհակալութիւն կը յայտնենք բոլոր մասնակիցներուն եւ կը շնորհաւորենք բոլորը:*

*Յաւելեալ տեղեկութիւններու եւ «Խօսք Առ»-ի մրցանակակիրներուն անուանացանկին ծանօթանալու համար այցելել՝* gulbenkian.pt/armenian-communities/

# Էյֆորիայից Անդին

Շարունակուած էջ 2-էն

*ուայում իրավիճակի միասնական գնահատական, կարծես, չկայ: Սա է մոտաւոր պատկերը, որից դժուար թէ ոգեւորուելու առիթ ունենք: Միջավայրը շատ նկատելիօրէն ռազմականացել է: Ռուս վերլուծաբան Կորկոդինովը տաւուշեան բախումներն անուանում է «մեծ պատերազմի նախերգանք»:*

*Դէմ առ դէմ պատերազմելու մասին Իլհամ Ալիեւի մարտահրաւէրն ընդամէնը տղայականութիւն է: Այլապէս մի քանի զինուորական պատուիրակութիւն Պաքուից չէր մեկնի Անքարա: Թուրք-ատրպէյճանական առաջիկայ զօրավարժութիւնները կարող են թեսթային լինել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների համար: Աւելի ճիշտ, դրանք ցոյց կը տան՝ Մոսկուան եւ Ուաշինկթոնը շարունակելո՞ւ են համատեղ կառավարել ԼՂ հակամարտութիւնը, թէ տեղի է ունեցել խզո՞ւմ: Հետեւութիւններ կ'անեն արդէն ռազմական եւ անվտանգութեան հարցերով մասնագիտացած կառոյցները:*

*«ՀՐԱՊԱՐԱԿ»*

## Ընկ. Սեպուհ Գալփաքեան Սաատ Հարիրիի Հետ Կը Քննարկէ Հրատապ Հարցերը



*Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմինի ատենապետ Ընկ. Սեպուհ Գալփաքեան տեսակցեցաւ նախկին վարչապետ Սաատ Հարիրիի հետ: Վերջինիս կեդրոնական Պէյրութի բնակարանին մէջ տեղի ունեցած տեսակցութեան ընթացքին քննարկուեցան լիբանանեան քաղաքական, ելեւմտական ու ընկերատնտեսական հրատապ թղթածրարները, երկրին դիմաց ցցուած մարտահրաւէրները եւ քաղաքայիններուն դիմագրաւած խնդիրները:*

*Ընկ. Գալփաքեան եւ նախ կին վարչապետ Սաատ Հարիրի միտքեր փոխանակեցին երկիրը իր ելեւմտատնտեսական ճգնաժամէն դուրս բերելու միջոցներուն եւ առաջարկներուն շուրջ, նաեւ խօսեցան մարոնիներու պատրիարք Պըշարա Ռահի կարտինա լին արձակած՝ Լիբանանի չէզոքութիւնը յայտարարելու կոչին մասին: Դիտել տալով, որ օր ըստ օրէ կը բազմանան քաղաքայիններուն կենցաղային խնդիրները, ժողովականները պատկան մարմիններէն պահանջեցին շուտափոյթ եւ գործնական լուծումներ գտնել ապրուստային առօրեայ հարցերուն:*

*ՍԴՀԿ Վարիչ Մարմինի ատենապետը նաեւ յաջողութիւն մաղթեց Մուսթաքպալ հոսանքի երրորդ համագումարին, որուն բացումը տեղի պիտի ունենայ այս շաբաթավերջին:*

## Ի Յիշատակ Կիպրոսի Նահատակներուն



*20 Յուլիս 2020-ի երեկոյեան, Կիպրոսի Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան Վարիչ Մարմինը այցելութիւն մը տուաւ Նիկոսիոյ Թիմվոյի գերեզմանատուն, ուր հանգչած են 1974-ի թրքական ներխուժման ընթացքին նահատակուած զինուորները:*

*Ընկերներ ծաղկեպսակ զետեղելով յարգանքի տուրք մատուցեցին կիպրացի հերոսներուն: Նաեւ Բարսեղ Պիպէրեանի շիրիմին, որ զոհ գնաց Կիպրոսի պաշտպանական մարտերու ընթացքին:*

*Վարիչ Մարմինի ատենապետը խօսք առնելով նշեց երեք կէտեր այցելութեան նպատակին շուրջ. որպէս կիպրաբնակ հայեր երախտագիտական տուրք եւ քաղաքացիական պարտք մեր ապրած երկրին եւ անոր ժողովուրդին: Հայը ուր ալ ըլլայ պարտի մնալ հաւատարիմ եւ երախտագէտ այդ երկրին: Երկրորդ՝ հայ-յոյն եւ կիպրացի բախտակից ժողովուրդներ ունին նոյն ոսո խը եւ հետեւաբար կը մնան զինակիցներ նոյն խրամատի ետին եւ դաշնակիցներ ընդհանուր նպատակներով կապուած: Երրորդ՝ որպէս հնչակեաններ 133 տարի առաջ սկսանք պայքարի այն ուժին դէմ, որ անպատիժ մնալով շարունակեց իր յարձակման քաղաքականութիւնը իր հարեւաններուն եւ բազմաթիւ ժողովուրդներու դէմ: Մեր կուսակցութիւնը շատոնց սկսաւ պայքարը զսպելու այս վայրագ ուժը, որուն զոհերը աւելի ուշ դարձան նաեւ կիպրացիներ, որոնց շիրիմներուն մօտ կը վերանորոգենք մեր ուխտը:*

**www.massispost.com**
**Daily News Updates**

## Հ.Բ.Ը. Միութեան Հաճընի Որբանոցը, 1919-1920




*Հաճնոյ հերոսամարտի 100ամեակի ծիրէն ներս, Հաճնոյ Հայրենակցական Միութիւնը աւելի քան տարի մը առաջ լծուեցաւ համապատասխան շուքով նշելու պատմական այս իրադարձութիւնը:*

*Ծրագրուած եւ ընթացքի մէջ են յուշարձանի բացումի եւ հերոսամարտի գիտաժողովի աշխատանքները, մատաղօրհնէքի եւ պատարագի արարողութիւնները՝ Անթիլիասի, Էջմիածնի, Պէյրութի Նոր Հաճըն Թաղամասի եւ Հայաստանի Հանրապետութեան Նոր Հաճըն աւանին մէջ, ուխտագնացութիւնը՝ պապենական Հաճըն եւ գիրքերու հրատարակութիւնը: Արդէն իսկ կը գործէ հայրենակցականի դիմատետրը.-* Compatriotic Union of Hadjin - Lebanon.

*Այս ծիրին մէջ, այս օրերուն Հայկազեան Համալսարանի Հրատարակչատունէն լոյս տեսաւ Հ.Բ.Ը.Միութեան Հաճընի Որբանոցը 1919-1920, 288 էջանի երկլեզուեան (հայերէն եւ անգլերէն) հատորը:*

*Այս որբանոցը կազմուած էր Դամասկոսի մէջ, Ա. Համաշխարհային Պատերազմի աւարտէն իսկ առաջ: Զինադադարի շրջանին, ՀԲԸՄ Գահիրէի ղեկավարութիւնը պատեհ կը տեսնէ անոր փոխադրութիւնը Հաճըն: Որբանոցը իր 66 որբերով կը վերահաստատուի Հաճըն, ուր նոր որբեր կ'ընդգրկուին, ընդհանուր թիւը հասցնելով 212ի: Անտուն ու անտէր որբեր պատսպարելու կողքին, որբանոցը կը լծուի կրթական առաքելութեան, կը նպաստէ նաեւ վերականգնող Հաճընի կենսունակութեան: Միամեայ խաղաղ կեցութենէ ետք, սակայն, Հաճընի պաշարումով որբանոցը եւ արծուեբոյնը կը դիմագրաւեն օրհասական օրեր: Պատանի որբանոցայիններու խումբ մը կը ստանձնէ զինամթերքի փոխադրութեան եւ հաղորդակցութեան պարտականութիւնները:*

*Ութամսեայ հերոսական դիմադրութենէ ետք, սիրուն Հաճընը կը գրաւուի թուրք հրոսակներու կողմէ: Հաճըն վերադարձած շուրջ 7000 հաճընցիներ կը ջարդուին, կը կոտորուին նաեւ Հաճընի ՀԲԸՄիութեան որբանոցայինները: Նախճիրէն կ'ազատին ութ որբանոցայիններ, միքանի պաշտօնեաներ եւ ոչ աւելի քան 400 հաճընցիներ:*

*Հատորը կը ներկայացնէ որբանոցայիններուն դիմապատկերը.- անոնց լուսանկարը, ծննդավայրը, աքսորավայրը, որբանոց մուտքի թուականը, ծնողքի եւ հարազատներու ճակատագիրը եւ որբին նիւթական հոգածութիւնը ստանձնած բարերարին (անհատ/հաստատութիւն/վարչութիւն) անունը:*

*Գիրքին ներածականին մէջ ներկայացուած են ծննդավայր վերադարձի, ապա եւ Հաճնոյ վերականգնումի շուրջ երկամեայ պատմութիւնը, ՀԲԸՄիութեան որբանոցի բնակչութեան հաւաքական դիմապատկերը, հերոսամարտի դրուագներ եւ մարտիրոսութիւնը: Գիրքին վերջաւորութեան տրուած է անուանացանկը որբանոցայիններուն: Քարտէսներով ներկայացուած են որբանոցայիններուն ծննդավայրերն ու աքսորավայրերը, եւ ինքնապաշտպանութեան գործողութիւններուն դիրքերը, նաեւ միքանի նկարներ:*

*Գիրքին ներածականը եւ ծանօթագրութիւնները գրած է Դոկտ. Անդրանիկ Տագէսեան:*

*Գիրքը կը հանդիսանայ Եղեռնին հետեւանքով տասանորդուած, սակայն իր մէջ աներեւակայելի ուժ ունեցող հայ ժողովուրդին վերականգնումի անհաւատալի ճիգին մէկ պատմութիւնը:*

*Տիար Կարապետ Պապահէքեանի մեկենասութեամբ լոյս տեսած այս հատորին պիտի յաջորդեն ուրիշներ:*

*Այս եւ յաջորդող հատորներու շնորհանդէսները, գիտաժողովը, յուշակոթողի բացումը, մատաղօրհնէքները, հոգեհանգիստեան արարողութիւնները եւ ծրագրուած այլ ձեռնարկներ գործադրութեան պիտի դրուին անմիջապէս որ ներկայ համավարակի պայմանները թոյլատու ըլլան:*

Հաճնոյ Հայրենակցական
Միութիւն, Լիբանան

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
Massis2@earthlink.net 626-797-7680

# Լրագրող Մարգարիտա Սիմոնեանի Մաղձը՝ Ուղղուած Հայաստանի Իշխանութիւններին

Ռուսական RT Հեռատեսիլի ցանցի գլխաւոր խմբագիր Մարգարիտա Սիմոնեան Դիմատետրի (Facebook) վրայ երկար գրառում մը կատարելով կը մեղադրէ Հայաստանի իշխանութիւնները հակառուս քաղաքականութիւն վարելու մէջ՝ միաժամանակ պաշտպանելով ամբաստանեալ Ռոպերթ Քոչարեանին:

Տիկ. Սիմոնեանի այս գրառումը բնականաբար մեծ աղմուկ յառաջացուց հանրային կարծիքին մօտ:

Յարգելով տարբեր տեսակէտներ արտայայտելու ազատութիւնը, ստորեւ կը հրատարակենք մեր աշխատակից Հենրիկ Անասեանի պատասխան գրութիւնը՝ ուղղուած Մարգարիտա Սիմոնեանին, հակառակ որ չենք բաժներ յարգելի յօդուածագրի բոլոր գնահատականները:

**Խմբագրութիւն**



ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

*- Հենց սկզբից՝ անթաքոյց պժգանքով (զզուել) կարդացի ազգութեամբ հայ, ռուսական քաղաքացիութեամբ ճանաչուած ռուսական լրագրող Մարգարիտա Սիմոնեանի թոյնով լեցուն կոչը՝ ուղղուած Հայաստանի, իր կողմից յորջորջուած «Րոպէական» իշխանութեանը: Որպէս լրագրող, էն էլ յայտնի, միթէ՞ դու չգիտես տիկի՞ն, որ իսկական դեմոկրատական երկրի իշխանութիւնը ժողովրդին է պատկանում, կը նշանակի, որ քո կոչը վերաբերւում է նաեւ Հայաստանի ժողովրդին, որովհետու նա է ընտրում իշխանութեանը, որը ժողովրդի կամքն է կեանքի կոչում: Այս, քո բթամիտ ճամարտակութիւնը հայ ժողովրդի ցասումից ու արգահատանքից խուսանաւելու անճարակ, անյաջող փորձ է: Ինչո՞ւ է անյաջող,- որովհետեւ 30 տարի իշխանութիւնների ստրուկը լինելով, իշխանութիւնից անջատ, մի կերպ գոյութիւնը քարշ տուող հայաստանցին երկու տարի է որ իշխանութիւնների հետ է եւ հազիւ է «լեզուն բացուել» որպէսզի քո ասած «գոմաղբով» ամբողջացնի ցնդաբանութեամբ առլի քո ուղեղը:*

*Քո պաշտած Քոչարեանի օրօք ո՞վ կը յանդգնէր թթու խօսք ասել իշխանութեան հասցէին: Եւ դու՝ ժողովրդից խլած նիւթական միջոցներով միլիարդատէր դարձած յանցագործին պաշտպանում ես եւ անլուր լուտանքներ թափում Հայաստանի իշխանութիւնների գլխին, որ «համարձակւում» է նրան բանտ առաջնորդել: Ախր դու ի՞նչ գիտես նրա եւ կամ Հայաստանի մասին: Դու պարզապէս գործիք ես, եւ ես վստահ եմ, որ դու շարժւում ես **ՄԵԾԻ** թելադրանքով, չէ՞ որ նա **ՔՈՉ**-ի ընկերն է...*

*Լրագրող ես, եւ լաւ լրագրող, մի լսիր քո վերադասին, խօսիր ժողովրդի հետ, ոչ թէ կուրօրէն կատարիր վերադասիդ ցուցմունքներն ու հրահանգները, եւ անտեղի անէծք թափել մի տուր քո գլխին: Լաւ չի՞ լինի, որ վերադառնաս Կուբան, քո հարազատ միջավայրը, եւ տանդ խաչ եփելու փոխարէն, երկյարկանի ռեստորանումդ խաշ հիւրասիրես Կուբանի հուժկու կազակ տղամարդկանց: Ամերիկայում Սորոսի տուած դրամով ուսանելիս, գրեթէ տաս տարի ապրելով այնտեղ, դու չսովորեցի՞ր, որ «ստի ոտքերը կարճ են»:*

*Քո գրած կոչը ամբողջովին հերիւրանք է, փչոց, երեւակայութեան արդիւնք: Քո հրահանգչի հրահանգով ես դու թխել այս թերմացքը: Դու, եթէ քեզ հայ ես համարում, դու չէիր կարող **ԹՔԵԼ** Հայաստանի իշխանութիւնների, որ միեւնոյնն է՝ Հայաստանի ժողովրդի վրայ: 1828 թուականից սկսեալ Հայաստանը երբեք ու երբեք, չի թքել «ռուս բարեկամների ուղիղ դէմքին»: Մոռացե՞լ ես մեծ լուսաւորիչ Խաչատուր Աբովեանի «Օրհնուի էն սհաթը, որ ռուսը ոտը դրեց հայի հողին» արտայայտութիւնը: Ռուսը դրել է ոտը, ու 200 տարի չի հանում, հակառակը՝ գնալով էլ աւելի է ամրացնում մեր հողին՝ տիրանալով մեր հարստութիւններին, չնայած Լեգիտիմ (օրինական), 30 տար- ուայ միջազգայնօրէն ճանաչուած անկախ երկիր է Հայաստանը, հաւասարը-հաւասարի իրաւունքով էլ կողք-կողքի նստում Ռուսաստանի հետ միջազգային ժողովների ընթացքին:*

*Ի՞նչ է, Հայաստանը իրաւունք չունի՞ սեփական կարծիք ունենալու, ինքնուրոյն որոշումներ կայացնելու:*

*Լաւագոյնս իմանալով Ռուսաստանի՝ շատ անգամ սովետական մտայնութեամբ առաջնորդուելը, ես գիտէի, համոզուած էի, որ օրերից մի օր, ռուսները մեզ երեսով են տալու Ղրիմի հարցին չանդրադառնալու համար:*

*Իսկ Ռուսաստանը մի խօսք ասո՞ւմ է մեր պահանջատիրութեան մասին, կամ երբեւէ ասե՞լ է: Հենա, քթներիս տակ է Կարսի պայմանագրի 100-ամեակը, եկել է այն վերանայելու ժամանակը, սակայն ոչ մի ձայն-ծպտուն չկայ: Եթէ իսկապէս քեզ հայ ես համարում եւ լայն կապեր ունես վերեւների հետ՝ սրա մասին գրիր Մարգարիտ, չէ՞որ մեր հայրենիքի կէսը Արաքսի այն կողմում է, եւ այնտեղ է որ, ինչպէս ինքդ ես ասում՝ «Թուրքերը տատիս աչքի առաջ մորթել են նրա ամբողջ ընտանիքը»:*

*Դու ասում ես, որ Հայաստանի «համացանցային զօրքերը գոմաղբով աղտոտում են քո սոցցանցերը»: Ճիշդ է, ես էլ նայեցի, սոսկալի շատ են:*

*Ի միջայլոց, որպէս կէս հայի, արժէ քեզ համար լուսաբանել թէ ինչ ասել է Գոմաղբ (աթար): Դա հայ գիւղացու համար ձմեռուայ լաւագոյն վառելիքն է, եւ այն այրելիս, բնաւ տհաճ հոտ չի արձակւում, որովհետեւ այն «արտադրող» անասունները սնւում են Արարատեան դաշտի անարատ խոտով ու բուսականութեամբ: Այնպէս որ, ուրախ եղիր, որ քեզ այպանողները կղկղանքով չեն լցրել քո «գոմաղբով» լի սոցցանցերը...:*

*Ասեմ աղջիկ ջան, որ ես 70 տարուայ լրագրող եմ եւ երբեւէ նման բառեր չեմ օգտագործել որեւէ մէկի հասցէին, թէեւ եղել են եւ հիմա էլ կան նմանները: Եւ հիմա՝ ամաչում եմ ինքս ինձնից: Սակայն, ինչպէս տղամարդավարի ասում է սփիւռքահայ վարկաբեկող Նայիրա Զոհրաբեանը՝ «Լաւ եմ արել», եւ ճիշդ տեղին:*

*Աղջիկ ջան խելքի արի, այդ ի՞նչ ես ասում, ո՞նց թէ Հայաստանի իշխանութիւնները երկիրը հեղեղել են հակառուսական քարոզչութեամբ, եւ աւելին՝ «Երիտասարդներին ուսուցանում են, թէ ինչպէս Ռուսաստանում իշխանութիւնը տապալել»:*

*Խնդրում եմ մէկ փաստ բերել Տիկին Մարգարիտ. ում, որտեղ, Երեւանի որ հաստատութիւնում են ուսուցանում, թէ ինչպէս տապալել Պուտինի իշխանութիւնը: Այդպէս օդի մէջ կրակել, վայրի-վերո ձաբռտուքներ դուրս տալը վայել չէ: Եւ դու, ի՞սկապէս այդքան միամիտ ես, որ մեր փոքրիկից էլ փոքր Հայաստանը կարող է նման բան անել: Ախր մանկապարտէզի երեխան էլ գիտի, որ «մեխի գլխին բռունցքով չես խփի, ձեռքդ կը կոտրես»: Այդ որ յիմարն է, որ հակառուսական քարոզչութիւն պիտի վարի՝ էն էլ Ռուսիոյ դէմ:*

*Յետոյ շարունակում ես կրկին առանց փաստերի, առանց անուններ տալու, թէ Հայաստանի իշխանութիւնները երկիրը վեր են ածել հակառուսական ուժերի յենակէտի, որ ռուսաստանցի բիզնեսմեններին դուրս են քշում, եւ, իբր լրատուամիջոցներն էլ կեղտաջուր են լցնում Ռուսաստանի, Պուտինի եւ յատկապէս ռուսաստանցի հայերի եւ քո վրայ:*

*Դարձեալ՝ առանց անուններ տալու, պարզապէս կանացի բամբասանք:*

*Ինչպէս ամէն մի խելամիտ մարդ, ես հասկանում եմ ձեր «փորացաւը», թէ այս ամէնը որտեղից է գալիս Տիկին Մարգարիտա: Ռուսական կայսրութեան նախագահը եւ դուք, որպէս նրա խօսնակ, 20 տարի շարունակ վարժուած էք եղել, որ ամէն մի մանր հարցի համար Հայաստանի գոյգ նախագահները վազեն ձեզ մօտ՝ թոյլտուութիւն ստանալու Պուտինից, որպէսզի ըստ այնմ լուծեն նոյնիսկ հասարակ մի խնդիր՝ առանց ժողովրդի կամքին նայելու: Հիմա ձեզ համար խորթ է, որ առանց քո նախագահի հետ խորհրդակցելու, Փաշինեանը ժողովրդի կամքին համահունչ քայլեր է անում եւ երկրում ստեղծում այնպիսի պայմաններ, որ երբեք չի իրականցուել նախորդ երեք նախագահների օրօք: Դուք պէտք է ուրախ լինէք, որ Հայաստանը ինքնուրոյն, առանց որեւէ մի ուժի միջամտութեան (իմա՝ ռուսական) արժանապատիւ յաղթանակ տարաւ ազերիների դէմ:*



*Փոխարէն անդրադառնալու այդ յաղթանակին, գոնէ մէկ-երկու տողով, դու թոյն ես թափում Հայաստանի վրայ Տիկին Սիմոնեան, նրա ղեկավարութեանն անուանելով «Րոպէական» իշխանութիւն: Ամօթ է: Ի՞նչ է՝ յոյս ունէք վերադարձնե՞լ նախորդ իշխանական համակարգը:*

*Մոռացէք, դա երբեք չի լինի: Ժողովրդական առածն ասում է՝ «Կաթից այրուողը՝ մածունն էլ է փչելով ուտում»: Ուշքի արի աղջիկս, Աւարտուել է **ՌՈԲԱ-ՍԵՐԺԱԿԱՆ** դաշինքը՝ իրենց կուսակցութեան հետ մէկտեղ:*

*Հայաստանի իշխանութիւններին ուղղուած լուտանքներիդ տարափն ու որակը Տիկին Սիմոնեան, բարոյական չափորոշներից բաւական ցածր են եւ այպանելի, նոյնիսկ փողոցային հայհոյանքի արժանի վերագրումներով:*

*Քստմնելի բառերի կոյտով ամբողջացած Մարգարիտայի գրած պարբերութեան մէջ, ահա թէ ինչ նախադասութեամբ է աւարտում այն այդ թշուառականը.*

*- ...Այն ամէնից յետոյ, ինչ դուք արել էք, Ռուսաստանը լիակատար բարոյական իրաւունք ունի **ԹՔԵԼՈՒ ՁԵԶ ՎՐԱՅ ԵՒ ՏՐՈՐԵԼՈՒ**...*

*Երանի ողջ լինէր ամուսնուդ՝ Տիգրանի հայրը, արաբկիրցի, իմ թաղեցի մեծանուն արուեստագէտ Էդմոն Քէոսէեանը, որ կարողանար զսպել քեզ, որպէսզի չգրես իր հայրենիքի (ոչ քո) հանդէպ նման եղկելի ու ցնորամիտ արտայայտութիւններ:*

*Հիմա պատկերացնում եմ, թէ ինչ հոգեկան ապրումների մէջ է Տիգրանի մայրը՝ շէնշող կին, դերասանուհի, երիտասարդ տարիներին Երեւանի թիւ մէկ գեղեցկուհի Լաուրա Գէորգեանը:*

*Ես դեռ շատ ասելիքներ ունեմ տիկին Մարգարիտա: Կարծում եմ մենք դեռ կը հանդիպենք մամուլում: Ես այսուհետեւ կրնկակոխ հետեւելու եմ քո բոլոր գրառումներին: Դու չգիտես Հայաստանը եւ նրա հպարտ քաղաքացուն: Քո իսկ խոստովանութեամբ դու էլ հպարտ ես քո հայրենիքով, որ Ռուսաստանն է, ի՞նչ գործ ունես Հայաստանի հետ: Դու միայն երկու անգամ ես մի քանի օրով Հայաստան այցելել, որոնցից մէկը՝ Պուտինի հետ...*

*Լաւ է, որ խելամիտ մարդիկ կան Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի Կազմակերպութեան (ՀԱՊԿ) մէջ, որոնց շնորհիւ, կազմակերպութիւնը հաղորդում է իջեցել մամուլում՝ հետեւեալ բովանդակութեամբ.*

*- Մարգարիտա Սիմոնեանի կարծիքը ամբողջութեամբ հակասում է ՀԱՊԿ քարտուղարութեան պաշտօնական դիրքորոշմանը:*

Massis Weekly

Volume 40, No. 29 Saturday, AUGUST 1, 2020

# PM Nikol Pashinyan: President of Azerbaijan Cannot Speak to Us in the Language of Threat



We have advised the President of Azerbaijan not to speak to us in the language of threat, this will lead nowhere, Armenian Prime Minister Nikol Pashinyan said in an interview with Russian RBC.

He believes this will lead nowhere. However, Pashinyan stated that, Azerbaijani President Ilham Aliyev has always adhered to the position that "Azerbaijan has a powerful army and is able to solve the Nagorno Karabakh conflict within 24 hours if necessary."

"They have been building this myth over the past 15 years. And they are nervous about the recent developments, because this myth was destroyed. This happened because the Armed Forces of Armenia gave a rebuff that no one would expect. Many did not expect that, even inside Armenia," the Prime Minister said.

"The reforms of the past two years implemented in Armenia, in general, and in the Armed Forces, in particular, turned very effective," Pashinyan added.

The Prime Minister added that the possibility of large-scale war could not be ruled out, as there were countries inciting tension. "This is first of all Turkey, which is inflaming the conflict. It has both current interests and historical reasons for this."

"Turkey has not refused from the policy of the genocide of Armenians. Turkey's President not only refuses to acknowledge the fact of the 1915 Armenian Genocide in the Ottoman Empire, but also justifies it. There is another factor. Just like the early 20th century, Turkey has a dream to control the South Caucasus. For the past 30 years, after the collapse of the USSR, they have been working consistently to fulfill this dream," Nikol Pashinyan stated.

Pashinyan praised Russia's "absolutely constructive" role in international efforts to resolve the Nagorno-Karabakh conflict. In that context, he implicitly urged Moscow to counter Turkey's efforts to fan Armenian-Azerbaijani tensions and eventually "take control of the Caucasus."

"If that becomes a reality, I think it is first and foremost clear to the Russians what geopolitical consequences that would have," he said.

"Russia cannot stay away from these events [in the conflict zone] because at stake are vital interests of not only Armenia but also the Russian Federation," added the Armenian leader.

The Prime Minister noted that the OSCE Minsk Group Co-Chairs played an important stabilizing role. He added that the actions taken by the Kremlin, the involvement of the Russian Ministry of Foreign Affairs and the General Staff of the Armed Forces played a key role in ensuring relative peace.

# Putin, Erdogan Discuss Armenian-Azeri Tensions

MOSCOW — Russian President Vladimir Putin warned against attempts to further heighten tensions in the Nagorno-Karabakh conflict zone when he spoke with his Turkish counterpart Recep Tayyip Erdogan by telephone on Monday.

The two men discussed the recent deadly clashes on the border between Armenia and Azerbaijan during the phone conversation which the Kremlin said took place "at the initiative of the Turkish side."

"Vladimir Putin stressed the importance of preventing any steps that could cause an escalation in tensions," the Kremlin reported in a statement.

"Both presidents spoke in favor of resolving the conflict through peaceful means, through talks.They expressed their readiness to coordinate efforts to stabilize the region," it said.

Erdogan's office also said the two leaders talked about the "Armenia-Azerbaijan tension" but gave no details.

Turkey has blamed Armenia for the hostilities on the Armenian-Azerbaijani border which broke out on July 12. It has pledged to continue to strongly support Azerbaijan in the Karabakh conflict, including with military assistance. In response, Armenia has branded Turkey a "security threat to Armenia and the region."

Russian Foreign Minister Sergei Lavrov urged Ankara to exercise restraint in its reaction to the Armenian-Azerbaijani skirmishes in a July 23 phone call with his Turkish counterpart Mevlut Cavusoglu.

# Amendment in Support of Demining in Artsakh Passes the House



WASHINGTON, D.C. – Today, the Armenian Council of America (ACA) welcomed the inclusion of the Speier-Cox-Krishnamoorthi amendment regarding demining assistance to Nagorno Karabakh (Artsakh) as part of H.R.7608 – Department of State, Foreign Operations, and Related Programs Appropriations Act, 2021 in the U.S. House of Representatives.

The bipartisan amendment, cosponsored by Representatives Gus Bilirakis (R-FL), Devin Nunes (R-CA), Brad Sherman (D-CA), Susie Lee (D-NV), Gil Cisneros (D-CA), John Garamendi (D-CA), Linda Sanchez (D-CA), Andy Levin (D-MI), Eleanor Holmes Norton (D-DC), Jim Langevin (D-RI), Tony Cardenas (D-CA), Anna Eshoo (D-CA), Adam Schiff (D-CA), Brad Schneider (D-IL), Grace Napolitano (D-CA), Judy Chu (D-CA), Carolyn Maloney (D-NY), Zoe Lofgren (D-CA), Jim Costa (D-CA), Jan Schakowsky (D-IL), Dave Cicilline (D-RI), Rashida Tlaib (D-MI), Ruben Gallego (D-AZ), Josh Gottheimer (D-NJ), Ilhan Omar (D-MN), Harley Rouda (D-CA), Juan Vargas (D-CA), Paul Tonko (D-NY), Max Rose (D-NY), Ted Deutch (D-FL), Jimmy Gomez (D-CA), Danny K. Davis (D-IL), and Dina Titus (D-NV), shifts $1.4 million to the USAID demining program in Nagorno Karabakh. It passed the House as part of an en bloc package of amendments by a vote of 223-194.

"We applaud Reps. Speier, Cox, Krishnamoorthi, Bilirakis and all the cosponsors of this important, bipartisan amendment that helps strengthen America's role as a force for good in the world. We will continue working with our friends in Congress to ensure that this vital, life-saving aid for Nagorno Karabakh is included in the final report this year and so that it serves as a precedent for the future until all of the old mine fields are cleared." stated ACA Washington D.C. Representative Taniel Koushakjian.

# Armenian Military to Closely Monitor Turkish-Azeri Drills



YEREVAN — The Armenian military said on Tuesday that it will closely watch joint Turkish-Azerbaijani war games that will start on Wednesday two weeks after deadly fighting on Armenia's border with Azerbaijan.

"Armenia's Defense Ministry and Armed Forces will be very attentively monitoring the course of and trends in joint Azerbaijani-Turkish military exercises scheduled for July 29 to August 10," the ministry spokeswoman, Shushan Stepanyan, told RFE/RL's Armenian service.

Continued on page 4

# Armenian, Russian Troops Train for Drone Warfare



YEREVAN (RFE/RL) -- Armenian and Russian troops are practicing how to deal with enemy military drones during a joint air-defense exercise that began in Armenia on Thursday.

According to the Armenian Defense Ministry, the command-and-staff exercise involves the commanders of a Russian-Armenian air-defense system and the Armenian army's separate anti-aircraft units as well as air force officers from the two states.

"During the exercise they will develop new ways of fighting against UAVs (unmanned aerial vehicles) for the purpose of improving the counter-drone system," the ministry said in a statement. They are simulating various "scenarios" of drone warfare, it said.

The joint air-defense system was set up in the late 1990s and upgraded by a Russian-Armenian treaty signed in 2015. It includes elements of a Russian military base stationed in Armenia.

The Defense Ministry statement also said that participants of the drill are looking into last week's deadly clashes on Armenia's border with Azerbaijan during which both sides used reconnaissance and attack drones. "The Armenian side is analyzing the enemy's tactics and actions of its air-defense detachments," it added.

The Armenian military claims to have shot down or intercepted 13 Azerbaijani drones during the hostilities that broke out at a border section on July 12 and left at least 17 soldiers from both sides dead. It demonstrated on Tuesday what it described as fragments of some of those Israeli-made UAVs.

A military spokesman, Artsrun Hovannisian, publicized on Friday a photograph of two Armenian officers standing next to a SkyStriker "suicide" drone manufactured by the Israeli company Elbit Systems. Hovannisian said earlier that the largely intact drone was brought down by an Armenian electronic warfare system.

The Armenian military also says that it used for the first time domestically manufactured attack drones during last week's hostilities. It claims that they destroyed at least one Azerbaijani tank.

# Serbia Confirms Suppling Weapons to Armenia



BELEGRAD -- Serbia's government on *Wednesday* acknowledged that Serbian defense companies have supplied weapons to Armenia. ***Deputy prime minister*** Rasim Ljajic said the weapons were sent to Armenia earlier this year.

"I can't say the name of the company. Two shipments of guns and rifles were made in May and June. Its value is less than a million euros [$1.1 million]." said Ljajic.

"National companies were not included in the submission," he said.

Ljajic pointed out that there are no sanctions imposed on Armenia by international institutions. "It is extremely difficult to reject the request unless there is an official sanction," he said.

A government-linked Azerbaijani news website, Haqqin.az, claimed on July 19 that Serbian-made mortars as well as ammunition for them were delivered to Armenia via Georgia.

Serbia's ambassador in Baku, Danica Veinovic, was summoned to the Azerbaijani Foreign Ministry in connection with the report. Deputy Foreign Minister Khalaf Khalafov was reported to tell her that the alleged arms supplies called into question Azerbaijan's "friendly relations" with the Balkan state.

In a statement by the Azerbaijani Ministry of Foreign Affairs, Deputy Foreign Minister Halef Halefov said Azerbaijan had reliable and verified information that a large amount of ammunition consisting of mortar and various caliber shells was sent from Serbia to Armenia and Azerbaijan expected an explanation from Serbia.

Meanwhile, Georgia's Foreign Ministry denied the alleged transit of Armenia-bound weapons through Georgian territory. It denounced the Haqqin.az claim as "disinformation" aimed at undermining "Georgian-Azerbaijani strategic partnership."

Azerbaijan itself has purchased billions of dollars worth of heavy weapons from Russia, Israel, Turkey and other countries over the past decade in a bid to gain a military superiority over Armenia.

# Armenian Soldier Killed by an Azerbaijani Sniper Near Tavush Region



YEREVAN — After a lull that lasted for several days on the Armenian-Azerbaijani border, an Armenian soldier, Ashot Gevorkovich Mikaelyan was killed by an Azerbaijani sniper last night .

The Armenian Ministry of Defense reports that the incident was registered at the combat position of one of the military units deployed in the northeastern direction, which, in fact, is the Tavush direction, which became the center of hostilities two weeks ago.

Fierce fighting at the volatile border section broke out on July 12, after Azerbaijani infiltration attempt trying to seize Armenian front line positions in the mountainous area. At least 12 Azerbaijani soldiers, including a general, and four Armenian servicemen died before the clashes involving artillery fire and drone attacks largely stopped on July 16.

# Official Car of the Armenian Embassy in Germany Set on Fire



BERLIN -- An official car of the Embassy of the Republic of Armenia in Germany was set on fire shortly after midnight on July 23, the Embassy said in a statement.

"The German Federal Foreign Office, the Berlin Police and respective police agencies have been officially notified about the incident. At the moment the police and experts conduct investigation, observing the possibility of arson", the statement said.

# 25 Arrested After Armenian-Azeri Violence In Moscow

MOSCOW -- Police in Moscow made at least 25 arrests on Friday following overnight violent attacks involving local Armenians and Azerbaijanis as a result of last week's deadly fighting on the Armenian-Azerbaijani border.

The violence erupted late on Thursday, with various groups of men reportedly attacking other people and businesses on ethnic grounds.

An amateur video posted on the Internet showed a group of Azerbaijanis allegedly vandalize a car with Armenian license plates and beating its driver. In another video, a group of people beat up an allegedly elderly Armenian man.

A Russian-Armenian activist, David Tonoyan, reported at least five attacks on Armenians which he said mostly occurred in Moscow's southern suburbs. One Armenian was stabbed and hospitalized as a result, he said, adding that the Russian police beefed up security in those areas.

# Lebanese MPs Propose April 24 be Designated a National Day to Commemorate Genocides



BEIRUT — Today, a number of members of the Lebanese Parliament from various parties signed a joint resolution authored by Samy Gemayel, Member of Parliament and President of the Kataeb Party, calling for legislation that declares April 24 a national day commemorating the arrests, attempted extermination, and forced deportations by the Ottoman Empire of Armenians, Syriacs, Assyrians and other minorities during and after the first world war.

The resolution also stipulates that all schools, institutions, and universities devote the first session of the 23rd of April to the historical events that took place in 1915 to educate students about the dangers of racism, discrimination of all kinds and the importance of safeguarding human rights.

In addition, the resolution states that the Armenians, Syriacs, Assyrians and other minorities affected by the Ottoman Empire's genocidal policy, who fled to Lebanon for refuge, constitute an essential component of the Lebanese people and are an integral section of Lebanese society. The events of 1915 coincided with the great famine that struck Mount Lebanon between the years of 1915–1918, in which one-third of the country's population at that time (between 120,000 and 200,000 people) perished.

The legislation, coordinated with the S.D. Hunchakian Party, was initiated by Araz Bedros, a Lebanese-Armenian political activist and op-ed columnist, who worked closely with Gemayel and the Kataeb Party in drafting the proposed law.

"With persistence and determination, we can reach our goals," said Bedros. "As a descendent of the Armenian Genocide, I feel like all Genocides are mine to commemorate. After all, keeping silence is a crime and an encouragement for new massacres. It is time for future generation to be educated about the dark Ottoman era. We shouldn't have to explain what a genocide is and the way Armenians were tortured and deported. These crimes should be taught in schools, to cultivate a future generation against all genocides and humanity who would never tolerate another massacre. I am hopeful that the Lebanese parliament and Armenian MP's continue what we started and rush the bill to a vote," she added.

The Lebanese Parliament recognized the Armenian Genocide in May 2000.

# Uruguay's Political Parties Condemn Azerbaijan's Attacks on Armenia



MONTEVIDEO – The National Party, which leads the ruling coalition in Uruguay, issued a statement on July 22 regarding Azerbaijan's attacks on Armenia since July 12.

The traditional National Party, also known as the White Party, called on both sides to respect international agreements and establish peace in the region based on the right of peoples to free self-determination.

In turn, the executive committee of another Uruguayan traditional party, Colorado, which is part of the ruling coalition, issued a statement condemning Azerbaijan's attacks on Armenia and calling for an end to militaristic rhetoric and peace through negotiations. The Colorado Party, which ruled in Uruguay for over a century, has expressed its support for the Armenian people, who have the right to exercise their sovereignty in freedom and peace.

Days ago, the Broad Front of Uruguay also issued a statement in which it expressed its "total disapproval of the warlike actions carried out by the Azerbaijani Armed Forces against the Republic of Armenia," the "rejection of the expressions of the Turkish government that they support the actions of Azerbaijan," and its solidarity with Armenia.

The opposition left-wing People's Union party noted in a statement that these Azerbaijani attacks pose the danger of starting a large-scale war in a region of constant instability. "The Armenian people have the right to self-determination, and one should not forget that all mankind owes a debt to the Armenian people, against whom genocide was committed at the beginning of the last century," the People's Union party notes.

Esther Mkrtumyan Armenian Ambassador to Uruguay, in an interview with MassisPost affilaite in Uruguay, Radio Arax, thanked the Uruguayan government and people for continued support of the Armenian nation and people. The Ambassador informed the radio audience that Armenia suffered a blatant attack from Azerbaijan on July 12, which was repeated on July 13, 16 and 20. "For us [Armenian Government] this attack was not expected, because it is the first time the truce has been violated to this extent against the sovereign Armenian territory. These artillery attacks and infantry raids have been carried out in a flagrant violation of the truce that has governed the region for 25 years."

In an interview with Massispost, the Chairman of the Social Democrat Hunchakian Party Uruguay Executive Committee, Daniel Manuelian, reported that various organizations of the Armenian community issued a statement rejecting the attacks by Azerbaijan, which has generated significant repercussions since the political forces have shown solidarity with Armenia and its people, demonstrating Uruguay's support for peace and defending the rights of the Armenian people to live freely on their land. Manuelian reported that this new expression of firmness from Uruguay will surely generate a strong diplomatic reaction from Azerbaijan and Turkey.

The situation on the Tavush section of the Armenian-Azerbaijani state border escalated sharply after midday on July 12, when, according to the Armenian Defense Ministry, the Azerbaijani Armed Forces tried to cross the Armenian state border in the direction of Tavush in a UAZ vehicle. Over the past week, as a result of hostilities, during which the sides used artillery, drones and other military equipment, according to official data, 11 military men were killed from the Azerbaijani side, including a general, a colonel and other officers, and one civilian, four from the Armenian side: military personnel – two officers and two conscripts.

Since the end of last week, the border has remained relatively calm. However, late in the evening on July 21, the Armenian Defense Ministry announced that the Armenian Armed Forces were repelling another attack of the enemy special forces in the direction of the Armenian post "Fearless" ("Anvakh") on the Tavush section of the Armenian-Azerbaijani border.

# Three Timely Grants of the Society for Armenian Studies Are Underway

Despite the impact of the ongoing pandemic, the Society for Armenian Studies (SAS) has worked hard to expand its efforts to foster Armenian Studies through different initiatives. Three existing and new competitive grants have been announced, with deadlines scheduled for September. The first two are open to students who are current members of the SAS.

The Fall 2020 edition of the SAS Graduate Research and Conference Grants for M.A. and Ph.D. students is underway. The amount of grants will be up to $1,000 per applicant and the deadline is September 15, 2020.

Due to the current restrictions on travel, applicants should also specify an alternative plan if they request funding for travel. Funding will also be available for research-related expenses (archival and library materials, et cetera).

These grants have been made possible by the institutional support of twelve Armenian Studies chairs, programs, centers, and libraries in the United States and abroad.

The Nina G. Garsoïan Graduate Research Grant for Ancient and Early Medieval Armenian History for M.A. and Ph.D. students has been recently launched. This grant of up to $1,000 will be awarded on an annual basis to a graduate student in the field. The deadline for this year grant is also on September 15, 2020.

Nina G. Garsoïan is a world renowned Byzantinist and Armenologist who was the dean of the Princeton University Graduate School and the first holder of the Gevork M. Avedissian Chair in Armenian History and Civilization at Columbia University. The grant is funded by Dr. Levon Avdoyan, who recently retired as the Area Specialist for Armenia and Georgia at the African and Middle Eastern Division of the Library of Congress. Dr. Avdoyan received his Ph.D. from Columbia University in New York in ancient and Armenian history under the supervision of Prof. Garsoïan.

The third grant addresses graduate students and post-graduate scholars, both SAS and non-SAS members. It is designed to support scholarship in the field of Armenian Studies that focuses on racial matters with the intention to encourage filling the gap of research on race. Two grants of up to $500 per applicant will be awarded. The deadline is September 30, 2020.

The SAS welcomes proposals for any research project that grapples with the role race has played in Armenian history across time and space, and particularly examines the impact of racial policies and racism on Armenian communities in the United States and/or explores the relations and entanglements between Armenians and Black communities in the United States. Researchers are highly encouraged to engage with the work of Black, indigenous, and other scholars of color and with critical race theory.

Applications can be made : https://societyforarmenianstudies.com/2020/07/28/society-for-armenian-studies-grant-on-race/.

For further information write to Bedross Der Matossian, at bdermatossian2@unl.edu or visit the SAS website at http://societyforarmenianstudies.com/.

# Armenian Educational Benevolent Union Ships Hospital Beds to Armenia





GLENDALE -- In collaboration between the Armenian Educational Benevolent Union (AEBU) and Adventist Health Glendale, 36 hospital beds, donated by the Glendale Adventist Hospital in late December 2019, were shipped to Yerevan, Armenia with AEBU securing the logistics and the transportation expenditures.

These specially-designed beds were delivered to the Ministry of Health of Armenia and will be distributed to hospitals in Armenia in order to facilitate much-needed upgrades to the health services provided by the hospitals in the regions, especially at a time when every hospital bed counts in the fight against COVID-19 pandemic.

"We thank Adventist Health Glendale for this donation and are grateful to them for their continued support of the health care system in Armenia through numerous assistance programs implemented over the course of many years. We are also pleased to have AEBU spearhead this initiative." said Tateos Koroghlian a member of the AEBU board.

On this occasion we would like to thank Dr. Krikor Krikorian for his generous donation and Armenia Artsakh Fund for making the shipping arrangements.

For more information visit aebu.org

# Over $800,000 Raised During Armenia Fund's "Covid-19: United Against the Pandemic" Fundraising Campaign




YEREVAN — On March 18th 2020, the Hayastan All-Armenian Fund launched the "COVID-19 Armenia: United Against the Pandemic" global Armenian fundraising campaign with all proceeds directed to providing urgently required high quality medical supplies to the Armenia's Healthcare Sector.

The campaign was implemented in close cooperation with the President of the Republic of Armenia, the President of the Republic of Artsakh, the Office of the High Commissioner for Diaspora Affairs, the RA Ministry of Health and the Ministry of Foreign Affairs.

At the close of the campaign, on July 22nd, $800,030 was raised, of which $695,244 was used to purchase large-scale medical supplies and equipment, provide monthly food packages for vulnerable elderly citizens and return stranded compatriots to Armenia.

Significant in-kind contributions of medical supplies and equipment were also received from the Fund's local affiliates in various countries which were transferred to the Ministry of Health.

The remaining funds will be directed to supporting the Healthcare Sector.

The Fund extends its sincere gratitude to the more than 1,000 individual donors from 18 countries around the world, global Armenian communities, organizations, the entire network of the Fund and all partners for their continued trust and support.

# Calouste Gulbenkian Foundation Announces "Be Heard" Prize Winners

LISBON — The Armenian Communities Department of the Calouste Gulbenkian Foundation launched the Be Heard prize in April 2020. This unique initiative – the first of its kind – gave Armenian speakers around the world the chance to think and express themselves on a range of critical issues facing humanity. Speakers of the Armenian language were invited to submit contemporary and innovative audiovisual and literary productions of various kinds that brought forth much-needed discussions tackling contemporary global issues.



We received 165 applications in total, from 18 countries and in various media, from song to animation, from caricature to poetry, and from essay to mixed-media productions… The youngest applicant was 8 years old and the oldest 83. An internal jury of 7 people evaluated all the submissions with great interest and 60 prizes were awarded. Due to the high number of excellent submissions, the number of awards was increased from the 50 that were initially announced, to 60! There were 25 winners from Armenia and 35 winners from the Diaspora. These numbers are in proportion with the number of applications received.

One of the main purposes of this prize was to get people of all ages and backgrounds to think in the Armenian language and to use it as a mode of expression – and especially to use it creatively and differently. This, combined with the potential of the works submitted, and the contemporariness of the ideas expressed, were the jury's main selection criteria.

We are especially pleased to see that many young people applied to the Be Heard prize with their creative work, in which Armenian was the main medium of expression.

# Armenian Military to Closely Monitor

**Continued from page 1**

Defense Minister Davit Tonoyan told the Russian ambassador in Yerevan, Sergei Kopyrkin, later in the day that Armenian army units as well as a Russian-Armenian military contingent are "continuing to constantly monitor and analyze" Turkish-Azerbaijani military activities "with all reconnaissance means" at their disposal. They remain "prepared for any development of the situation," Tonoyan said, according to his press office.

The exercises will reportedly involve heavy artillery, warplanes and helicopter gunships and take place in various parts of Azerbaijan. The Azerbaijani and Turkish militaries have not specified the number of participating troops.

The Azerbaijani Defense Ministry said on Monday that ground forces of the two states will simulate joint operations in Baku and Azerbaijan's Nakhichevan exclave from August 1-5. It said separate drills involving the Turkish and Azerbaijani air forces will be held in these and three other locations from July 29 through August 10.

The Armenian Foreign Ministry expressed concern over the drills. A ministry spokeswoman said they are part of Baku's "provocative actions" aimed at obstructing international mediators' efforts to de-escalate the situation at the Armenian-Azerbaijani border and kick-start talks on resolving the Nagorno-Karabakh conflict.

Hours after the announcement of the Turkish-Azerbaijani exercises, Turkish President Recep Tayyip Erdogan telephoned his Russian counterpart Vladimir Putin to discuss the Armenian-Azerbaijani border clashes. According to the Kremlin, Putin "stressed the importance of preventing any steps that could cause an escalation in tensions" in the Karabakh conflict zone.

Arkady Dubnov, an independent Russian political analyst, said on Tuesday that Russia continues to regard the region as its geopolitical backyard and would therefore not tolerate Turkish military intervention in the long-running conflict.

"Erdogan certainly realizes that this would be simply unacceptable to Moscow," Dubnov told RFE/RL's Armenian service.

Dubnov suggested that Erdogan assured Putin on Monday that the upcoming exercises are not a prelude to Turkish military presence in Azerbaijan and will not degenerate into a Turkish-Azerbaijani offensive against Armenia. The war games are first and foremost a publicity stunt designed to cement Erdogan's self-image as "the supreme Islamic leader of the world," speculated the pundit.

# Պոլսահայ Իրադարձութիւններ Անցեալի Լոյսին Տակ

«Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»: Հայերէնի թարգմանուած առաջին նախադասութիւնը, Սողոմոն իմաստունի «Գիրք Առակաց»էն:

ԱՐԻՍ ՊՕՏՕՏՕՂԱՆ

*Հայ գիրերու գիւտին հանճարներ Մեսրոպ Մաշտոց եւ Սահակ Պարթեւ 371 թուականին միասնաբար պայքարեցան պարսիկներու դէմ Մուշեղ Մամիկոնեանի հետ:*

*Արշակ Բ. Թագաւորը, Վահան Մամիկոնեանի եւ Մերուժան Արծրունիի դաւաճանութեամբ գերի ինկաւ պարսից Շապուհ արքային: Սպարապետ Վասակ Մամիկոնեանի սպանութենէ ետք իր որդին Մուշեղ Մամիկոնեանը սպարապետութիւնը ստանձնելով փրկեց հայրենիքը եւ հաւատքը:*

*Սամուէլ Մամիկոնեանը սպանեց դաւաճան հայրը եւ իր մօր արիւնով յանգեցուց կրակապաշտութեան վերջին կրակը:*

*Երբ հայոց պատմութեան էջերը կը պրպտենք յաճախ կը հանդիպինք նման երեւոյթներու:*

*1880-ական թուականներուն, անմահ վիպագիր Րաֆֆին գրած էր հետեւեալը.*

*«Անտառի ծառերը լուր տարան իրենց թագաւորին ըսելով թէ յայտնուել է մի գործիք որ մեզ անխնայ կը կտորէ:*

*-Ինչպէ՞ս է կոչւում այդ գործիքը, հարցուց թագաւորը:*

*-Տապար, պատասխանեցին ծառերը:*

*-Ինչպէ՞ս է կազմուած ան, հարցուց թագաւորը:*

*-Գլուխը երկաթից է, բայց կոթը փայտից, պատասխանեցին ծառերը:*


ՀՆՉԱԿ

*-Դա շատ վտանգաւոր գործիք է, պատասխանեց թագաւորը, երբ կոթը մեզանից է:*

*Միշտ ունեցած ենք չար եւ վնասակար կոթերը:*

*Ուր կը տեսնենք հայրենիքը եւ ազգը օտարի ձեռքը մատնելը, այնտեղ խառն է եղել հայի մատը:*

*Ուր կը տեսնենք հայ թագաւորի գահընկեցութիւնը եւ անոր գաւազանը օտարի ձեռքը յանձնելը, այն տեղ խառն է եղել հայի մատը:*

*Ուր կը տեսնենք կրօնքի, ազգութեան եւ սուրբ եկեղեցւոյ դաւաճանութիւնը, խառն է եղել հայի մատը:*

*Մի խօսքով ամէն հալածանքների, եղեռնագործութիւնների եւ բարբարոսութիւնների մէջ միշտ գործել է հայի տապարը:*

*Հայը ինքն է փորել իր ազգային շինուածքի հիմքը եւ ինքն իր ձեռքով է կործանել իր սուրբ եւ նուիրական հաստատութիւնները:*

*Ի՞նչու ենք մեղադրում օտարներին»:*

*Նոյն թուականներուն պատրիարք ընտրուեցաւ Արմաշու վանահայր Խորէն Աշըգեան:*

*Ան տարբեր վարքագիծ մը ունէր բաղդատմամբ իր նախորդին՝ Ներսէս Վարժապետեանին:*

*Ներսէս պատրիարքի ձեռնակներուն ընդդէմ գործած եւ է եւ հայ ներազգային խնդիրներուն մէջ ալ դերակատարութիւն մը չէր ունեցած: Իր կողքին էր միայն Ազգային Ժողովի ատենապետ Մաքսուտ Սիմոն Պէյը:*

*Աշըգեան եւ Մաքսուտ, դպրոցներու բարոյական կեանքը ի սպառ խորտակելու համար, սիրայօժար ընդունեցին կառավարութեան կողմէ պարտադրուած դասագիրքերու երկար ցուցակ մը, որոնցմէ դուրս ոչ մէկ վարժարան կարող էր ուրիշ դասագիրք գործածել:*

*Իրենց ազգադաւ դիտումներուն արգելք հանդիսացող բոլոր անձնաւորութիւնները մատնեցին, որպէսզի կարենան ազատ շունչով իրենց շահատակութիւնները առաջ տանիլ:*

*Որքան ծանօթ է մեր ներկայ վիճակին:*

*Երբ նայինք 2020-ական թուականներէն, մեծ տարբերութիւններ չկայ պոլսոյ հայութեան համար:*

*Հիմա ալ ինքզինք ազգային ատենապետ հռչակող կարգ մը մարդիկ կ՛ուզեն վարժարանները փակել:*

*Փոխանակ Վաքըֆներու ընտրութիւնները իրականացնելու համար աշխատելու, սեփական շահերը ազգի շահերէն առաջ դնելով, ճիշդ ալ իրենց վայելած ձեւով, կարծես արքայատոհմի մը նահապետները ըլլան, իրենց ընտանիքի անդամները կը նշանակեն իբր թաղական:*

*Քաղաքական, կրթական, տնտեսական, մշակութային, մարզական եւ նման բնոյթի զանազան մարզերէ ներս պոլսահայ կեանքը զարգացնելու փոխարէն աւելի «կարեւոր» գործերով զբաղուեցան: Հաւանաբար աշխարհասփիւռ հայութեան կալուածներով ամենահարուստ համայնքին դպրոցները դրին տնտեսական ճգնաժամի մը դիմաց:*

*Դարեր շարունակ մեր պատմութեան էջերը լեցուն են վատ եւ լաւ մարդոցմով: Կասկած չկայ որ այս օրերն ալ պիտի յիշատակուին ապագային: Դժբախտաբար բնաւ լաւ պիտի չի յիշուին համայնքին այսօրուան կառավարիչները:*

*Վերյիշենք յօդուածի սկզբին «իմանալ զբանս հանճարոյ» նախադասութեան միտքը եւ անդրադառնանք, Գրիգոր Օտեանի օր մը Ազգային Ժողովի ատենապետի աթոռէն կատարած յայտարարութիւնը.*

*«Ան հայը , որ իր պետական պաշտօնին ընծայած դիւրութիւններէն օգտուելով իր շահերուն կը զոհէ այս խեղճ ու տարաբախտ ազգը, անիծեա՜լ ըլլայ, երի՜ցս անիծեալ»:*

*Ամէն:*

********

*Աղբիւրներ.*

*- Հնչակ, 1894 թիւ 8.*

*- «Նոր Կեանք», 1898 թիւ 15.*

*- Ա. Արփիարեան, Պատմութիւն ԺԹ դարու Թուրքիոյ Հայոց Գրականութեան.*

*- www.pubhtml5.com/aawx/evzk Ջահակիր - Հայկ Աւագեան - Գահիրէ*

«ԱԿՕՍ»

# Այա Սոֆիա Տաճարը Եւ Հայը

ԴՈԿՏ. ՄԻՆԱՍ ԳՈՃԱՅԵԱՆ

*Ս. Սոֆիա - Այա Սոֆիա - տաճարի խնդիրը եւ անոր կրկնակի ու եռակի անգամ զաւթումն ու սրբապղծումը թուրք ցեղերու եւ յետագային թրքացուած փոքր ասիացիներու կողմէ, հայութեան զգացումները յուզող հարց մըն է: Նախ պէտք է առանց բառերը խնայելու ըսենք թէ Եւրոպայի թագաւորները, իշխաններն ու հսկայածաւալ Սրբազան Հռոմէական Կայսրութիւնը (Holy Roman Empire) փոխանակ քրիստոնէութեան մէջ աղանդներ ու «հեռետիկոսներ» փնտռելու մոլուցքով տարուելու՝ ատենին գրեթէ ջանք չթափեցին Բիւզանդական կայսրութիւնը փրկելու ուղղութեամբ:*

*ԺԱ-ԺԳ դարերու Եւրոպայի տարածքին սկսած «սուրբ հողերը ազատագրելու» լոզունգները եւ անոր հետեւանքով Խաչակրաց արշաւանքը պարզապէս խղճուկ փորձեր եղան եւ նպատակէն շեղելով վերածուեցան Մերձաւոր Արեւելքը գաղութացնելու նոր արշաւանքի մը, որմէ ոչ պակաս վնասուեցան նաեւ քրիստոնեաները:*

*Պատմական փաստ է որ Բիւզանդական կայսրութեան վերնախաւը ինք իր գերեզմանը փորելէ ետք չդիմացաւ Սուլթան Մէհմետ Բ.ի յամառ հարուածներուն: Այսպիսով, մէկ կողմէն բուն Եւրոպայի անհեռատեսութիւնն ու անփութութիւնը, միւս կողմէն կայսրութեան արեւելքը գտնուող յարաբերաբար կայուն եւ «թրքադիմացկուն» հայկական պետութիւնը տկարացնելով պայմաններ ստեղծեցին Կոստանդնուպոլսոյ անկումին եւ անոր հրաշալի խորհրդանշան Ս. Սոֆիա տաճարին անկման, խեղաթիւրման ու կրօնական դիմագծի փոփոխութեան:*



*(Ի՞նչ պիտի զգայինք այսօր, եթէ ականատես ըլլայիք Փարիզի Ս. Աստուածամօր տաճարի եւ կամ Քէօլնի տաճարի վրայ մինարէթներու երեւումին...: Այս ընթացքով հեռու չեն երեւար այդ օրերը):*

*Այս փառաւոր տաճարը Բիւզանդական կայսրութեան Յուստինիանոս Ա.ի հրաշակերտն էր՝ 532-537 թուականներուն: Փառաւոր այս կառոյցը կ՛իշխէ ամբողջ Պոսֆորի նեղուցին վրայ՝ իբրեւ Աստուծոյ պահապան հրեշտակ: Ս. Իմաստութեան տաճարի (սոֆիա= իմաստութիւն, յունարէն) ամենէն աչքի զարնող հատուածը անոր հսկայական գմբէթն է: Ըստ բիւզանդական եւ հայկական աղբիւրներու, անոր կառուցման մէջ ներդրուած են նաեւ հայկական ճարտարապետութեան ատենի յայտնի քարգործ վարպետներու հնարքները:*

*Հայութիւնը պէտք է արդար պարծանքը ունենայ, իսկ քրիստոնեայ աշխարհն ալ ազնուութիւն ու պարկեշտութիւն ցոյց տայ նշելու թէ ներկայիս գմբէթը Տրդատ հայ ճարտարապետի գործն է: Վերջինս Անիի Բագրատունեաց թագաւորութեան գլխաւոր ճարտարապետն էր, որուն կը պատկանին Շիրակի մէջ տակաւին կանգուն մնացած տասնեակ մը կառոյցներ, ինչպիսիք են Անիի Կաթողիկէ Մայր տաճարը, Մարմաշէնի եկեղեցին եւ այլ հոգեւոր ու աշխարհիկ շինութիւններ:*

*Այա Սոֆիա տաճարը լուրջ վնասուածք ստացած էր 10-րդ դարուն պատահած ահաւոր երկրաշարժի մը հետեւանքով՝ գրեթէ քանդուելու վիճակին հասցնելով գմբէթը: Կ.Պոլսոյ մէջ գտնուող հայազգի գիտնականներ եւ ազնուական ընտանիքներու հետնորդներ ու զինուորականներ խորհուրդ տուած էին կայսրին Հայաստանէն հրաւիրել գլխաւոր ճարտարապետ Տրդատը, որ 989-992 թուականներով հանճարեղ լուծումներով վերականգնեց գմբէթը: 1038 տարիէ ի վեր կանգուն է անիկա եւ պատկառանք կ՛ազդէ ամբողջ շրջապատին վրայ:*

*Քրիստոնէական այս հպարտ կառոյցը խորհրդանշանականօրէն մզկիթի վերածուելէ ետք, 1935-ին դարձաւ թանգարան: Իսթանպուլ այցելող ամէն զբօսաշրջիկի առաջին ցանկութիւնը կ՛ըլլայ այցելել այս կոթողը՝ մահմետականները ներքին հրճուանքով, քրիստոնեաները ներքին թախիծով, իսկ հայերս մելամաղձոտ հպարտութեամբ: Ոչ մէկ տեղ կը յիշուի տաճարի իւրայատուկ գմբէթի ճարտարապետին անունը, բայց կը յիշուի Մէյմար (շինարար) Սինանի անունը, որ սուլթանի հրամանով աւելցուց չորս մինարէթները: Ճարտարապետ Սինան հայազգի է, այդ մասին կան յստակ տուեալներ, բայց թրքական միջավայրը եւ համապատասխան մարմինները այդ մասին լուռ կը մնան, նոյնիսկ կը փորձեն ժխտել Սինանի հայ ըլլալը: Թրքական սովորական կկու թռչունի բնազդ: Կկուն ուրիշի հիւսած բոյնին մէջ կ՛ածէ իր ձուերը եւ կը տիրանայ անոր...:*

*Արժանապատուութենէ զրկուած, աւելի ճիշդ՝ իր վարկը հողին հաւասարցուցած Եւրոպայէն ու մնացեալ քրիստոնեայ աշխարհէն ոչ մէկ լուրջ բողոք լսուեցաւ սուլթան Էրտողանի յանդուգն քայլէն ետք:*

*Յիշեցնեմ թէ Օսմանեան թուրքերու գրաւումներէն ետք երեք Ս. Սոֆիա եկեղեցիներ մզկիթի վերածուեցան՝ մէկը Իսթանպուլի մէջ, միւսը Տարսոնի մէջ (Կիլիկիա*) եւ երրորդը Կիպրոսի Նիկոսիա մայրաքաղաքի թրքական գրաւեալ մասին մէջ...*

*Արդեօք Մարգարէն գոհ պիտի մնա՞ր այս կերպարանափոխութիւններէն...*

*(*)Սա այն տաճարն է, ուր թագաւոր օծուեցաւ Լեւոն Բ. Իշխան՝ դառնալով Լեւոն Ա. Թագաւոր:*

# Ի Յուշ Մեծ Պատմաբանին (1841-1918)
# Մաղաքիա Պատրիարք Օրմանեանի «Ազգապատում» Երկին Շարունակութիւնը

ԴՈԿՏ. ԶԱՒԷՆ Ա. ՔՀՆՅ. ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ

## Ծրագիրը

*Շարունակելու համար մեծանուն Մաղաքիա Պատրիարք Օրմանեանի մեծարժէք »Ազգապատում« երկը, հաւատք եւ յարատեւ աշխատանք կը պահանջէր, որուն ձեռնարկեցի որպէս երախտարժան աշխատանքս ի յիշատակ մեծ հեղինակին, որուն երեք հատորները հասցուցեր էր մինչեւ 1910 թուական: Շարունակող մը չկար, ես ալ չկայի մինչեւ որոշեցի ձեռնարկել զայն եւ կարծեմ յաջողեցայ, հակառակ ինձմէ շատ աւելի երեց բարձրաստիճան հոգեւորա- կաններուն «անկարելի»նկատած փորձին:*

*Իմ աշխատանքը եղաւ երեք ստուար հատորներով, հրատարակուած Ամերիկայի Արեւելեան Թեմի հովանաւորութեամբ 1995, 1997, 2003 թուական- ներուն, միասնաբար ներկայացնելով Օրմանեանի երկին Չորրորդ Հատորը, ուղղակի շարունակելով եւ ընդգրկելով 20-րդ դարու լրիւ պատմութիւնը Հայ Եկեղեցւոյ եւ ազգին, հետեւելով Օրմանեանի ծրագրին, մեթոտին եւ ծաւալին: Օրմանեան Պատրիարք վախճանեցաւ 1918 թուին, որուն յիշատակին կ՚ընծայեմ սոյն գրախօսականը:*

*Ծրագիրը համընդհանուր եւ մանրամասնեալ ըլլալուն համար անհրաժեշտ էր լայնածաւալ աղբիւրներու օգտագործումը, միշտ ի մտի ունենալով աշխա- տանքի տարածքին սահմանը, չկորսնցնելու համար նպակադրեալ ծրագրին կեդրոնական կորիզը: Անշուշտ միակ հեղինակի մը վրայ մնալով ամբողջ գործին ծանրութիւնը, դժուարութիւններ եւ օրհնութիւններ միանգամայն գիրար լրացուցին քննարկումներուս ընթացքին: Բարեբախտաբար անձնական գրադարանս ճոխ էր եւ հիմնական աղբիւրները երբ կը ձեռնէի, ուրիշներ գրադարակներէս լեզու կ՚ելլէին: Մէկը միւսին վկայակոչելով հիմնական գործը կարողացայ ծրագրել:*

*Անշուշտ, խնդրանքիս վրայ պակսած աղբիւրներ եւ մանաւանդ յատուկ վաւերագիրներ հոգեւորական հայրեր ուղարկեցին՝ գլխաւորութեամբ Գարեգին Արքեպիսկոպոս Ներսիսեանի, Արարատեան Թեմի փոխանորդին եւ այժմու Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Կարեւորագոյն վաւերագիրները օգտագործեցի Հայաստանի Հանրապետութեան անկախացումէն ետք այժմ հանգուցեալ Սանդրօ Բեհբուդեանի խմբագրութեամբ Երեւան հրատարակուած մեծածաւալ հատորներէն՝ իւրաքանչիւր Կաթողիկոսի լիակատար արխիւներով:*

## Գիրք Ա. (1900-1930)

*Աշխատանքիս առաջին հատորը (1995) կը բովանդակէ մեր մօտաւոր անցեալի Հայ Եկեղեցւոյ եւ ազգին երեսնամեայ դժուար եւ դժբախտ պատմու- թիւնը՝ 1900-1930, գլխակարգութեանը ներքեւ Տ.Տ. Մատթէոս Բ. Իզմիրլեան եւ Տ.Տ. Գէորգ Ե. Սուրէնեան Ամենայն Հայոց Կաթողիկոսներու: Համաշխարհային Ա պատերազմի, Օսմանեան Թուրքիոյ Հայոց վրայ գործադրած ցեղասպանութեան,*



*Ատանայի ջարդին, եւ ապա Խորհրդային Միութեան անտանելի առաջին տասն- ամեակի ընթացքը առաջին գիրքիս լրիւ բովանդակութիւնը կազմեցին, որոնց հետեւանքը պիտի ըլլար, եւ սակայն չեղաւ, բնաջնջումը հայ ժողովուրդին, Հայ Եկեղեցւոյ նուիրապետական կեդրոններուն, Թուրքիոյ Պատրիարքութեան, Սիսի Կաթողիկոսութեան եւ Արմաշու Դպրեվանքին քայքայումն իրենց անհաշուելի հետեւանքներով, հարիւրաւոր վանքերու եւ եկեղեցիներու բռնագրաւումներով եւ մտաւորական փաղանգին եւ եկեղեցականութեան նահատակութեամբ: Այս բոլորը ներքին մանրամասնութեամբ գրուած են հատորին մէջ:*

*1918 թուի զինադադարէն ետք եւ Սարդարապատի մարտի յաղթանակով Հայաստանի առաջին Հանրապետութիւնը հռչակուեցաւ կարճ ժամանակի մը համար: Երկու տարին չլրացուցած, Սովետական համայնավար պետութիւնը իր թաթը տարածեց Կովկասի վրայ եւս, ու Հայաստան դարձաւ ենթակայ 15 Հանրապետութիւններէն մին: Թուրքիոյ կործանարար եւ Սովետներու բռնի եւ անկրօն տիրապետութիւնները հաւասարապէս ճակատագրական եղան Հայաստանի եւ Հայ Եկեղեցւոյ համար:*

*Այս բոլորը համադրելու համար անկախ ու վստահելի աղբիւրներու կարիքը ունէի առաջին գիրքիս պատրաստութեան համար: Բարեբախտաբար եղեռնէն ազատած Արմաշական մեծ հոգեւորականներ իրենց յուշերը հրատարակեցին, ինչպէս, Դուրեան Պատրիարք, Զաւէն Պատրիարք, Թորգոմ Պատրիարք, Բաբգէն Կիւլէսէրեան Կաթողիկոս, Գրիգորիս եւ Ղեւոնդ Արքեպիսկոպոսներ, եւ նաեւ յայտնի մտաւորականներ Վահան Թէքէեան եւ Արշակ Ալպօյաճեան: Անոնց հայթայթած տեղեկութիւնները գերազանց եւ վաւերական ըլլալով հիմնական տեղիքը հայթայթեցին իմ աշխատութեան:*

*Նոյն հատորը արձագանքը կը հանդիսանայ Հայ Եկեղեցւոյ վերականգնումին ո՛չ անպայման Մայր Աթոռէն սկսեալ, որ տառապեցաւ Սովետական Միութեան լուծին ներքեւ առաջին երեք տասնամեակներուն, այլ Երուսաղէմէն եւ Կիլիկիոյ Աթոռին նորահաստատ կայքէն ու արտասահմանեան թեմերէն, ուր Եղիշէ Պատրիարք Դուրեան, Թորգոմ Պատրիարք Գուշակեան, Սահակ Բ Խապայեան ու Բաբգէն Աթոռակից Կաթողիկոսներ ճշմարիտ հերոսները եղան այդ վերականգնումին՝ ամենադժուարին պայմաններու տակ: Նախ ՍԻՈՆ եւ*




*ապա ՀԱՍԿ ամսագիրները բերանախօսը եղան Մայր Աթոռին, առաջինը Երուսաղէմէն եւ երկրորդը Անթիլիասէն, մինչ Մայր Աթոռի ԱՐԱՐԱՏ ամսագիրը դադրած էր գոյատեւելէ առժամապէս:*

## Գիրք Բ. (1930-1955)

*«Ազգապատում»ի երկրորդ գիրքս 25-ամեայ շրջանը կ՚ընդգրկէ երկու Հայրապետներու՝ Տ.Տ. Խորէն Ա. Մուրատբեկեան եւ Տ.Տ. Գէորգ Զ. Չորեքճեան Ամենայն Հայոց Կաթողիկոսներու գլխակարգութեան ներքեւ: Յայտնապէս երկու ճիւղերու վրայ պիտի տարարծէի ուսումնասիրութիւնս՝ Հայ Եկեղեցին Սովետներու իշխանութեան տակ, եւ ապա Հայ Եկեղեցին սփիւռքի մէջ: Առաջին պարա- գային սովետական անճիշդ եւ հակակրօն աղբիւրներ մեծագոյն մասամբ աննկատ պիտի ձգէի որպէս «սխալ դեղագիրներ», ու հետեւէի սփիւռքահայ եկեղեցական կեդրոններուն եւ հայ մամուլին տարածած տեղեկութեանց որոնք Արմաշական ականատես հոգեւորականներու վկայութիւններով հաստատուած էին: Մեր ազգն ու եկեղեցին երախտապարտ մնացին յատկապէս երբ 1991 թուականէն ետք արգիլեալ եւ թաքնուած բոլոր վաւերագիրները Երեւան հանուեցան Սանդրօ Բեհբուդեանի համբերատար աշխատանքով ինչպէս յիշած եմ գրութեանս սկիզբը:*

*Տաժանելի շրջանի զոյգ Հայրապետները, Խորէն Ա. Մուրատբեկեան եւ Գէորգ Զ. Չորեքճեան Ամենայն Հայոց Կաթողիկոսները, եղան 20-րդ դարու իսկական հերոս «սուրբ»երը մեր եկեղեցւոյ որոնք պահպանեցին սուսկ գոյութիւնը Մայր Աթոռին, առաջինը իր կեանքի գինով եւ երկրորդը՝ իր յայտնի դիւանագիտութեամբ: Գէորգ Զ. այլընտրանք չունենալով լեզու պիտի գտնէր բռնակալ Ստալինի հետ, եւ յանդուգն ու արտակարգ քայլ մը առնելով արտասահմանէն հանգանակութիւն կատարելով Կարմիր Բանակին նեցուկ պիտի կանգնէր 22 հրասայլեր նուիրելով Բ. աշխարհամարտի տարիներուն:*

*Կաթողիկոսը, տակաւին Տեղակալն էր Մայր Աթոռին երբ անձամբ Ստալինի հետ տեսակցեցաւ Կրեմլինի մէջ, անկարելին կարելի դարձնելով իր «տասնաբանեայ» պահանջները մատուցելով եւ գրեթէ բոլորին համար հաւանութիւն ստացանալով, ներառեալ վանքապատկան համալիրի որոշ հողամասերը: Ազգային-եկեղեցական ժողովը գումարուեցաւ 1945-ի Յունիս 16-ին, Տեղակալը Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրուեցաւ ու գահակալեց որպէս Գէորգ Զ. Ամենայն Հայոց Կաթողիկոս: «Էջմիածին» ամսագիրը շուտով լոյս տեսաւ, եւ Հոգեւոր Ճեմարանը իր դռները բացաւ, Էջմիածնի շրջանի Գայեանէի, Հռիփսիմէի եւ Շողակաթի, ինչպէս նաեւ Խոր Վիրապի վանքերը վերադարձան Մայր Աթոռի խնամքին: Ահա «հրասայլերու» դիւանագիտական լեզուն:*

## Գիրք Գ (1955-1995)

*«Ազգապատում»ի եզրափակիչ երրորդ գիրքը նորընտիր Հայրապետ Տ.Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալութեան քառասնամեայ շրջանը ընդգրկեց: Հայրապետը ամենալուրջ քայլերով, գիտակից, բարձր դիւանագիտութեամբ, համբերատար եւ լաւատես իրագործումներով կատարեց իր պարտքը , երբ արդէն մեռած էր Ստալին եւ սկսած էր աւելի հանդուրժելի տարիներու շրջանը: Ես առիթը ունեցայ 1958-ին, Վազգէն Հայրապետի հրաւէրով իր ծննդեան յիսնամեակին եւ գահակալութեան երրորդ տարեդարձին այցելելու Մայր Աթոռ եւ անձամբ տեսնելու քաղաքական վիճակը եւ անոր ընդմէջէն նոսրացած Հայ Եկեղեցւոյ պատկերը: Վազգէն Հայրապետ հրաշալի կերպով կատարելագործեց այն ինչ որ ժառանգեց:*

*Սոյն հատորը մանրամասնօրէն կը նկարագրէ Մայր Աթոռի եւ Հայրենիքի զգոյշ եւ յամրաքայլ յառաջընթացը՝ միջ-եկեղեցական բարձաստիճան յարաբե- րութիւններու մշակումով եւ Հովուապետական տասնէ աւելի այցելութիւններով դէպի արտասահման՝ Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկաներն ու Եւրոպական գլխաւոր կեդրոնները, Միջին եւ Ծայրագոյն Արեւելքի հայ գաղութներն ու պետական հաստատութիւնները, անձնապէս հանդիպելով այլազան երկիրներու պետական անձնակազմին եւ եկեղեցական հաստատութեանց: Վազգէն Ա. Շինարար Կաթողիկոսի օրով Մայր Աթոռ Ս. Էջմիածին ճանաչում գտաւ արտաքին աշխարհէն ու Հայաստանեայց Մայր Եկեղեցին նախկին պատմուճանը զգեցաւ իր «նազելի փառքով»:*

*Երրորդ գիրքս յիրաւի արտայայտիչն է Վազգէն Ա. Կաթողիկոսի կեանքին ու գործունէութեան որուն աննախընթաց 39-ամեայ գահակալութիւնը (1955-1954) վերականգնեցուց Հայ Եկեղեցւոյ իսկական գոյութիւնը աշխարհով մէկ, զայն հասցնելով իր պատկառելի 1700-ամեակին (301-2001): Իր աչքերը փակելէ առաջ Շինարար Վազգէն Երանաշնորհ Հայրապետ դիմաւորեց Հայաստանի պետական անկախութիւնը որպէս մեծագոյն մխիթարանք:*

www.massisweekly.com
Updated Every Friday

# «Հայե՜ր Միացէ՛ք, Միացէ՛ք Հայեր»

## «Սրբազան հայրը հեռաձայնեց եւ քաջալերեց մեզ բոլորս, որ ցոյցին մասնակցինք»




ԴՈԿՏ. ՀՐԱՅՐ ՃԵՊԷՃԵԱՆ

*Ալիքն է: Իմ դուստրս, որ կ'ապրի ու կ'աշխատի Լոնտոն: Ան իր բաժինը կը բերէ տեղւոյն հայկական կեանքի գործունէութեան: Իսկ սրբազան հայրը Յովակիմ սրբազանն է, որ կը քաջալերէ գաղութի անդամները հաւաքուելու Լոնտոնի Քենզինքթըն շրջանին մէջ՝ մասնակցելու համար ցոյցին, դատապարտելու համար վերջին օրերուն Ազրպէյճանի զինուորական յարձակումները Տաւուշի շրջանին վրայ եւ հայկական գաղութներուն կողմէ ի զօրակցութիւն Հայաստանի եւ հայկական բանակին: Քենզինկթըն շրջանը Լոնտոնի մէջ ունի իր իւրայատկութիւնը. Հայաստանի դեսպանատունը կը գտնուի այդ շրջանին մէջ: Անգլիոյ ազրպէյճանական գաղութի կազմակերպած ցոյցին առիթով Յովակիմ սրբազանը «ոտքի հանած» է գաղութը՝ հակադարձելու այդ ցոյցին:*

*Յովակիմ եպս. Մանուկեան հոգեւոր առաջնորդն է Մեծն Բրիտանիոյ եւ Իրլանտայի: Մօտէն ճանչցած ըլլալով զինք, իրեն հետ ունեցած հաղորդակցութիւններուս ընդմէջէն տեսած եմ քրիստոնէական հաւատքի, հայ եկեղեցւոյ եւ հայութեան նկատմամբ իր անզիջող նուիրուածութիւնը: Ան յոգնիլ չգիտցող կղերականն է, որ ոչ մէկ ճիգ կը խնայէ գաղութը պահելու իր ազգային եւ քրիստոնէական գիտակցութեան մէջ:*

*Հետեւելով տեղեկատուական ցանցերուն՝ զգացական էր տեսնել ցոյցին լուսանկարները: Եթէ մէկ կողմէ ազրպէյճանցի ցուցարարները կային Հայաստանի դեսպանատան հանդիպակաց կողմը, անոնց դիմաց սրբազան հօր գլխաւորութեամբ կար ամուր կեցած հայկական խումբը, որ շրջապատած էր դեսպանատունը՝ պաշտպանելու համար զայն: Ցոյցի ընթացքը եւ անոր կուտակած զայրոյթը հասած են իրենց գագաթնակէտին, բայց առկայ եղած է ինքնութեան եւ անոր պահպանման գրաւականը: Վերջապէս, դեսպանատունը՝ թէկուզ Լոնտոնի մէջ, հայկական հող է: Հայաստան է: Անգլիոյ հայորդիները կառչած էին իրենց հողին եւ ինքնութեան գիտակցութեան ու անոր պահպանումին: Իսկ «ծեծուըռտուքնե՞րը»: Հայուն հողը եւ անոր արժանապատուութիւնը պահելու համար էին:*

*Այս օրերուն կը հետեւինք բազմաթիւ ցոյցերու՝ աշխարհի տարբեր հայկական գաղութներուն մէջ: Ամերիկաներէն մինչեւ Եւրոպայի տարբեր գաղութներն ու անդին: Հայն է, որ եթէ մտահոգ է ազրպէյճանական ռազմական գործողութիւններով, նոյնքան նաեւ բարկացած է:*

*Հայաստանի Տաւուշի մարզին մէջ տեղի ունեցած զինուորական գործողութիւնները փորձեցին դարձեալ վարանումի ենթարկել խաղաղասէր հայը՝ իր կեանքը ապրելու իրաւունքէն: Հայկական բանակին քաջարի դիմադրութիւնը պահելու համար էր հայուն խաղաղասիրութիւնը: Այդ խաղաղասիրութեան համար զոհուած հայ զինուորականները դարձան նահատակներ, որովհետեւ անոնք իրենց կեանքերը տուին՝ կառչելով այն հաւատամքին, թէ հայը իրաւունք ունի ապրելու իր սեփական հողին վրայ՝ Հայաստանի եւ Արցախի մէջ: Բայց մանաւանդ ապրելու համար հայուն կեանքը իր արժանապատուութեամբ՝ կառչելով իր ազգային եւ քրիստոնէական ինքնութեան ու հաւատքին: Այս կեանքը Հայաստանի, Արցախի եւ աշխարհասփիւռ հայութեան պահանջած արդարութիւնն է: Արդարութիւն մը, որուն հայը կը հաւատայ հասնիլ ոչ թէ կեանքեր սպաննելով, այլ կեանքեր կերտելով: Զօրս տղոց նահատակութեան գրաւականը նոյնինքն այս կեանքերը կերտելուն մէջ է:*

*Այս կեանքը կերտելն ու իրականացնելը հայուն արդար պահանջատիրութիւնն է, որ նոյնքան ունի քրիստոնէական աստուածաբանական հիմք:*

*Քրիստոնէական աստուածաբանութեան հիմքը Քրիստոսի պարգեւած շնորհքն է, որուն միջոցով իրականացաւ նոր կեանքը: Նոր կեանքը շնորհուեցաւ Քրիստոսի խաչելութեամբ եւ Անոր յարութեամբ: Այս շնորհքը եւ անոր պարգեւած նոր կեանքը արդիւնք էին Քրիստոսի սիրոյն. «Վասնզի Աստուած սիրեց աշխարհը» (Յովհաննու 3:16): Քրիստոսի այս սէրը արդար է, որովհետեւ Ան ամբողջ աշխարհը սիրեց՝ անխտիր: Քրիստոսի մահով եւ յարութեամբ կերտուած այս նոր կեանքին միջոցով մարդը ունեցաւ ապահովութիւնը չկորսուելու, բայց նաեւ «յաւիտենական կեանք ունենալու» (Յովհաննու 3:16):*

*Քրիստոնէական աստուածաբանութեան մեծութիւնը կը կայանայ ճիշդ այս իրականութեան մէջ: Քրիստոս «սպաննուեցաւ», որպէսզի իւրաքանչիւր մարդու շնորհէ կեանքը, որ նոր է : Մարդը իր այս նորութեան մէջ կը կերտէ նոր կեանքեր՝ առանց հարկադրուելու եւ սպաննելու ուրիշը, որովհետեւ Քրիստոս ինք սպաննուեցաւ անխտիր բոլորին համար:*

*Հայը որոշեց իր ընտրանքը՝ հաւատալ այս նոր կեանքին: Հայը հաւատաց, որ կ'ուզէ կեանք կերտել, եւ այն ալ՝ նոր, եւ ոչ երբեք սպաննել: Հայուն պայքարը՝ կեանքը կերտելու, միշտ ալ եղաւ արդար միջոցներով եւ ոչ թէ բռնապետական ու վայրագ արարքներով եւ սպաննելով: Հայը կառչեցաւ արդարութեան, որովհետեւ իր կեանքը ուզեց կերտել, բայց նաեւ ապրիլ զայն նոյնինքն իր արժանապատուութեամբ: Այս եղաւ հայուն կեանքը Ցեղասպանութենէն ետք եւ այսօր տակաւին կը շարունակուի նոյն գիտակցութեամբ:*

*Այսօր Տաւուշի պատերազմը իր պատգամը ունի իւրաքանչիւր հայուն: Պատգամը կու գայ հայկական ժողովրդային երգին ընդմէջէն. «Հայե՜ր միացէ՛ք, միացէ՛ք հայեր»:*

*Տաւուշի պատգամը հայուն համար այսօր միացումի կանչն է: Այս միացումի կանչը ունի իր կանչողը: Եթէ երգին մէջ կանչողը Արցախն է, բայց այսօր՝ ա՛լ աւելին: Միացումի կանչը հայուն համար է՝ ապրելու եւ կերտելու համար իր հարազատ կեանքը իր ազգային եւ ընդհանրական հիմքերով: Իսկ կանչողը-կանչողները Արցախը, Հայաստանը եւ սփիւռքն են: Այս հայկական կեանքը կերտելու համար հայը պէտք է միանայ: Այսօր երբեւէ ամէն ժամանակէ աւելի:*

*Եղիշէ Չարենց կրցաւ տեսնել իր օրերուն, թէ հայուն փրկութիւնը, իմա՛՝ իր ազգային ու հայկական կեանքը կերտելը, իր հաւաքական ուժին մէջ է: Հայը այս հաւաքական ուժը դարձուց իր ազգային գաղափարախօսութեան միտքը եւ հիմքը, որ զինք տարաւ մինչեւ աքսոր եւ նահատակութիւն: Հաւաքական ուժը՝ հայուն կեանքը կերտելու եւ ապրելու հրամայականը:*

*Հաւաքական ուժը եթէ ֆիզիքական է, բայց նաեւ մտաւոր է եւ հոգեկան: Տաւուշը ապացուցեց, որ հաւաքական ֆիզիքական այս ուժը կրնայ կեանք պահել եւ նոյնպէս կերտել, երբ հայը պատերազմական ճակատին վրայ մնայ անդրդուելի ազրպէյճանական զինուորական յարձակումներուն դիմաց: Բայց կայ տակաւին մտաւոր եւ հոգեկան հաւաքական ուժը: Երբեք պէտք չէ ստորադասել միտքի ու հոգիի ուժը: Անոնք կրնան հասնիլ հոն, ուր ֆիզիքական ուժը երբեւի չի կրնար հասնիլ: Արժէ ապաւինիլ նաեւ միտքի ու հոգիի հաւաքական ուժին:*

*Այս հաւաքական ուժին հասնելու համար, հայկական ժողովրդային երգը պէտք է վերածել ապրող կեանքի. «Հայե՜ր միացէ՛ք, միացէ՛ք հայեր»: Հայաստան եւ Արցախ պարտին դասաւորել իրենց քաղաքական անհամաձայնութիւնները եւ տքնին հասնելու հաւաքական այս ուժին: Սփիւռքը՝ իր ներգաղութային եւ համահայկական տարբերութիւններուն ընդմէջէն, կուսակցական, միութենական, համայնքային, կենցաղային ու աւելին, պարտի կերտել հասարակ յայտարարը՝ հասնելու համար հաւաքական այս ուժին:*

*Հայաստան, Արցախ եւ սփիւռք պարտին միանալ՝ միասին հասնելու համար այս հաւաքական ուժին:*

*Հայուն աշխարհասփիւռ կեանքերը այսօր ունին հազարումէկ մարտահրաւէրներ: Հայաստանէն մինչեւ Արցախ, Ամերիկաներէն մինչեւ Եւրոպա ու տակաւին Միջին եւ Ծայրագոյն Արեւելք եւ քիչ մը ամէն տեղ: Այս մարտահրաւէրները այսօր հայուն կեանքին համար կը դառնան զգաստութեան հրաւէր, որ պէտք է մղէ մեզ անդրադարձներ կատարելու:*

*Անդրադարձ՝ հայուն անցեալի ապրած պատմութեան տարբեր հոլովոյթներուն ընդմէջէն: Պէտք է յիշել, որ հայը չդադրեցաւ իր կեանքը կերտելէ:*

*Անդրադարձ՝ հայուն կեանքին, իր ներկայի եւ ապագայի ապրող եւ ապրելու հոլովոյթներէն մեկնելով: Կեանքը կերտելու յաջողութիւնը եւ զայն զետեղելը պատմութեան շարունակականութեան հոլովոյթին մէջ նոյնքան կը կայանայ այս հաւաքական ուժին եւ անոր կառչելու գրաւականին մէջ :*

*Եւ այս հաւաքական ուժը կ'իրագործուի, երբ հայկական ժողովրդային երգը կը դարձնենք ապրող իրականութեան:*

*«Հայե՜ր միացէ՛ք, միացէ՛ք հայեր»:*

# Ատրպէյճանի Վերջին Արկածախնդրութիւնը

ԽԱՉԻԿ ՃԱՆՈՅԵԱՆ

*Վերջին շաբաթներուն Ատրպէյճանի բռնապետ «Սուլթան» Ալիեւ եւ իր մեծ եղբայրը՝ Թուրքիոյ «մեծ Սուլթան»ը Էրտողան աշխարհի քաղաքական բեմին վրայ սկսած են փայլիլ իրենց նանրամտութեամբ:*

*Իլհամ Ալիեւ իր ժողովուրդին ուշադրութիւնը եւ հնհնուքները շեղելու համար, սկսած է աջ ու ձախ, ամէն առիթով, սպառնալիքներ հնչեցնել հայ ժողովուրդի հասցէին, սպառնալով վերգրաւել իրմէ ազատագրուած հայկական հողերը:*

*2018-ի Թաւշեայ յեղափոխութենէն ետք Իլհամ Ալիեւ յոյս ունէր, մեր երկրի երիտասարդ իշխանաւորները ձեւով մը վախցնել, խաբել եւ ճնշում բանեցնել անոնց վրայ: Բայց նախորդ իշխանաւորներուն նման մեր ներկայ երիտասարդ ղեկավարները, աւելի անզիջող եւ հաւատարիմ են իրենց հայրենիքի անկախութեան պահպանման հարցին մէջ:*

*Ամէն անգամ երբ Իլհամ Ալիեւը սպառնալիք մը յայտնէ հայ ժողովուրդին, Ան ստացած է արժանի պատասխանը. «Արցախը Հայաստան է եւ վերջ», «երբ երկու հազար տարի առաջ մեծն Տիգրան հայ թագաւորը աշխարհի մեծամեծներուն հետ կը բանակցէր, այն ատեն ոչ Ատրպէյճանի պետութիւն կար եւ ոչ ալ ատրպէյճանցիներ գոյութիւն ունէին Կովկասի մէջ»: Ասիկա պատասխանն էր ուղղուած փոքրուղեղ Ալիեւի եւ երբ ան միշտ կը յոխորտայ, թէ Հայաստանի ողջ հողերը ատրպէյճանական հողեր են:*

*Մեր մաղթանքն ու ըղձանքն է, որ Կովկասի երբեմնի եղբայր ժողովուրդները մանաւանդ Հայաստանն ու Ատրպէյճանը անգամ մը եւս իրար եղբայրութեան ձեռք երկարեն եւ զէնքի ու փամփուշտի փոխարէնը, եղբայրական դրացիական խաղաղութեամբ խօսին իրարու հետ, յարգելով անոնց փոքրամասնութեանց իրաւունքները Արցախ աշխարհի սահմանները եւ ապրին հաշտ ու սիրալիր, արժանանալով իրենց ժողովուրդներուն օրհնութիւններուն եւ գնահատանքին:*

# Խղճի Պահապանը

ՆԵԼԼԻ ՄԵԼՔՈՆԵԱՆ

Պատուհանից երեւացող լեռները, դրանց վրայ պարմանուհիների պէս պար եկող ծաղիկները, որ նազում էին քամու թեթեւ սուլոցից, հեռուից, դաշտերում նշմարուող կանայք, մի գեղեցիկ կոլորիտ էին ստեղծում, որ տղամարդն արագ-արագ գծագրում էր կտաւի վրայ: Նկարում էր ու քթի տակ ինչ-որ անհասկանալի բառեր շշնջում՝ չմոռանալով ագահօրէն ներս քաշել ծխախոտի ծուխը:

-Տիկի՛ն, հաւանաբար սխալուել էք,-անգամ սիլուետը չտեսած ուղեւորին կոպտօրէն ասաց մի քանի րոպէ առաջ կուպէն սեփականաշնորհած անծանօթը: Տեսնես ո՞ւմ էք ուզում զարմացնել ձեր պարֆիւմի հոտով, հաստատ աչքերիցդ էլ մի մեթրանոց թարթիչներ են կախուած, ես ձեր...

Կինը նրա ասածից ոչինչ չէր հասկանում, վախենում էր ձախ ոտքն էլ ներս դնել:

-Ի՞նչ ես տեղաւորւում, ասացի սխալ «կուպէ» ես եկել, ճանապարհդ շարունակիր:

Տեսնելով, որ տղամարդը չափազանց յարգալից է, Անահիտը ուզեց փակել դուռը եւ դուրս գալ, միայն թէ այդ անտաշի հետ չկիսէր «բանտախուցը»: Նա զայրացած փակեց դուռը:

_Փաստօրէն էս ցեղը հասկանալու կարողութիւն էլ ունի,-դարձեալ դիրքը չփոխելով, քիչ աւելի շշուկով, տղամարդը սկսեց լուտանքներ տեղալ: Դեռ չէր հասցրել մաղձը թափել, երբ նորից օծանելիքի հոտը շոյեց ռունգերը:Զէ, սրանք խօսքները մէկ են արել:

Այդ պահին տեղից այնպէս վեր թռաւ կարծես ուզում էր վերջինիս պատուհանից դուրս նետել, դարձեալ կինը ոչինչ չասաց:

«Կարո՞ղ է համր է,-կայծակնային արագութեամբ անցաւ մտքով, կինն այսքան հանդուրժող չէ, հաստա՛տ:Մի՞գուցէ հրեշտակ է,- դարձեալ քամահրանքով պատասխանեց իր անիմաստ հարցին: Այդ պահին, կարծես մէկն ասաց. «Այ հաստագլուխ, գուշակութիւններ անելու փոխարէն՝ աչքերդ բարձրացրու» : Մի անգամ էլ փակեց աչքերը, որ ստուգեր տեսածի իրական լինելը:

- Բարեւ ձեզ,- մեղմ տոնով ասաց կինը: Կը ներէք, բայց ստիպուած էք հանդուրժել իմ ներկայութիւնը: Զայրոյթը եռում էր տղամարդու ներսում, բայց մի անգամ էլ էր ուզում նրա հանդարտ, խաղաղ աչքերին նայել: «Հազար անգամ ասել եմ՝ չխաբուես այդ աչքերին. դրանք սկզբում հանդարտ են, յետոյ իրենց հորձանուտը կը տանեն: Բոլորդ էլ նոյնն էք՝ հրեշտակի դէմքով, հրէշի ժանիքներով, ես ձեր...»: Անահիտը շարունակում էր անձայն հիանալ ապակու վրայ յայտնուող կտաւներով, որ բարձրեալի աջն էր վրձնել:

- Սուրճ կ'ուզէ՞ք,-ակամայից դիմեց ողջ աշխարհի վրայ բարկացած տղամարդուն, որ դեռ չէր համարձակւում իր կողմը նայել:

«Ասես երկնքից իջած լինի. այդքան զուլալ, մաքուր աչքե՞ր, իսկ հայեացքը՝ որքա՜ն խաղաղ է»:

Ասես սահելով, աննկատ յայտնուեց աղջկայ դիմաց, եւ սկսեց գողունի հետեւել նրա դիմախաղին, որի ընթացքում անցումներն այնքան սահուն էին, որ կարծես ինչ-որ ֆիլմի գլխաւոր հերոսուհու կերպարն էր մարմնաւորում: Ակամայից ձեռքը թղթին գնաց: Անահիտն այնքան տարուած էր իր ընթերցանութեամբ, որ չնկատեց, թէ ինչպէս իր սիրունիկ դէմքը գծագրուեց սպիտակ թղթի վրայ: Միայն տղամարդու ձեռքի շարժումները եւ մերթընդմերթ իրեն ուսումնասիրող աչքերը մատնեցին, որ վերջինս իրեն էր նկարում:

- Ինչո՞ւ, մի՞թէ հենց այդ կերպարից չէք փախչում,-առանց աւելորդ լարուածութեան եւ առաւել եւս՝ ոգեւորութեան, նրան ձեռնոց նետեց վերջինս: Մի պահ ձեռքի շարժումները արագացան, ապա, միանգամից դադարեցին:

- Ի՞նչ էք կարդում:

- Օտարականը,- գրքից աչքը չկտրելով՝ պատասխանեց Անահիտը: Գոնէ Աւգուստինն ասում է այն, ինչ մտածում է, իսկ շատ շատերի խօսքերն ու արարքներն իրար հակասում են:

- Հասկանալով, թէ աղջիկն ինչ է ակնարկում, մի պահ ընկրկեց՝ փորձելով համարժէք հակահարուած տալ:

- Կը սիրէի՞ր թափառական ջութակահարի,- ներսի, վիրաւորուած արժանապատուութեամբ տղամարդուն հանդարտեցնելով՝ խորամանկ աչքերն աղջկայ չփոթուած դէմքին յառեց:

- Այո՛,- առանց երկար-բարակ մտածելու՝ պատասխանեց վերջինս:

- Ստում ես,- մի փոքր առաջ գալով, արուեստագէտին բնորոշ կոպտութեամբ՝ ասաց տղամարդը: Ջնայած, դո՛ւ, կարող է,- ինքն էլ իր վերաբերմունքից զարմացած՝ աղջկայ դիմաց դրուած սուրճի բաժակը մօտեցրեց շուրթերին: Անահիտը փորձեց խեղդել զայրոյթը:

- Իսկ ի՞նչը ձեզ ստիպեց «էս ցեղից» մէկին առանձնացնել:

- Դէմքիդ վրայ չխլվրտացող աչքերը, որ թքած ունեն դիմացդ նստած տղամարդու վրայ, նրան տեսնելիս՝ անգամ ալիքների մի խաղը չփոխուեց,- թակարդը լարած որսորդի պէս՝ դարձեալ աղջկան անակնկալի բերեց: - Իսկ ինչո՞ւ է այդպէս: Մէկին աշխարհի զարդերն ու հարստութիւնը տաս՝ չի գոհանայ, յարմար պահի մէջքից էլ կը հարուածի, իսկ մէկ ուրիշը կարող է սիրահարուել ջութակի լացին:

- Ա՛, ձեր այդ նշած ջութակի լացի մէջ զգացմունքների եւ յոյզերի մի կուսական աշխարհ կայ, ուր ամէն ինչ մաքուր է, անապակ, իսկ հարստութիւնն ու զարդերը մարդուն աւելի ագահ ու կոպիտ են դարձնում, նա սկսում է չբաւարարուել ո՛չ ունեցածից, ո՛չ էլ այդ գանձերն իր ոտքերի առաջ փռող անձից, օր օրի նրա պահանջներն աւելանում են, քանի որ նրա մօտ բացակայում է գոհանալու, բաւարարուած զգալու ազդակը:

- Ինչի՞ց էք դժգոհ, ձեզ տրուած է մի անգնահատելի շնորհ՝ գունախաղով մի նոր աշխարհ կերտել,- ասաց Անահիտը՝ արդէն ուղիղ նայելով անծանօթի աչքերին: -Տանել չեմ կարողանում, երբ ինձ խաբում են:

- Հետաքրքիր է, իսկ նոյն զգացողութի՞ւնն էք ունենում, երբ ինքներդ էք խաբում: Եթէ դուք անկեղծ էք, կարող էք նոյնը ակնկալել դիմացինից,- ասես կրակն աւելի բորբոքելով՝ նայեց տղամարդու մոլորուած հայեացքին, որ ուզում էր ասել՝ «վէրքիս աղ մի լցրու, այ խղճի պահապան»: Տարիները՝ դարակում, փոշու մէջ կորած սկաւառակի պէս, նրան տարան դէպի երիտասարդ տարիների բոհեմական կեանքը: Երբ շշեր էին դատարկւում, բնորդուհիները՝ մէկը միւսի հետեւից, կերտում էին հիասքանչ կտաւներ, նրան փող ու ճանաչում բերում, ապա օղու շշերի հետ դատարկւում եւ մինչեւ վերջին կաթիլը քամւում:

Մի անգամ էլ նայեց աղջկայ աչքերին ու նրա առաջ գծուեց այն դեռատի աղջնակի աղերսագին հայեացքը:

-Ես նրան թողեցի մենակ, նա ուզում էր գոնէ իմ մի մասնիկն իր մօտ պահել, բայց ես նրան ստիպեցի հրաժարուել ու հեռացայ այնպէս՝ ասես օղու հերթական շիշն էի դատարկում:

Անահիտի մարմնով սարսուռ անցաւ: Անձայն մի կողմ դրեց գիրքը ու փակեց աչքերը:

- Երեւի ատում ես ինձ,- (ինքն էլ չհասկանալով՝ ինչո՞ւ) մեղաւոր ձայնով շշնջաց վերջինս:

- Աւելի շուտ զարմանում եմ, որ դու ես ատում... կին արարածին... Կինն ո՞վ է, որ, տղամարդու կողից պոկուած մի մասնիկ, որ շատ դէպքերում աւելորդ է դառնում. կարելի է նաեւ դէն նետել: Քիչ առաջուայ համար, հանդարտ էակն այժմ շիկացել էր զայրոյթից: Հասկանում էր, որ իր դիմաց նստած էր սեփական կաշին սիրող մէկը, ում համար կինն ուղղակի հաճոյքի առարկայ է եւ ցանկացած պահի կարող է նրան մէկ ուրիշով փոխարինել, ասենք, «երբ մաշուի, կամ վաղեմութեան ժամկէտն անցնի»: Այլեւս չէր ուզում նրա դէմքին նայել: Նրա նմաններն այնքան շատ են, որ երկրագունդը ծանրացել է նրանց գործած մեղքերից: «Ինչո՞ւ է տղամարդը կորցրել իր դէմքը, մի՞թէ նա իրաւունք ունի այդքան անպատասխանատու լինել, այդ դէպքում ինչպէ՞ս ամուր ընտանիքներ ստեղծել, երբ հիմքը խարխուլ է»:

- Ինչի՞ մասին ես մտածում, ինչո՞ւ միանգամից լռեցիր: Ասա՛, նախատի՛ր, թէկուզ ատելութեամբ ինձ նայիր, բայց մի՛ լռիր: Գիտեմ, բոլորդ մեզ էք մեղադրում, մի՞ գուցէ հենց կինն է մեղաւոր, որ այդքան հասանելի է, երբեւէ դրա մասին մտածե՞լ ես:

- Գուցէ չհաւատաք, բայց՝ այո:

- Ու ի՞նչ եզրահանգման էք եկել,- դարձեալ սուրճի բաժակը շուրթերին մօտեցրեց Բենը՝ ուսումնասիրելով աղջկայ դիմախաղը, որ մէկ հանդարտւում էր, մէկ էլ հազիւ էր զսպում ներսում բարձրացող փոթորիկը:

- Իհարկէ, կ'ասեմ: Շատ ու շատ տղամարդիկ ապրում են կանանց ոտքերից կախուած, բայց իրենց թւում է՝ հենց իրենք են գլուխը: Ամէն անգամ, տղամարդկանց հպարտ, փքուն դէմքներին նայելիս՝ ներսումս մի տեսակ խղճահարութիւն է առաջանում, եւ հասկանում եմ, որ Եւան ու Ադամն ամէնուր են:

- Ամէն օր տանից դուրս էինք գալիս միասին, ամենասիրահարուած զոյգերի պէս, ես համբուրում էի նրա շուրթերը, շոյում գլուխը, հայեացքս վեր յառում, գոհունակութիւնս յայտնում բարձրեալին, որ ինձ համար հենց այդպիսի առաքինի, նուիրուած կին էր պահել:

- Ու մի օր էլ...,- շարունակեց Անահիտը...

- Ինչո՞ւ ես այդպէս մտածում,- ջղագրգիռ շարժումներով՝ ձեռքը շշին մօտեցրեց Բենը:

- Դէ, երեւի գիտեմ պատմութեանդ աւարտը: Կ'ուզէի՞ր մինչեւ վերջ փակ աչքերով ապրել: Այնքան մարդ է այդպէս ապրում, թող դո՛ւ էլ դրանցից մէկը դառնայիր:

- Ծաղրո՞ւմ ես ինձ,- իրեն հազիւ կառավարելով՝ հարցրեց վերջինս:

- Դուք էք սրանից նրա գիրկն ընկնում, ինձ վրայ ես ծիծաղում:

- Սխալւում էք, պարո՛ն, ես չէ, ձեր կինը, ում շուրթերն այդպէս կաթոգին համբուրում էիք եւ աշխատանքի ճանապարհում, իսկ դուք հպարտ, ձեզանից գոհ քայլուածքով մտնում էիք ձեր աշխատասենեակ եւ գուցէ, կարճ ժամանակ յետոյ, ճախրում մէկ ուրիշի կնոջ գրկում: Բենը չէր կարողանում լռել, ուզում էր պատմել, բայց ինչո՞ւ հենց այս կնոջը. մի՞ գուցէ նրա ամուսինն էլ է խաբուած ապրում: Հենց այդպէս էլ կայ, դրա համար էլ կանանց արարքներին քաջատեղեակ է :

- Պարո՛ն, մի՞թէ չգիտէք, որ մի օր ձեր արարքների համար պատասխան էք տալու, յիշէք այն դեռատի աղջկան, օղու շշերի պէս դատարկուող կանանց, եւ կը հասկանաք, որ ճակատագիրը ձեր հանդէպ բարեհաճ է գտնուել, հատուցումը շատ անգամ աւելի ցաւոտ կարող էր լինել:

- Ինչո՞ւ, որտեղից այդքան ատելութիւն տղամարդու նկատմամբ,- աղջկայ գունատ դէմքին նայելով՝ հարցրեց Բենը:

- Արդէն ուշ է, եկէք այսքանով աւարտենք,- ասաց Անահիտը՝ փորձելով վերջ դնել այդ ոչ հաճելի խօսակցութեանը:

- Բենը՝ մեծ-մեծ կումերով, դատարկում էր շիշը՝ մերթընդմերթ Անահիտի անտարբեր հայեացքին նայելով:

- Կարօտո՞ւմ էք նրան,- վերջինիս խօսքերն՝ ասես քարի պէս, ընկան տղամարդու գլխին:

- Զգիտե՛մ,գուցէ,- ձայնը քիչ մեղմացրեց, ապա խռոխ պատասխանեց՝ երբեք:

- Արհամարհում եմ,- ապակու վրայ խզբզելով՝ ասաց Անահիտը: Ապա մի փոքր դադարից յետոյ շարունակեց:

- Դրախտից արտաքսուելով՝ Ադամը վերցրեց Եւային եւ գնաց դէպի դժոխք, հասկացաւ, որ չի կարող նրանից հեռու գտնուել, իսկ դրախտի դռները յաւիտեան փակուած էին նրա առջեւ:

- Առանց նրա շունչս կտրւում էր. ներեցի, խոստացաւ, որ այլեւս ինձ չի դաւաճանի, որ իրեն խաբէութեամբ ծուղակն են գցել: Թողեցի տուն, աշխատանք եւ երկրից հեռացայ: Կամաց-կամաց յարմարուեցինք նոր միջավայրին. աշխատանք, ընկերներ... Այնքան շուտ մոռացայ կատարուածի մասին, որ ինձ համոզեցի, որ նման բան չէր էլ եղել: Առանց նրա՝ մարմինս սառչում էր, ծարաւս չէր յագենում. նա դարձել էր իմ թմրանիւթը, բաւական էր զգայի նրա բոյրը եւ դառնում էի անպաշտպան, հնազանդ երեխայ: Գիշերը ես էի նրա շուրթերը համբուրում, ցերեկն՝ այն տղամարդը, ով ինձ աշխատանքի էր ընդունել:

- Բաւակա՜ն է, ես նողկում եմ ձեզ նման մարդկանցից, այլեւս մի շարունակէք:

- Ես թողեցի ամէն ինչ եւ գնացի նրա հետ, իսկ նա...

- Այ հիմա իսկապէս ծիծաղելի

Շար.ը էջ 17

# ԱՍԱԼԱ-ի ժիրոն (Հատուած «Վրիժակ» Անտիպ վեպից)

ԳՐԻԳՈՐ ՋԱՆԻԿԵԱՆ

Ռազմական ուղղաթիռը յարմար տեղ գտնելու համար պտտուեց վանքի շուրջն ու վայրէջք կատարեց Ամարաս գետի ափին՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ սարալանջի ստորոտում: Առաջին հայ կաթողիկոսը էդ սարալանջն էր բարձրացել, որ աղօթատան համար յարմար տեղ փնտռի, բայց բլրաշարերի շուրջպարով գմայլուել, դժուարացել էր ընտրութիւն կատարել: Նա գիշերը աղօթքներով էր անցկացրել, ու այգաբացի հետ մի աստղ լուսէ շիթի պէս կաթել, վանքի տեղը ցոյց էր տուել...

Շրջակայ գիւղերի երկրապահներն վաղուց զգօն հսկում էին Ամարասի հովիտը, Հայաստանից հետզհետէ նորանոր ջոկատներ էլ էին հասնում, գետափին հանգրուանում: Ակնունու դուրը չեկաւ, որ իրենցից առաջ տեղակայուածները ո՛չ խանդակներ էին փորել, ո՛չ էլ ծածկապաշտպանուելու մասին մտածել. շոգ էր, հանուել, գետն էին լցուել: «Բնօրրանն» իրեն հաւատարիմ մնաց. տղաները չհանգստացած, աղուէսներին ու կրիաներին քնահարամ անելով, խրամատներ բացեցին, մինչեւ գօտկատեղը խորացրին: Այդ ընթացքում տեղախոյզները վերադարձան ու զեկուցեցին, որ հանդիպակաց դիրքերում առայժմ զօրաշարժ չի նկատւում, թշնամին ոնց որ թէ գրոհի չի նախապատրաստւում: Հենց մութն ընկաւ, բոլորն էլ յոգնած էին, փռուեցին արմատները հողի ընդերքը խրած, հազար արմատով հողից կառչած կաղնու տակ, ու ինչպէս Ջոկատի Զապլինն էր իր արեւին զուարճախօսում՝ անբանութիւնից սկսեցին երկնքի աստղերը հաշուել:

-Տղե՛րք, կարգին չծանօթացանք էլ,- մխացող ծխուկի վրայ թքեց, կիսաճտքի կրունկով տրորեց Ջոկատի խոհարարը՝ գիւմրեցի Առաքելը:

Նա շիլ էր: Ժաժքի ժամանակ իրենց շէնքը փլուզուել, կնոջը, երեխաներին տակովն էր արել: Մնացել էր անտուն ու անտէր: Հազիւ երեք երկվայրկեան տեւած պատուհասից փախել, հասել էր Երեւան, Օպերայի հրապարակում ծանօթացել էր «Բնօրրանի» տղաներին, հետները եկել Արցախ: Նախօրօք էլ զգուշացրել էր, որ ինքը կռուող չէ, բայց լաւ խոհարար է: Խոհարար էր եղել նաեւ հայրը, պապը Արփաչայի ձորում Աւետիք Իսահակեանի ու նրա հիւրերի (մէկը՝ Յովհաննէս Թումանեանի, միւսներին չէր ճանաչել) համար անձամբ կարմրախայտ էր խորովել: Ուրիշ շատ նշանակալի իրադարձութիւններ էին տեղի ունեցել խոհարարների իրենց գերդաստանում, որ Շիլ Առաքելը հրադադարի պահերին, ցանցառ, անհաւասար բուսնող մօրուքը շոյելով, պատմում էր, ու տղաները հեշտութեամբ հաւատում էին, որովհետեւ համով էր պատմում: Իր շարժական խոհանոցում համով էլ կերակուրներ էր պատրաստում:

Նորեկները հերթով, մի տեսակ քաշուելով ասում էին իրենց անունները, ոմանք՝ նոյնիսկ ազգանունները: Դեռ չգիտէին, որ խրամատաւորուելու յաջորդ օրը, առաջին մարտը չսկսած, այդ անուն-ազգանունները մէկընդմիշտ մոռացուելու են ու իրենք, ըստ իրենց արտաքինի, դառնալու են Շեկօ, Ճուտօ, իսկ նրանք, ովքեր արտաքին առանձնահատկութիւն չունէին, նայած թէ որտեղից էին եկել, կոչուելու էին Էջմիածնեցի, Սիսիանցի, Ապարանցի... Հայաստանում քի՞չ գիւղ ու քաղաք կար:

Ջոկատն ամբողջ օրը խանդակ էր փորել, յօրանջում էր, Ակնունին ուզում էր քնելու հրաման տալ, կաղնու չերեւացող կողմին յենուած երիտասարդը գրաւեց ուշադրութիւնը: Նա ուղղաթիռ նստելու պահից էլ ընդհանուր զրոյցին չէր խառնւում, ձայնն ընդհանրապէս չէր լսւում: Օպերայի հրապարակում «Բնօրրանի» կազմում արձանագրուելիս իր մասին որոշակի ոչինչ չասաց, հրամանատարն էլ մանրամասներ ճշտելու հնարաւորութիւն չունեցաւ: Շուրջը խճողում էր, համ էլ արձանագրուելը դեռ ոչինչ չէր նշանակում: Թաղամասերով գալիս էին, կամաւորական գրւում, մեկնելու օրն անհետանում էին:

Հենց մի պահ լռութիւն իջաւ, Ակնունին դիմեց նրան:

-Ջինուո՛ր,-ասաց,- քո անունը չիմացանք:

Հրամանատարի զգուշաւորութիւնը անհիմն չէր, տարիների ճակատային փորձ ունէր: Երեւանում շատ էին պատահում ջահելներ, որ յանցագործութիւն, անգամ ոճրագործութիւն էին կատարած լինում ու դատ-դատաստանից խուսափելու համար ուրիշ անունով ազատամարտիկ էին արձանագրւում, գալիս էին, Արցախում հետքները կորցնում: Առաջին իսկ հնարաւորութեան դէպքում էլ զոհուածի թղթեր էին յաջողացնում, ընդհանրապէս չքւում: Եթէ պարզուէր, որ ամբողջ օրը մի բառ չասած նորեկը այդպիսի մէկն է, թէկուզ գիշերով, Ստեփանակերտ՝ ռազմական ոստիկանութիւն կը զանգէր: Թող գային, տանէին, ով լինելը ճշտէին: Ջոկատում առանց այն էլ այդպիսի մէկն ունէր, բայց նրան, եթէ ռազմական ոստիկանների մի ստորաբաժին էլ գար, չէր յանձնի: Լաւ կռուող էր:

Նորեկն իր կիսամութ անկիւնում՝ կաղնու սաղարթներում մնալով, միաժամանակ ըստ զինուորական կանոնակարգի ձգուելով, զեկուցեց.

- Անունս Վարդան է, պարո՛ն հրամանատար:

Հնչերանգն էլ էր խորթ: Օտարոտի:

- Որտեղացի՞ ես, Վարդա՛ն:

- Իջեւանցի:

- Իջեւանի ո՞ր գիւղից:

Նորեկը մի պահ մտմտաց, յետոյ կարծես յիշեց.

- Աչաջրից:

Սաքոն մինչ այդ կէս քուն, կէս արթուն էր լսում իր համար սովորական հարցուպատասխանը: Վերջին խօսքի վրայ վեր թռաւ, պինդ բռնեց նորեկի օձիքը.

- Արա՛, խի՞ ես խաբում, աչաջրեցին ես եմ, դու ումոնցի՞ց ես, որ քեզ չեմ ճանաչում:

Նորեկը դէպի խաւարը շրջուեց, ասես թփուտներից կասկածելի ձայն գրաւեց ուշադրութիւնը: Հայրենասէր Հայկը ծուտոյի ետեւից մօտեցաւ նորեկին, հենց առաջին օրը սուտ խօսելու համար ուզում էր երեւի խփի, դէմքը մօտեցրեց չէկ, զանգուր մազերին, չէկ, զանգուր մօրուքին, ապշեց.

- Լսի՛, դու ԱՍԱԼԱ-ի ժիրոն չե՞ս:

Նորեկի հայեացքը թփուտներից կաղնու վերին սաղարթները հասաւ, ու բոլորը տեսան, որ հոնքերն ու թարթիչներն էլ են մի տեսակ խուճուճ, մթան մէջ չէկին են տալիս: Հէչ հայի նման չէր:

- Ի՞նչ ԱՍԱԼԱ, ի՞նչ ժիրայր,- նա այնպէս արտաբերեց այդ բառերը, կարծես իմաստ չունէին, եթէ անգամ ունէին, ինքը չգիտէր:

Հայրենասէր Հայկը կատաղեց. երեւի իր վրայ վստահ էր:

- Ջե՞ռ ես առնում, դեսպանատան առաջ ես եմ մեծացրած նկարդ պահել, ամառուայ շոգին քեզ համար ցոյց ենք արել, ազատ արձակուելդ ենք պահանջել:

Նորեկն ընկրկեց:

- Պահել ես, լաւ ես արել, ինչի՞ ես երեսով տալիս:

Տղաները յոգնութիւնը մոռացան, աշխուժացան:

-Ապե՛ր, քեզ ինչի՞ էին նստացրել:

Նորեկը լուռ էր: Հայկը նրա համար ցոյց էր արել, նրա փոխարէն պատասխանում էր.

-Էդ է՞լ չէք իմացել, Թուրքիայի ռազմական նախարարին էր խփել:

-Ինչի՞:

Ժիրայրը խոնաւ հազաց: Երեւի վիրաւորուեց.

-Շուէյցարացի դատաւորն էլ ինձ ճիշտ նոյն հարցը տուեց:

-Դու ի՞նչ ասացիր:

-Ասացի՝ չգիտեմ:

-Ո՞նց թէ չգիտես:

-Զգիտեմ էլի: Պապիս լեզուն կտրել էին, խօսել չէր կարողանում, որ պատմէր, ես էլ իմանայի:

-Թուրքե՞րն էին կտրել:

-Չէ՛, Ալիասկայի ալեութները: Բռնագաղթին մեր գերդաստանին Խարբերդից տարել էին Ծովքի ափը, եաթաղանները հանել: «Առաջ ի՛նձ սպանէք, աչքերս փորէք, որ չտեսնեմ թէ հօրս, մօրս, քոյրերիս ու եղբայրներիս ի՛նչ էք անելու»,- երեխայ-երեխայ թախանձել էր պապս: «Ո՛չ,- վճռել էր հրոսակապետը,- քո այդ խօսքերի համար ես հիմա լեզուդ կը կտրեմ, որ ամբողջ կեանքում տեսածներդ չմոռանաս, բայց եւ պատմել չկարողանաս»:

Լեզուն կտրելուց յետոյ նրան կապել էին ծառին, ժամերով բերանից արիւն էր ծորացել, ժամերով աչքի առաջ ամբողջ գերդաստանին... Ասացի էլի, խօսել չէր կարողանում, որ իմանամ ինչ են արել: Համ էլ ինչի՞ էք ինձ հարցնում, դուք չգիտէ՞ք...

- Էդ բոլորը դատաւորի՛ն,- հայաստանցի կամաւորականները պառկած տեղներից ելել, խելք էին սովորեցնում արդարամարտիկին,- դատաւորի՛ն պիտի պատմէիր, որ ցմահ բանտարկութեան վճիռ չտար:

-Պատմել եմ, չէր ուզում տար: Դատին ներկայ էին ռազմական նախարարի կինն ու որդին: Որդին, ինչպէս պապս Ջարդի ժամանակ, երեխայ տղայ էր: Երեւի նոյն տարիքին կը լինէր: Նիստի վերջում դատաւորն ասաց. «Այս կնոջից ու տղայից, որոնց դժբախտացրել ես, ներողութի՛ւն խնդրիր, համոզուեմ, որ զղջում ես, մեղմ վճիռ կայացնեմ»: «Թող դահլիճում գտնուող թուրքերը ներողութիւն խնդրեն մէկ ու կէս միլիոնի համար, ես իմ սպանած մի հոգու համար կը խնդրեմ»,- ասացի: Ո՛չ նրանք խնդրեցին, ո՛չ՝ ես, ու ցմահ բանտարկութեան դատապարտուեցի:

- Բա ո՞նց ես բանտից փախել, Շուէյցարիայից Հայաստան հասել:

Ժիրայրը մթան մէջ Ակնունու հայեացքը որոնեց: Գտաւ:

-Պարո՛ն հրամանատար, թոյլ տուէք էլ ոչ մի հարցի չպատասխանեմ:

-Նորեկին հանգի՛ստ թողէք,- սաստեց Ակնունին...

******

Ծանօթ.- Վրիժակը հայոց Նեմեսիսն է, վրիժառութեան աստուածը

# Խղճի Պահապանը

Շարունակուած էջ 16-էն

էք: Կարծեմ, դուք ձեր բնակավայրն էիք փոխել եւ ոչ ձեր կնոջ բնոյթը:

- Յետոյ ես նրան թողեցի եւ վերադարձայ: Մէկ տարի անց լսեցի նրա մահուան լուրը: Այլեւս ափսոսանք չկար: Նա երեխաներիս մի նամակ էր թողել, որ ինձ փոխանցէին: Նա իմ բնորդուհիներից մէկն էր, միակը, ումից ես չկարողացայ հրաժարուել, եւ մի օր կնութեան առայ: Նրա մասին շատ քիչ բան գիտի. կարելի է ասել՝ ոչինչ չգիտէի: -Նա ծանր մանկութիւն էր ունեցել, ոչ լիարժէք ընտանիք,- դարձեալ անսպասելի մէջընդերեց Անահիտը՝ տղամարդու պատմութիւնը մի քանի անգամ անգիր արածի պէս:

- Հաւանաբար, սերիալներ շատ էք նայում,- խայթեց Բենը՝ փորձելով ռաունդն իր ձեռքը վերցնել:

- Սխալւում էք: Երեխայի վարքագիծը ձեւաւորւում է ընտանիքում, եւ նրա վրայ անդառնալի ազդեցութիւն են թողնում ծնողների վէճերը, բաժանութիւնները, անբարոյ վարքը, եւ այդ երեխաներն ուզեն, թէ չուզեն, չարանում են, անտարբեր դառնում դիմացինի ցաւին, շատ դէպքերում օտարւում հասարակութիւնից: Ձեր կնոջ պարագայում էլ նոյն պատկերն է:

- Ցաւօք, իրաւացի էք:

- Երջանիկ ընտանիքում մեծացած երեխան, ով լիարժէք զգում է ծնողների սէրն ու հոգատարութիւնը, տեսնում միմիանց նկատմամբ ունեցած սէրն ու յարգանքը, դժուար թէ նման վարք դրսեւորի, իհարկէ, բացառութիւններ լինում են: Մի՞թէ հրէշից կարող է մարդ ծնուել, կամ՝ մարդուց հրէշ:

- Տիկին, պէտք է խոստովանեմ, որ բաւականին առողջ դատողութիւններ էք անում: Հենց այդպիսի ընտանիքում էլ նա ծնուել էր:

- Իսկ դո՞ւք:

- Ուզում էք իմանալ՝ արդեօք իմ ընտանիքն էլ խեղաթիւրուած չէ՞ր: Ո՛չ, տիկի՛ն, ես առողջ ընտանիքում եմ ծնուել:

- Պարզ է:

- Ոչինչ էլ պարզ չէ. սրտիս ամբողջ խորութեամբ ատում եմ կին արարածին, եւ նոյն խորութեամբ էլ սիրում. մի սիրտը չի կարող բաբախել: Անահիտն ուշադիր հետեւում էր տղամարդու ջղագրգիռ շարժումներին եւ տեսնում նրա աչքերում բարձրացող փոթորիկը, որն ասել կ՛ուզէր. «Կը ցանկանայիր իմ բնորդուհին դառնալ»....

## «Եուվենտուս» 9-րդ Տարին Անընդմէջ Հռչակուեցաւ Իտալիոյ Ախոյեան



*Թուրինի «Եուվենտուս» 9-րդ տարին անընդմէջ հռչակուեցաւ Իտալիոյ ախոյեան: 36-րդ օրուայ մրցումներուն իտալացի Մաուրիցիօ Սարիի գլխաւորած խումբը ընդունեց «Սամպդորիային» եւ յաղթանակ տարաւ 2:0 հաշուով:*

*Առաջին խաղակէսին աւելացուած 7-րդ րոպէին պոսնիացի կիսապաշտպան Միրալեմ Պեանիչի փոխանցումէն յետոյ աչքի ինկաւ փորթուկալացի յարձակող Կրիշտիանու Ռոնալդուն, որ 31-րդ կոլը նշանակեց այս առաջնութեան ընթացքին:*

*67-րդ րոպէին հաշիւը կրկնապատկեց իտալացի յարձակող Ֆեդերիկօ Բեռնարդեսկին:*

*«Եուվենտուս» վաստակած է 83 միաւոր: Առաջնութեան աւարտէն երկու խաղ առաջ երկրորդ տեղի դիրքի վրայ ընթացող Միլանի «Ինտերը» ետ է 7 միաւոր:*

*«Եուվենտուս» Իտալիոյ ախոյեան դարձաւ 36-րդ անգամ:*

## «Ռոմայի» Յաղթանակը՝ Մխիթարեանի Մասնակցութեամբ

*Իտալիոյ առաջնութեան 36-րդ օրուայ ընթացքին «Ռոման» իր դաշտին վրայ մրցեցաւ «Ֆիորենտինայի» հետ: Փորթուկալացի Պաուլու Ֆոնսեկայի գլխաւորած խումբը յաղթանակ տարաւ 2:1 հաշուով:*

*Առաջինը յաջողութեան հասան դաշտի տէրերը: Առաջին խաղակէսի վերջին րոպէին ֆրանսացի կիսապաշտպան Ժորդան Վերետուն արդիւնաւէտ իրացուց 11 մեթրանոցը:*

*54-րդ րոպէին «Ֆիորենտինան» կարողացաւ վերականգնել հաւասարութիւնը սերպ պաշտպան Նիկոլա Միլենկովիչի կոլի շնորհիւ:*

*Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը «Ռոմայի» մեկնարկային կազմին մաս կը կազմէր եւ փոխարինուեցաւ 82-րդ րոպէին:*

*86-րդ րոպէին «Ռոմայի» յաղթական կոլը դարձեալ 11 մեթրանոցով նշանակեց Վերետուն:*

*«Ռոման» 64 միաւորով 5-րդ տեղը կը գրաւէ եւ 4 միաւոր առաջ է 6-րդ տեղը գտնուող «Միլանէն»:*

## «Մանչեսթեր Եունայթըտ» եւ «Չելսի» Յաղթեցին եւ Պիտի Մասնակցին Ախոյեաններու Լիկային

| | Club | MP | W | D | L | GF | GA | GD | Pts |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Liverpool | 37 | 31 | 3 | 3 | 82 | 32 | 50 | 96 |
| 2 | Man. City | 37 | 25 | 3 | 9 | 97 | 35 | 62 | 78 |
| 3 | Man United | 37 | 17 | 12 | 8 | 64 | 36 | 28 | 63 |
| 4 | Chelsea | 37 | 19 | 6 | 12 | 67 | 54 | 13 | 63 |

*Անգլիոյ առաջնութեան վերջին օրը «Մանչեսթեր Եունայթըտ» հիւրընկալուեցաւ «Լեսթեր Սիթիինէն» եւ առաւելութեան հասաւ 2:0 արդիւնքով:*

*Նոյնպէս 66 միաւոր վաստակեցաւ եւ չորրորդ տեղը գրաւեց Լոնտոնի «Չելսին», որ 2:0 հաշուով պարտութեան մատնեց «Վուլվերհեմփթոնին»: «Մանչեսթեր Եունայթըտ» ու «Չելսին» ախոյեան «Լիվերփուլի» եւ փոխ-ախոյեան «Մանչեսթեր Սիթիի» հետ հանդէս կու գան Ախոյեաններու լիկայի խմբային մրցաշարի ընթացքին:*

*Վերջին օրը «Լիւերփուլը» 3:1 հաշուով յաղթեց «Նիւքասլին» եւ առաջնութիւնը աւարտեց 99 միաւորով: «Մանչեսթեր Սիթին» 5:0 հաշուով առաւելութեան հասաւ «Նորվիչ Սիթիի» նկատմամբ, վաստակեց 81 միաւոր:*

*Եւրոպայի լիգայի խմբային փուլի ուղեգիրը նուաճեց 62 միաւորով 5-րդ տեղը գրաւած է «Լեսթեր Սիթին»: Եւրոպայի լիգայի որակաւորման երրորդ փուլէն պայքարը կը սկսի 6-րդ տեղը գրաւած Լոնտոնի «Թոթենհեմը», որ վերջին խաղին 1:1 հաշուով խաղաց «Քրիսթալ Փելասի» հետ եւ վաստակեցաւ 59 միաւոր՝ առաջ անցնելով նոյնքան միաւոր ունեցող «Վուլվերհեմփթոնից»:*

*«Արսենալը» 3:2 հաշուով պարտութեան մատնեց «Ուոթֆորդին» եւ 56 միաւորով գրաւեց 8-րդ տեղը:*

*Փրեմյեր լիկայէն դուրս մնացին վերջին երեք տեղերը գրաւած «Փորնմութը», «Ուոթֆորդը» եւ «Նորուիչ Սիթին»:*

## «Ոսկէ Խաղակօշիկ» Իմոբիլեն Հաւասարեցան Լեւանդովսկիին



*Հռոմի «Լացիոյի» իտալացի յարձակող Չիրօ Իմոբիլէն Իտալիայի առաջնութեան 36-րդ խաղաշարի խաղի ընթացքին (5:1) երեք կոլ նշանակեց «Վերոնայի» դէմ եւ հաւասարեցաւ Գերմանոյ ախոյեան եւ գաւաթակիր Միւնեխի «Պաւարիայի» լեհ յարձակող Ռոբերտ Լեւանդովսկիին՝ «Ոսկէ Գնդակի» համար մրցավազքի ընթացքին:*

*Երկուքն ալ 34 կոլ նշանակած են (68 միաւոր): Գերմանիոյ առաջ-նութիւնը աւարտած է, իսկ Իմոբիլէն դեռ կրնայ երկու հանդիպումներուն ալ մասնակցիլ Իտալիայի առաջնութեան:*

## 38-Ամեայ Իբրահիմովիչ Իր Մարզական Կեանքը Աւարտելու Մտադրութիւն Չունի



*Իտալական «Միլանի» 38-ամեայ շուէտացի յարձակուող Զլատան Իբրահիմովիչը թուիթերեան յայ-տարարութեամբ նշած է, որ ֆութպոլի ասպարեզէն հեռանալու մտադրութիւն չունի:*

*«Դուք կը կարծէք, որ ես սպառուած եմ եւ իմ մարզական կեանքը շուտով կ՚աւարտուի: Դուք ինծ չէք ճանաչնար: Ամբողջ կեանքիս ընթացքին ստիպուած եղած եմ պայքարիլ: Ոչ ոք չէր հաւատար ինծ, բայց ես ստիպեցի հաւատալ:*

*Ոմանք կ՚ուզեն կոտրել ինծ, բայց ինծ դարձուցին աւելի ուժեղ: Միւսները կը ցանկանային օգտագործել ինծ, բայց ինծ դարձուցին աւելի խելացի:*

*Եւ հիմա դուք կարծէ՞ք, որ ես սպառուած եմ: Բոլորիդ կրնամ ըսել միայն մէկ բան՝ ես ձեր նման չեմ: Ես Զլատան Իբրահիմովիչն եմ, եւ ես դեռ ընդամէնը նախավարժանք կ՚ընեմ»,- գրած է Իբրահիմովիչը:*

*Իտալիոյ այս առաջնութեան ընթացքին Իբրահիմովիչ մասնակցած է 16 հանդիպումներու, նշանակած 7 կոլ, կատարած է 4 կոլային փոխանցում:*

## Ֆաբիօ Կապելլօ Մեսին Դեռ Մեսի Է՝ Հանճար, «Պարսելոնան» Հենց Մեսին Է



*«Միլանի», Մատրիտի «Ռեալի», «Ռոմայի», «Եուվենտուսի», Անգլիայի եւ Ռուսաստանի հաւաքականներու նախկին գլխաւոր մարզիչ Ֆաբիօ Կապելոն հիացմունքով խօսած է «Պարսելոնայի» արժենթինցի առաջատար Լիոնել Մեսիի մասին:*

*«Մեսին դեռ Մեսի է՝ հանճար, «Պարսելոնան» հենց Մեսին է, իմ կարծիքով՝ ան է բոլոր ժամանակներու լաւագոյն ֆութպոլիստը: Ի դէպ, ես կը ցանկայի անոր տեսնել «Եուվեն-տուսում», երբ ան դեռ 17 տարեկան էր»,- Կապելոյի խօսքը կը մէջբերէ AS-ը:*

*Սպանիոյ աւարտած առաջնութ-եան ընթաքին 33-ամեայ Մեսին մասնակցեցաւ 33 հանդիպումներու՝ նշանակելով 25 կոլ, կատարեց 22 կոլային փոխանցում եւ 7-րդ անգամ ճանաչուեցաւ լաւագոյն ռմբարկու:*

## «Մանչեսթեր Սիթի» - «Ռեալ» Խաղը Պիտի Կայանայ՝ Չնայած Անգլիոյ Մէջ Յայտարարուած Քարանտինին

*Ախոյլաներու Լիկայի 1/8 եզրափակիչի «Մանչեսթեր Սիթի» - «Ռեալ» խաղը, որ նախատեսուած է Օգոստոսի 7-ին, կը կայանայ՝ չնայած քարանտինի ընթացքին, որ ձեռնարկուած են բրիտանական իշխանութիւնները: Այս մասին կը հաղորդէ The Guardian-ը:*

*Խաղը պէտք է կայանայ Մանչեսթերի մէջ՝ «Էթիհադ» մարզադաշտի վրայ:*

*Յուլիսի 25-էն սկսեալ Մեծ Բրիտանիայի մէջ կը գործէ 14-օրեայ քարանտին անոնց համար, որոնք երկիր կը ժամանեն Սպանիայէն: Այդ պատճառով «Մանչեսթեր Սիթի» - «Ռեալ» խաղը յայտնուած էր չկայանալու վտանգի տակ:*

*Առաջին խաղի ընթացքին անգլիական ակումբը Մատրիտի մէջ՝ 2-1 հաշուով յաղթած է «Ռեալին»:*

## ՄԱՀԱԶԴ



*ՊՕՂՈՍ ՄՈՒԹԱՖԵԱՆԻ*
*(Ծնեալ Լիբանան՝ 1930-ին)*

*Տիկին Ազատուհի Մութաֆեան*
*Տէր եւ Տիկին Խաչիկ եւ Նորա Մութաֆեան եւ զաւակունք*
*Տէր եւ Տիկին Սարգիս եւ Հուրիկ Մութաֆեան եւ զաւակունք*
*Տէր եւ Տիկին Ջեւ եւ Մարալ Էլուուտ եւ զաւակունք*
*Տիկին Ազնիւ Մութաֆեան եւ ընտանիք*
*Տիկին Մարի Գալթագճեան եւ ընտանիք*
*Տիկին Ջապէլ Սարաֆեան եւ ընտանիք*
*Եախինեան եւ Թոքճեան ընտանիքներ եւ համայն Գալթագճեան, Արաբսեսեան, Օղուլուքեան, Ճունտուրեան եւ Ֆէհալլի ընտանիքներ:*

*Սրտի խոր կսկիծով կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, եղբօր, հօրեղբօր, մօրեղբօր, քեռայրին եւ հարազատին՝ ՊՕՂՈՍ ՄՈՒԹԱՖԵԱՆԻ մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 21 Յուլիս 2020-ին, Պաթոն Ռուժի մէջ, Լուիզիանա:*

*Յուղարկաւորութեան եւ թաղման արարողութիւնը տեղի ունեցաւ Երկուշաբթի, 27 Յուլիս, ժամը 11:00-ին, Պաթոն Ռուժի Ս. Կարապետ Հայց. Առաք. Եկեղեցւոյ մէջ, ապա հանգուցեալին մարմինը ամփոփուեցաւ եկեղեցւոյ գերեզմանատան ընտանեկան դամբարանին մէջ:*

*Ցաւակցութիւնները կ'ընդունուին հեռաձայնով՝ 1-225-803-9069 եւ ե-նամակով՝* sarkobr@gmail.com

*Հանգուցեալի ընտանիքին փափաքով՝ կը խնդրուի փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւններ կատարել «Մասիս» Շաբաթաթերթի ֆոնտին:*

## Ոչ Եւս Է Ընկեր Պօղոս Մութաֆեան

*Խոր վիշտով իմացանք Լուիզիանա նահանգի Պաթոն Ռուժ քաղաքի Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան «Ժիրայր Մուրատ» մասնաճիւղի վարչութեան նախկին ատենապետ Ընկեր Պօղոս Մութաֆեանի մահը, որ պատահած է Յուլիս 21-ին 90 տարեկանին:*

*Հանգուցեալը նաեւ անդամ էր Լուիզիանայի Հաճնոյ Հայրենակցական Միութեան վարչութեան: Ան մեծ նուիրումով, անսակարկ կերպով փարած էր իր պատկանած Կուսակցութեան եւ ջերմ հաւատացողն էր անոր գաղափարախօսութեան ու տեսլականին: Ընկ. Մութաֆեան միշտ օգտակար եղած է շրջանի փոքրաթիւ համայնքի անմիջական կարիքներուն՝ արժանանալով բոլորի գնահատանքին:*

*ՍԴՀԿ Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինը իր ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան համայն պարագաներուն մասնաւորաբար իր այրիին՝ Տիկին Ազատուհի Մութաֆեանին:*

*Հողը թեթեւ գայ յաւերժ ճամբորդին*

***ՍԴՀԿ Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմին***

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*ՊՕՂՈՍ ՄՈՒԹԱՖԵԱՆԻ մահուան տխուր առիթով Լոս Անճելոսի Հ.Մ.Մ.ի վարչութիւնը իր խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն, մասնաւորաբար՝ իր այրիին՝ Տիկ. Ազատուհիին եւ համայն մերձաւորներուն:*

*Առ այդ փոխան ծաղկեպսակի 500 տոլար կը նուիրեն «Մասիս» շաբաթաթերթին:*

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*ՊՕՂՈՍ ՄՈՒԹԱՖԵԱՆԻ մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Վահան եւ Անժել Գազէզեան իրենց խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի համայն պարագաներուն, մասնաւորաբար իր քրոջ՝ Տիկ. Մարի Գալթագճեանին եւ համայն հարազատներուն:*

*Առ այդ 100 տոլար կը նուիրեն «Մասիս»ին:*

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*ՊՕՂՈՍ ՄՈՒԹԱՖԵԱՆԻ մահուան տխուր առիթով առիթով Տէր եւ Տիկ. Վահան եւ Անժել Գազէզեան իրենց խորազգաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի այրիին՝ Տիկ. Ազատուհիին, զաւակներուն, ընտանիքի համայն պարագաներուն եւ մերձաւորներուն:*

*Առ այդ 100 տոլար կը նուիրեն «Մասիս»ին:*

## ՄԱՀԱԶԴ



*ՎԱՐԴԱՆ ՊԷՔԱՐԵԱՆ*
*(Ծնեալ Հալէպ 1935)*

*Սրտի դառն կսկիծով կը գուժենք մեր ամուսնոյն, հօր, մեծ հօր, պապիկին եւ հարազատին՝ Վարդան Պէքարեանի մահը որ պատահեցաւ Ուրբաթ, Յուլիս, 17ին, 2020:*

*Սգակիրներ՝*
*Այրի Տիկին Երանիկ Պէքարեան*
*Տէր եւ Տիկին Գրիգոր եւ Յասմիկ Պէքարեան եւ զաւակունք*
*Տէր եւ Տիկին Էլիզա եւ Ճորճ Խաչերեան եւ զաւակունք*
*Թոռները՝ Գրիգոր, Վարդան, Սուզի, Վարդան, Մայքըլ եւ ծոռները՝ Ճորճ, Մայքըլ*

*Գերեզմանի կարգը տեղի պիտի ունենայ Հինգշաբթի Յուլիս 30ին, առաւօտեան ժամը 10:30 ին* Hollywood Hills Forest Lawn *գերեզմանատան մէջ* 6300 Forest Lawn Dr. 90068:

## ՄԱՀԱԶԴ



*ՀՈՒՐԻ ՊԷՔՄԷԶԵԱՆ-ԿԻՒՏԷՇԵԱՆ*
*( 1964-2020)*

*Սրտի դառն կսկիծով կը գուժենք մահը մեր սիրեցեալ տիկնոջ, մօր, զաւկին, քրոջ եւ հարազատին Հուրի Կիւտէշեանի մահը, որ պատահեցաւ Շաբաթ, 25 Յուլիս 2020ին առաւօտեան ժամը 10:00ին յետ կարճատեւ հիւանդութեան:*

*Սգակիրներ՝*
*Ամուսինը՝ Յարութ Կիւտէշեան եւ զաւակները Արա եւ Շահէ*
*Ծնողքը՝ Տէր եւ Տիկ. Շահէ եւ Մարիժան Պէքմէզեան*
*Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Անի Պէքմէզեան*
*Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Ռէպէքա Կիւտէշեան եւ զաւակները՝ Սարին, Փաթիլ եւ Սեւակ*
*Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Սօսի Սաղրեան եւ զաւակները*
*Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Մարի Եազուպեան եւ զաւակները*
*Տէր եւ Տիկ. Մկրտիչ եւ Սիրուն Թորոսեան եւ զաւակները*
*Տէր եւ Տիկ. Ճէք եւ Թագուհի Քասսապ եւ զաւակները*
*Տէր եւ Տիկ. Շահէ եւ Սեդա Քէշիշեան եւ զաւակները*
*Տէր եւ Տիկ. Յարութ եւ Անի Ասիլեան եւ զաւակները*
*Տէր եւ Տիկ. Նորայր եւ Անահիտ Սողոմոնեան եւ զաւակները*
*Տիկին Գարօլին Պոյաճեան եւ զաւակները*
*Տէր եւ Տիկ. Ռաֆֆի Բաշապէզեան եւ զաւակները*
*Տէր եւ Տիկ. Համբիկ Մարտիրոսեան եւ զաւակները*
*եւ համայն Կիւտէշեան, Պէքմէզեան, Ղազարեան, Դագէսեան, Կօշկարեան, Օհանեան, Մարտիրոսեան, Նոյեմեան, Պարսամեան, Պոյաճեան, Սողոմոնեան, Աշըգեան, Ջոլաքեան, Սաֆար, Հարմանտեան, Տէր Մովսէսեան եւ Բաշապէզեան ընտանիքներ եւ հարազատներ:*

*Յուղարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Շաբաթ 1 Օգոստոս 2020ին, կէսօրէ ետք ժամը 1:00ին,* Live Oak *գերեզմանատան մէջ* 200 E. Duarte Road, Monrovia, CA 91016:

*Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կը խնդրուի կատարել «Մասիս» Շաբաթաթերթի ֆոնտին:*

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*ՀՈՒՐԻ ԿԻՒՏԷՇԵԱՆԻ անժամանակ մահուան տխուր առիթով Փասատինայի Հ.Մ.Մ.ի վարչութիւնն ու անդամները եւ Տիկնանց Օժանդակ Մարմինը իրենց խորազգաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան համայն պարագաներուն եւ մերձաւորներուն:*

# 2020 Մարդահամարին մասնակցելն անհրաժեշտ է մեր համայնքին



2020 Մարդահամարը հաշվում է Միացյալ Նահանգներում ապրող ամեն մեկին: Լրացրու մարդահամարի հարցաթերթիկն այսօր և դո՛ւ կօգնես որոշելու, թե ուր պետք է հատկացվեն առողջապահության, շտապ օգնության և կրթության համար նախատեսված միլիարդավոր դոլարներն ամեն տարի՝ հաջորդ տաս տարվա ընթացքում: **Լրացրու մարդահամարն առցանց կամ ուղարկիր տվյալները փոստով: Իմացիր ավելին 2020census.gov/hy կայքից:**

Shape
your future
**START HERE >**

United States®
Census
2020

**2020CENSUS.GOV/hy**

Վճարված է ԱՄՆ-ի Մարդահամարի Բյուրոյի կողմից